Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Open Society Foundations - Armenia
Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ՏԵՂԵԿԱՆՔ

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի իրականացման վերաբերյալ

(ժամանակահատված՝ 2014-2016 թթ.)

Մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ժողովրդավարական, իրավական պետության, քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից է

Մարդու իրավունքների պաշտանության ազգային ռազմավարություն

(ՀՀ Նախագահի թիվ ՆԿ-159-Ն կարգադրություն, 2012 թ. հոկտեմբերի 29)

Վանաձոր
2017թ.

Հեղինակային խումբ՝
կազմեց՝ Սուսաննա Դավթյան
խմբագրեց՝ Արթուր Սաքունց

ՏԵՂԵԿԱՆՔ

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի իրականացման վերաբերյալ
(ժամանակահատված՝ 2014-2016 թթ.)

Բովանդակություն

Հապավումների ցանկ 5

Ընդհանուր նկարագրություն 6

ՄԻՈ միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման վերլուծություն, ըստ ոլորտների 16

I. Առողջության պահպանման և կյանքի իրավունք (6) 16

II. Մտքի, խղճի, կրոնի և դավանանքի ազատության իրավունք, խտրականության դեմ պայքար (4/3) 23

III. Կրթության իրավունք (4) 28

IV. Սոցիալական ապահովության, բավարար կենսամակարդակի և աշխատանքի իրավունք (8) 32

V. Անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք (1) 42

VI. Ազատ և արդար ընտրությունների իրավունք (1) 43

VII. Ազատ արտահայտման, հավաքների և միավորումների ազատության իրավունք (8/7) 45

VIII. Խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք (13) 56

IX. Երեխայի իրավունքներ (15) 73

X. Տարեց մարդկանց իրավունքներ (4) 90

XI. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ (13) 93

XII. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքներ (2) 110

XIII. Փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքներ (11) 112

XIV. Մշակութային իրավունքներ (5) 122

XV. Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք (5/4) 128

XVI. Տնտեսական իրավունքներ, սեփականության իրավունք (4) 133

XVII. Արդար դատաքննության իրավունք (3) 137

XVIII. Զինծառայողների և զորակոչիկների իրավունքներ (4) 141
XIX. Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք (1) 146
XX. Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում (7) ... 147
Ամփոփում 155
Հավելվածներ 157
Հավելված 1 157
Հավելված 2 158
Հավելված 3 160

Հապավումների ցանկ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԻՊԱՌՄԾ	Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմվարության միջոցառումների ծրագիր
ԱԺ	Ազգային Ժողով
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԱՍԻՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՌՆ	Առողջապահության նախարարություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԱԽ	Ազգային անվտանգության խորհուրդ
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԱ	Արդարադատության ակադեմիա
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն[1]
ՓՊ	Փաստաբանների պալատ
ՓԴ	Փաստաբանական դպրոց
ՔՊԿ	Քաղաքաշինության պետական կոմիտե[2]
ՏԶՆ	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն[3]
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն

[1] ՀՀ կառավարության 2016 թ. մարտի 3-ի 258-Ն որոշմամբ՝ «ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմակերպելու, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ի 1527-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացմաննախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմակերպել՝ «ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկից առանձնացնելով «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104325

[2] ՀՀ կառավարության 2016 թ. հոկտեմբերի 13-ի 1111-Ն որոշման համաձայն՝ «ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմավորման ձևով վերակազմակերպվել է «ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի:
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110191

[3] ՀՀ կառավարության 2016 թ. դեկտեմբերի 22-ի 1389-Ն որոշման համաձայն՝ ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի «ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 6-ի N 197 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1229-Ն որոշման վերնագրում, ամբողջ տեքստում, NN 1 և 3 հավելվածներում «էկոնոմիկայի» բառը փոխարինել «տնտեսական զարգացման և ներդրումների» բառերով.
http://www.arlis.am/documentview.aspx?docid=110733

Ընդհանուր նկարագրություն

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը մշտապես կարևորել է Հայաստանի Հանրապետության կողմից մարդու իրավունքների բնագավառում ստանձնած պարտավորությունների պատշաճ և արդյունավետ կատարումը: Այդ նպատակով կազմակերպությունը մշտադիտարկում է միջազգային պայմանագրերով, կոնվենցիաներով, դաշնագրերով և ՀՀ Սահմանադրությամբ սահմանված մարդու իրավունքների ապահովման, դրանց իրականացման ապահովման ուղղությամբ իշխանությունների գործողությունները, ծրագրերը, ազգային ինստիտուտների գործունեությունը, ներկայացնում է մշտադիտարկման արդյունքում բացահայտված խնդիրները, բացերը և դրանց լուծման ուղղությամբ ներկայացնում առաջարկություններ որոշում կայացնող մարմիններին:

Մարդու իրավունքներին վերաբերող հիմնարար քաղաքական փաստաթղթերից է ՀՀ-ում մինչև 2015թ. գործած Եվրոպայի միության տեղեկատվական կենտրոնի աջակցությամբ մշակված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների 2014-2016 թթ ծրագիրը, որի իրականացման ժամկետն արդեն ավարտվել է, սակայն ծրագրի իրականացման որևէ գնահատում չի կատարվել:

Ավելին՝ ՀՀ Կառավարությունը 2017թ. մայիսի 4-ին արդեն ընդունել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող նոր Գործողությունների 2017-2019թթ ծրագիրը[4], որի նախապատրաստման աշխատանքներին ակտիվ մասնակցել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակը այլ գործընկերների հետ միասին:

Գտնում ենք, որ առանց նախորդ Միջոցառումների ծրագրի գնահատման, նոր Գործողությունների ծրագրի ընդունումը ոչ միայն չի ապահովում Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության տրամաբանական շարունակականությունը, այլև չի կարող հանդիսանալ արդյունավետ թե՛ ինքնին Գործողությունների ծրագրի իրատեսական լինելու, թե՛ մարդու իրավունքների բնագավառում առկա մարտահրավերներին պատասխաններ գտնելու տեսանկյունից:

Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի լրացնելու այդ բացը, և շահագրգիռ ենք համապատասխան պետական մարմինների հետ քննարկելու արդեն նախկին Միջոցառումների ծրագրի կատարման վերաբերյալ մեր կողմից ներկայացվող գնահատականներն ու մտահոգությունները՝ ապահովելու համար նոր Գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացումը:

[4] Տե՛ս ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշումը http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113223

Ընդհանուր տեղեկատվություն Միջոցառումների ծրագրի վերաբերյալ

2014 թվականի փետրվարի 27-ին ՀՀ կառավարության թիվ 303-Ն որոշմամբ հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը:[5] Միջոցառումների ծրագրի մշակումը բխում է 2012 թ. հոկտեմբերի 29-ի ՀՀ նախագահի կարգադրությամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից:[6]

ՀՀ Կառավարության կողմից հաստատված միջոցառումների ծրագիրը բաղկացած է 20 ոլորտներում իրականացվող 119 գործողություններից:[7] Ծրագրով նախատեսված գործողությունների կատարման ժամանակացույցը սահմանված է ըստ եռամսյակների:

Պատասխանատու մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա կազմակերպության կողմից իրականացվել է 2014 թ. և 2015 թ. իրականացման ենթակա միջոցառումների կատարման ընթացքի վերլուծություն և 2015 թ. հուլիսին, ինչպես նաև 2016 թ. սեպտեմբերին հրապարակվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկանք:[8]

Մարդու իրավունքների ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի համաձայն՝ պատասխանատու հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին է հանձնարարվել նաև յուրաքանչյուր կիսամյակ ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ, ՀՀ կառավարության աշխատակազմ և ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

2015 թ. հունվարի 19-ին և 2016 թ. փետրվարի 25-ին Կազմակերպության կողմից ՀՀ ազգային անվտանգության խորհրդին ուղղված համապատասխանաբար 2014-15 թթ իրականացման ենթակա աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցումներին ի պատասխան ՀՀ ԱԱԽ-ն հայտնել է, որ Ծրագրի շրջանակներում կատարած աշխատանքների վերաբերյալ ԱԱԽ աշխատակազմ են ներկայացվել ՀՀ ԱԳՆ, ՀՀ ԱՍԻՆ ՀՀ ԱՌՆ, ՀՀ ԱՆ, ՀՀ ՊՆ և ՀՀ ԿԱ միջուկային կարգավորման պետական կոմիտեի հաշվետվությունները: Պետք է նշել, որ ՀՀ ԿԱ միջուկային կարգավորման պետական կոմիտեն Ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման պատասխանատու

---

[5] Տե՛ս ՀՀ կառավարության 2014 թ. փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշումը http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97193

[6] Տե՛ս ՀՀ նախագահի 2012 թ. հոկտեմբերի 29-ի կարգադրությունը http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=79027

[7] Տե՛ս Հավելված 1:

[8] Տե՛ս ՄԻՊԱՌՄՈ 2014 թ. իրականացման ընթացքի մասին Տեղեկանք http://hcav.am/wp-content/uploads/2015/07/%D5%84%D4%BB%D5%8A%D4%B1%D5%8C%D5%84%D4%BE_%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84_%D5%80%D5%94%D4%B1%D5%8E-1.pdf

Տե՛ս ՄԻՊԱՌՄՈ 2015 թ. իրականացման ընթացքի մասին Տեղեկանք http://hcav.am/wp-content/uploads/2016/09/%D5%84%D4%BB%D5%8A%D4%B1%D5%8C%D5%84%D4%BE-%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D5%80%D5%94%D4%B1%D5%8E_2.pdf

մարմին չի հանդիսանում: Միևնույն ժամանակ, ՀՀ ԱԱԽ-ն չի տրամադրել նշված հաշվետվությունները և առաջարկել է դիմել տվյալ հաշվետվությունները ներկայացրած մարմիններին: Ինչ վերաբերում է Ծրագրով սահմանված 2016թ իրականացման ենթակա աշխատանքների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից ԱԱԽ ներկայացված հաշվետվություններին, ապա ի պատասխան Կազմակերպության 2017 թ. փետրվարի 20-ի հարցադրումներին, ՀՀ Նախագահի աշխատակազմի Հասարակայնության և տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունից տեղեկացվել է, որ ՀՀ Նախագահի 2016 թ. օգոստոսի 10-ի 195-Ն կարգադրությամբ ԱԱԽ աշխատակազմը լուծարվել է և Ծրագրով սահմանված գործողությունների վերաբերյալ 2016 թ. առաջին կիսամյակի և նախորդ տարիների տեղեկատվությունը հանձնվել է ՀՀ պետական արխիվ: Միևնույն ժամանակ, Կազմակերպությանն է տրամադրվել 2016թ. երկրորդ կիսամյակի հաշվետվությունները:

Պետք է նշել, որ ի պատասխան Կազմակերպության հարցադրումների ՀՀ կառավարության աշխատակազմի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից սահմանված ժամկետներում տրամադրվել են կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների օրինակները:

ՀՀ Նախագահի 2013թ. փետրվարի 7-ի թիվ ՆԿ-16-Ն կարգադրության համաձայն ստեղծվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության դրույթների և ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման հարցերով միջգերատեսչական հանձնաժողով, ինչպես նաև հաստատվել է այդ հանձնաժողովի կազմը: Հանձնաժողովի խնդիրներն են՝ ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքների ամփոփումը և գնահատումը, դրանց հիման վրա վերլուծական բնույթի տեղեկանքների կազմումը: [9] Արձանագրենք, որ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ որևէ այլ տեղեկատվություն չի հրապարակվել, ուստի կարող ենք փաստել, որ Ծրագրի կատարման նկատմամբ չի իրականացվել պատշաճ վերահսկողություն:

Սույն Տեղեկանքով ներկայացվում է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի 2014-2016 թթ. ընթացքում նախատեսված գործողությունների իրականացման ուսումնասիրության արդյունքները:

2014-2016 թթ. ընկած ժամանակահատվածում Ծրագրով ի սկզբանե նախատեսված էր իրականացնել ընդհանուր թվով 119 գործողություններ, որոնք, սակայն, Ծրագրի ավարտին նվազեցին մինչև 116՝ Ծրագրով սահմանված երեք գործողություն՝ 9-րդ, 28-րդ, 97-րդ կետերը ուժը կորցրած ճանաչվեցին: [10]

[9] Տե՛ս ՀՀ Նախագահի 2013թ. փետրվարի 7-ի թիվ ՆԿ-16-Ն կարգադրությունը http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81355

[10] Ծրագրի 9-րդ, 28-րդ, 97-րդ կետերը ուժը կորցրած են ճանաչվել:

Ծրագրով սահմանված գործողությունները ներառում են հետևյալ իրավունքի ոլորտները. [11]

1. Առողջության պահպանման և կյանքի իրավունք (6)
2. Մտքի, խղճի, կրոնի և դավանանքի ազատության իրավունք, խտրականության դեմ պայքար (4/3[12])
3. Կրթության իրավունք (4)
4. Սոցիալական ապահովության, բավարար կենսամակարդակի և աշխատանքի իրավունք (8)
5. Անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք (1)
6. Ազատ և արդար ընտրությունների իրավունք (1)
7. Ազատ արտահայտման, հավաքների և միավորումների ազատության իրավունք (8/7[13])
8. Խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք (13)
9. Երեխայի իրավունքներ (15)
10. Տարեց մարդկանց իրավունքներ (4)
11. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ (13)
12. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք (2)
13. Փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքներ (11)
14. Մշակութային իրավունքներ (5)
15. Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք (5/4[14])
16. Տնտեսական իրավունքներ, սեփականության իրավունք (4)
17. Արդար դատաքննության իրավունք (3)
18. Զինծառայողների և զորակոչիկների իրավունքներ (4)
19. Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք (1)
20. Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում (7)

---

[11] Փակագծում նշվում է տվյալ ոլորտում իրականացման ենթակա գործողությունների թիվը:

[12] ՀՀ կառավարության 2016 թ. օգոստոսի 18-ի 843-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 9-րդ կետը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107890

[13] ՀՀ կառավարության 2016 թ. դեկտեմբերի 29-ի 1368-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=110570

[14] ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 20-ի 1071-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 97-րդ կետը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=108960

Ուսումնասիրվող ժամանակահատվածում իրականացման ենթակա գործողություններից 15-ը կրել են պարբերական բնույթ, այսինքն այդ գործողությունները պետք է իրականացվեին ՄԻՌ բխող միջոցառումների ծրագրի կատարման ողջ ընթացքում:[15]

Գործողությունների իրականացման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և իրականացման գնահատման մեթոդոլոգիա

Միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով ուսումնասիրվել են պաշտոնական էլեկտրոնային աղբյուրները, ինչպես նաև տեղեկատվության հարցումներ են ուղարկվել միջոցառումների ծրագրով պատասխանատու ճանաչված պետական մարմիններին:

Տեղեկատվության հարցումները 2014-2016թթ ընթացքում երկուական փուլերով (առաջին-երկրորդ եռամսյակներ, երրորդ-չորրորդ եռամսյակներ) ուղարկվել են Ծրագրով սահմանված պատասխանատու 39 մարմինների.

1. ՀՀ ազգային անվտանգության խորհուրդ
2. ՀՀ կառավարություն

ՀՀ նախարարություններ

3. ՀՀ արդարադատության նախարարություն
4. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն[16]
5. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն
6. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն[17]
7. ՀՀ արտաքին գործերի նախարարություն
8. ՀՀ ֆինանսների նախարարություն
9. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն[18]

---

[15] Ծրագրի 14-րդ, 22-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ, 32-րդ, 42-րդ, 43-րդ, 54-56-րդ, 60-րդ, 66-րդ, 75-րդ, 105-րդ գործողությունները

[16] ՀՀ կառավարության 2016 թ. մարտի 3-ի 258-Ն որոշմամբ՝ «ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմակերպելու, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ի 1527-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացմաննախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմակերպել՝ «ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկից առանձնացնելով «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104325

[17] Տե՛ս 14 հղումը

[18] ՀՀ կառավարության 2016 թ. դեկտեմբերի 22-ի 1389-Ն որոշման համաձայն՝ ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի «ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի

10. ՀՀ բնապահպանության նախարարություն
11. ՀՀ առողջապահության նախարարություն
12. ՀՀ պաշտպանության նախարարություն
13. ՀՀ կրթության և գիտության նախարարություն
14. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
15. ՀՀ մշակույթի նախարարություն

<u>ՀՀ ԿԱ մարմիններ</u>

16. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն
17. ՀՀ ԿԱ ոստիկանություն
18. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
19. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե[19]

<u>Տեղական ինքնակառավարման մարմիններ</u>

20. Երևանի քաղաքապետարան
21. Աշտարակի քաղաքապետարան
22. Արմավիրի քաղաքապետարան
23. Վանաձորի քաղաքապետարան
24. Գյումրիի քաղաքապետարան
25. Եղեգնաձորի քաղաքապետարան
26. Արտաշատի քաղաքապետարան
27. Գավառի քաղաքապետարան
28. Հրազդանի քաղաքապետարան
29. Կապանի քաղաքապետարան
30. Իջևանի քաղաքապետարան

31. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
32. ՀՀ դատական դեպարտամենտ
33. ՀՀ քննչական կոմիտե
34. ՀՀ գլխավոր դատախազություն
35. ՀՀ կենտրոնական բանկ
36. ՀՀ փաստաբանական դպրոց
37. ՀՀ արդարադատության ակադեմիա

6-ի N 197 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1229-Ն որոշման վերնագրում, ամբողջ տեքստում, NN 1 և 3 հավելվածներում «էկոնոմիկայի» բառը փոխարինել «տնտեսական զարգացման և ներդրումների» բառերով. http://www.arlis.am/documentview.aspx?docid=110733

[19] ՀՀ կառավարության 2016 թ. հոկտեմբերի 13-ի 1111-Ն որոշման համաձայն՝ «ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմավորման ձևով վերակազմակերպվել է «ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի: http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110191

38. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
39. ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով

Այսպիսով, սույն Տեղեկանքի ուսումնասիրության առարկան է հանդիսանում ՄԻՌ բխող միջոցառումների ծրագրով նախատեսված 119 գործողությունների կատարման ընթացքը (այդ թվում այն գործողությունները, որոնք իրականացման ընթացքում ուժը կորցրած են ճանաչվել):

Գործողությունների իրականացման մակարդակը գնահատվել է ըստ հետևյալ սանդղակի.

- ամբողջությամբ իրականցված (5)
- մեծամասամբ իրականացված (4)
- կիսով չափ իրականացված (3)
- մեծամասամբ չիրականացված (2)
- չիրականացված (1)
- գործողություններ, որոնց կատարումը չի բխում ՄԻ պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից, (ներառում է այն գործողությունները, որոնք իրականացվել են մինչ միջոցառումների ծրագրի հաստատումը, կամ այն գործողությունները, որոնց իրականացումը բխում է այլ իրավական ակտերից):

Ուշագրավ է այն, որ ընդհանուր առմամբ Ծրագիրը յոթ անգամ ենթարկվել է փոփոխությունների, որոնց արդյունքում Ծրագրով սահմնված շուրջ 21 գործողության կատարման ժամկետը երկարաձգվել է, 3 գործողություն հանվել է միջոցառումների ցանկից (ուժը կորցրած է ճանաչվել), 5 գործողությունում լրացվել/փոխարինվել է պատասխանատու մարմինը (Տե՛ս Հավելված 1)։ Ծրագրով սահմանված գործողությունների վերաբերյալ փոփոխությունների պատճառաբանությունը ներկայացված է յուրաքանչյուր գործողության վերլուծության մեջ։

Գործողությունների կատարման գնահատման սանդղակը

Գործողությունների կատարումը գնահատվել է ըստ Միջոցառումների ծրագրով նախատեսված ակնկալվող արդյունքի: Սրանով է պայմանավորած այն հանգամանքը, որ թեև կարևորվել է մի շարք գործողությունների կատարման ուղղությամբ իրականացված լայնածավալ միջոցառումները, սակայն դրանք գնահատվել են չիրականացված, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ միջոցառումները չեն հանգեցրել գործողության համար սահմանված ակնկալվող արդյունքին: Այն գործողությունները, որոնք նախատեսում են դասընթացների/սեմինարների, վերապատրաստումների և/կամ այլ իրազեկման

միջոցառումների իրականացում, դիտարկվել են նաև ըստ պատասխանատու մարմինների կողմից դրանց ազդեցության գնահատման տեսանկյունից։

Ստացված և ձեռք բերված տեղեկատվության ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝

- ամբողջությամբ իրականացվել են **43** գործողություն (36%)
- մեծամասամբ իրականացվել են **6** գործողություն (5%)
- կիսով չափ իրականացվել են **19** գործողություն (16%)
- մեծամասամբ չեն իրականացվել **18** գործողություն (15%)
- չեն իրականացվել **26** գործողություն (22%)
- **7** գործողության կատարումը չի բխում ՄԻ ռազմավարությունից բխող

միջոցառումների ծրագրից (6%)։

Ամենից շատ գործողությունների կատարող է հանդես եկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ 43 միջոցառում, որից 26-ում հանդես է եկել որպես առաջին կատարող, 17-ում՝ որպես համակատարող։

Հաջորդը ՀՀ արդարադատության նախարարությունն է՝ 28 միջոցառում, որից 24-ում՝ որպես առաջին կատարող, 4-ում՝ համակատարող։ ՀՀ ոստիկանությունը ներգրավված է եղել 22 միջոցառումներում, որից 12-ում՝ որպես առաջին կատարող, 9-ում՝ համակատարող։

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պատասխանատու մարմին է եղել թվով 17 միջոցառումների կատարման համար, որից 13-ում հանդիսացել է առաջին կատարող, իսկ մնացյալ 4-ում՝ համակատարող։

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը որպես համաձայնությամբ կատարող մարմին հանդիսացել 10 միջոցառումների համար։

ՀՀ փաստաբանական դպրոցը և արդարադատության ակադեմիան համաձայնության պայմանով պատասխանատու մարմիններ են համապատասխանաբար երեքական միջոցառումների իրականացման համար։

Ամենաքիչ գործողությունների կատարման համար պատասխանատու մարմիններ են եղել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ 1 միջոցառում, որպես առաջին կատարող։ ՀՀ դատական դեպարտամենտը, ՀՀ գլխավոր դատախազությունը, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը համաձայնության պայմանով պատասխանատու մարմիններ են համապատասխանաբար մեկական միջոցառման համար։ (Տե՛ս Հավելված 3)

Եթե փորձենք առանձնացնել գործողությունների կատարողականը ըստ պատասխանատու մարմինների, ապա կստանանք հետևյալ պատկերը։

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխատու է եղել 43 գործողության կատարման համար, որից 13-ը գնահատվել է ամբողջությամբ իրականացված, 1-ը՝ մեծամասամբ իրականացված, 11-ը՝ կիսով չափ իրականացված, թվով 7 գործողություն գնահատվել է մեծամասամբ չիրականացված, իսկ 8-ը՝ չիրականացված։ Ուշագրավ է, որ ԱՍՀՆ պատասխանատվության ներքո գտնվող 3 գործողություն որակվել է որպես գործողություններ, որոնց կատարումը չի բխում ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից։

ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28 գործողություններից ամբողջությամբ իրականացված են գնահատվել թվով 13 գործողություն, ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից 5 գործողություն գնահատվել է կիսով չափ իրականացված, 3-ը՝ մեծամասմաբ չիրականացված, իսկ 6 գործողություն գնահատվել է որպես չիրականացված և ևս մեկ գործողության կատարումը չի բխում ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից։

Գործողությունների հաջորդ մեծ խումբը բաժին է ընկնում ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանությանը՝ 22 գործողություն, որից 8-ը գնահատվել է ամբողջությամբ իրականացված, 7 գործողություն՝ կիսով չափ իրականացված, 5-ը՝ մեծամասամբ չիրականացված և ևս 1 գործողություն՝ չիրականացված։

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացման ենթակա 17 գործողությունից 2-ը գնահատվել է ամբողջությամբ իրականացված, 3-ական գործողություն գնահատվել է մեծամասամբ իրականացված, կիսով չափ իրականացված և մեծամասամբ չիրականացված և 5 գործողություն՝ չիրականացված։

ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացման ենթակա թվով 14 գործողությունից 5-ը գնահատվել է ամբողջությամբ իրականացված, 4-ը՝ կիսով չափ իրականացված, 2 գործողություն՝ չիրականացված և ևս 2 գործողության կատարումը չի բխում ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից։

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացման ենթակա 10 գործողություններից ամբողջությամբ իրականացված է գտահատվել 4-ը, 2 գործողություն գնահատվել է մեծամասամբ իրականացված, կիսով չափ իրականացված և մեծամասամբ չիրականացված է գնահատվել մեկական գործողություն և ևս 2 գործողություն գնահատվել է չիրականացված։

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատասխանատու է եղել 9 գործողության կատարման համար, որից 3-ը գնահատվել է ամբողջությամբ իրականացված, 1 գործողություն՝ մեծամասամբ իրականացված, 2 գործողություն գնահատվել է մեծամասամբ չիրականացված և ևս 3 գործողություն՝ չիրականացված:

Ամենից շատ չիրականացված գործողություններ են արձանագրվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի՝ 8 (43-ից), ՀՀ արդարադատության՝ 6 (28-ից) և ՀՀ կրթության և գիտության 5 (17-ից) նախարարությունների կողմից: (Տե՛ս Գծապատկեր 1, Հավելված 3):

Գծապատկեր 1
ՄԻՈ-ի բխող գործողությունների քանակական պատկերը ըստ կատարող մարմինների



ՄԻՈ միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման վերլուծություն, ըստ ոլորտների

I. Առողջության պահպանման և կյանքի իրավունք (6)

1. Գործողություն՝ (1 [20]) Առավել խորացնել առողջության ապահովագրության մեխանիզմների լայն օգտագործումը
Ակնկալվող արդյունքը՝ Համապատասխան առաջարկությունը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ նշված գործողության իրականացման նպատակով 2014 թ. ընթացքում[21] միջոցներ են ձեռնարկվել միայն սոցիալական փաթեթների շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման կարգի սահմանման և կազմակերպման ուղղությամբ:

Այսպես, հաշվի առնելով, որ սոցփաթեթի շահառուների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործառույթը 2014թ-ից հանձնարարվել է ՀՀ առողջապահության նախարարությանը, որի կողմից 2014 թ մշակվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը: «Սոցիալական փաթեթի շահառուների առողջապահական փաթեթի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման կարգը, սոցիալական փաթեթի շահառուի պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության փաթեթը, ինչպես նաև առողջապահական փաթեթի հասանելիության նպատակով էլեկտրոնային շտեմարանի ձևավորման ու վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 375-Ն որոշումը ընդունվել է 2014 թ. մարտի 27-ին, ուժի մեջ է մտել 2014 թ. ապրիլի 17-ին: [22] ՀՀ առողջապահության նախարարության կողմից նաև կազմակերպական աշխատանքներ են իրականացվել, և թվով 96 հիվանդանոցային հաստատություններում տեղադրվել է պետական պատվերի տեղադրման ուղղությամբ:

Թե՛ գործողությունը, թե՛ գործողության իրականացումից ակնկալվող արդյունքը ձևակերպված է ընդհանրական և ոչ չափելի, համապատասխանաբար դժվար է գնահատել նաև դրա իրականացման արդյունքը: Միևնույն ժամանակ, ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրած տեղեկատվությունից կարելի է արձանագրել, որ

[20] Փակագծում նշված է գործողության համարը ըստ ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի:

[21] ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկատվություն է ներկայացրել նաև 2013 թ. իրականացված միջոցառումների մասին:

[22] Տե՛ս ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի թիվ 375-N որոշումը http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94971

անհրաժեշտ միջոցներ (իրազեկման, կրթական բնույթի) չեն ձեռնարկվել հանրության լայն շրջաններում առողջության ապահովագրության մեխանիզմների հանրային իրազեկման և դրանց կիրառման ուղղությամբ: Աշխատանքները տարվել են միայն սոցփաթեթների շրջանակներում բուժօգնության տրամադրման կարգավորման ուղղությամբ:

Այսպիսով, սույն գործողությունը կարելի է գնահատել չիրականացված:

2. Գործողություն՝ (2) Աշխատանքի անվտանգության և աշխատավայրերում աշխատողների առողջության պահպանման ազգային ծրագրի մշակում
Ակնկալվող արդյունքը՝ Ազգային ծրագրի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ մշակվել և 2015թ. մարտի 31-ին ՀՀ կառավարություն է ներկայացվել «Աշխատանքի անվտանգության և աշխատավայրերում աշխատողների առողջության պահպանման 2015-2018թթ ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախարարությունը, սակայն, նշված նախագիծը Կազմակերպությանը չի տրամադրել, պատճառաբանելով, որ այն լրամշակման փուլում է:

Գործողությունը իրենից ենթադրում է ծրագրի մշակում, իսկ արդյունքը՝ ՀՀ կառավարություն ներկայացնելը: Նախագիծը չի ներկայացվել հանրային քննարկման, ուստի հնարավոր չէ ծրագիրը գնահատել բովանդակային տեսանկյունից: Միևնույն ժամանակ, ելնելով այն հանգամից, որ Նախագիծը գտնվում է լրամշակման փուլում, գործողությունը կարելի է համարել կիսով չափ իրականացված: ՀՀ ԱՍհՆ-ը, որը հանդիսանում է գործողության համակատարող, ապա որևէ տեղեկատվություն չի տրամադրել:

Այսպիսով, սույն գործողությունը գնահատվել է կիսով չափ իրականացված:

3. **Գործողություն՝ (3)** ՀՀ քրեակատարողական հիմնարկներն ապահովել բարձր որակավորում ունեցող բժշկական անձնակազմով
Ակնկալվող արդյունքը՝ Քրեակատարողական հիմնարկներում բարձր որակավորում ունեցող բժշկական անձնակազմի թվի ավելացում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից առաջարկվել է քրեակատարողական հիմնարկների բժշկական հաստիքները դարձնել հատուկ քաղաքացիական ծառայողի հաստիքներ, ինչի արդյունքում հնարավոր կլինի քրեակատարողական ծառայության աշխատանքի ընդունել 30 տարին լրացած բժիշկ մասնագետների, նրանց հնարավորություն կնձեռնվի կատարել վճարովի բուժական աշխատանք և կբարձրացվի կենսաթոշակի անցնելու սահմանային տարիքը: Նշված խնդրի լուծման նպատակով՝ ՀՀ ԱՆ նախարարի 2015թ. հոկտեմբերի 30-ի թիվ 543-Ա հրամանով փոփոխություններ է կատարվել ՀՀ ԱՆ 2011թ. օգոստոսի 2-ի թիվ 118-Ա հրամանում և 544-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերը: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների թիվը մեկականով ավելացել է «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Սևան», «Կոշ», «Հրազդան» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներում: Բացի այդ, ԵԽ կողմից մեկնարկել է «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագիրը, որի նպատակն է ամրապնդել մարդու իրավունքները՝ ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բուժծառայության (այդ թվում՝ հոգեկան առողջության հետ կապված խնամքի) կարիք ունեցողների տրամադրվող ծառայության բարելավման, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված շարունակական դասընթացներ մշակման և անցկացման միջոցով:

ՀՀ արդարադատության նախարարի 2015 թ. հոկտեմբերի 30-ի 543-Ա հրամանով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման ստորաբաժանումներում սահմանվել են քաղաքացիական հատուկ ծառայողի 7 հաստիքային միավոր: 2015 թ. հուլիսի 1-ից դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում համալրվել է քրեակատարողական հիմնարկների բժիշկական սպասարկման ստորաբաժանումների 19 հաստիքային միավոր: Միաժամանակ, 2015 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ՀՀ բոլոր քրեակատարողական հիմնարկներում բժշկական սպասարկման ստորաբաժանումների հաստիքային միավորները ավելացել են 14-ով («Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, «Նուբարաշեն» ՔԿՀ, «Վարդաշեն», «Արմավիր» ՔԿՀ):

Այսպիսով, տեղեկատվություն է տրամադրվել միայն ավելացված հաստիքների վերաբերյալ, սակայն հայնտի չէ, համալրվել են այդ հաստիքները, թե ոչ: ՀՀ արդարադատության նախարարությունը նշում է, որ հաստիքների համալրման նպատակով հայտարարությունն են տարածվել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կայքէջում:

Ելնելով վերոշարադրյալից, սույն գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված:

4. Գործողություն՝ (4) Օրենսդրորեն ամրագրել «բժշկական սխալ» եզրույթը՝ հաշվի առնելով առողջապահության ոլորտում միջազգային չափորոշիչները
Ակնկալվող արդյունքը՝ Համապատասխան իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Ի կատարումն սույն գործողության ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է, որ մշակել և շրջանառության մեջ է դրվել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որում սահմանվել է բժշկական սխալ հասկացությունը: Միաժամանակ փոփոխություն է կատարվել նաև ՀՀ քրեական օրենսգրքում և նախագծերը շրջանառվել են միաժամանակ:

Հարկ է նշել, որ հարցմամբ պահանջվել էր տրամադրել իրավական ակտի նախագիծը, որը Կազմակերպությանը չի տրամադրվել, ուստի հնարավոր չէ պարզել «բժշկական սխալ» հասկացության էությունը և բովանդակությունը: Բացի այդ, գործողության կատարման արդյունքը նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելն է, որի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Այսպիսով, սույն գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված:

5. Գործողություն՝ (5) Օրենսդրորեն կարգավորել պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելումը և իրականացնել տվյալ թեմայով ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ
Ակնկալվող արդյունքը՝ Համապատասխան իրավական կարգավորումներ պարունակող իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Սույն գործողության իրականացման ուղղությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը մշակել է «Մարդու վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից 2015 թ. հուլիսի 2-ին հաստատվելուց հետո ԱԺ կողմից 2016 թ. հունիսի 29-ին ընդունվել է: Նախագծով ամբողջովին նոր խմբագրությամբ է շարադրվել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը: ՀՀ առողջապահության նախարարությունը նաև հայտնել է, որ ձեռնարկվել են համալիր միջոցառումներ՝ ուղղված սեռով պայմանավորված հղիության ընդհատման վտանգավոր հետևանքների վերաբերյալ բնակչության իրավագիտակցության բարձրացմանը, համակարգային կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը, ստեղծվել է «Տեղական մասնակցության և ոչխտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանց (Փոխցանց), վերապատրաստվել են Փոխցանցի անդամները, մշակվել է քարոզչության տեղայնացված գործիքները, համայնքներում ստեղծվել են 25 ակտիվ խմբեր և իրականացվել են վերապատրաստումներ, երեխայի սեռի կանխակալ ընտրության և պտղի սեռով պայամանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման նպատակով կազմակերպվել են 50 հանդիպումներ համայնքների բնակիչների (1250 մասնակից) հետ, պատրաստվել և հեռարձակվել են սոցիալական գովազդներ:

Այսպիսով սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

6. Գործողություն՝ (6) Հստակեցնել պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչները
Ակնկալվող արդյունքը՝ Իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1636-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը 2012 թ. օգոստոսի 31-ին ներկայացվել են ՀՀ կառավարություն: ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից 2015 թ. փետրվարի 18-ի ներկայացվել է առաջարկություն: Մասնավորապես, նկատի ունենալով, որ պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչները հստակեցնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բժշկության տարբեր ճյուղերի բարձրակարգ մասնագետների կարծիքները, առաջարկվել է ՀՀ ԱՆ-ում կազմակերպել քննարկում՝ քրեակատարողական ծառայության և առողջապահության նախարարության համապատասխան բժիշկ մասնագետների մասնակցությամբ: Քննարկումներն ընթացքի մեջ են:

Պետք է նշել, որ ներկայացվող որոշումների նախագծով փոփոխություններ են կատարվել ինչպես Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու, այնպես էլ՝ Միջգերատեսչական բժշկական հանձնաժողով ստեղծելու Կարգում: Այսպես, վերոնշյալ որոշումների նախագծերով առաջարկվել է հստակեցնել ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատման համակարգի իրավասու մարմինները, նրանց լիազորությունները և խնդիրների շրջանակը: Առաջարկվող կարգավորումները անշուշտ ողջունելի են, սակայն ծրագրային գործողության կատարման արդյունքում պետք է հստակեցվեր պատժի հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկը: Այս նպատակով որոշման նախագծով «ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման 2-րդ հավելվածում կատարվել են լրացումներ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների՝ շնչառության օրգանների հիվանդությունների և այլ հիվանդությունների ցանկում:

Այնուամենայնիվ իրականացված փոփոխություններով ոլորտում առկա խնդիրները չեն վերացել: Այսպես, վերոնշյալ որոշման հավելված 2-ում նախատեսված հիվանդությունների

ցանկով սահմանված չեն այնպիսի հիվանդություններ, որոնք հանդիպում են դատապարտյալների մոտ և նրանց կյանքին իրական վտանգ են ներկայացնում, իսկ այդ հիվանդությունների բացակայությունը զրկում է այն կրող դատապարտյալի նկատմամբ պատժից ազատվելու հնարավորությունից (օրինակ, թմրանյութերի օգտագործման արդյունքում օրգանիզմի քայքայման հետ կապված հիվանդությունները) [23] : Նշված խնդիրների մասին բարձրաձայնել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը «2014թ ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավուքների և հիմանարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցում» [24] : Կարծում ենք, որ անհրաժեշտ է իրականացնել պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների հիմնովին և ամբողջական մասնագիտական վերանայում: Միևնույն ժամանակ, կարևորելով սույն գործողության իրականացման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ պետք է փաստել, որ սույն գործողության կատարման ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են շատ ավելի վաղ՝ մինչև Ծրագրի հաստատումը, քանի որ արդեն իսկ մշակված առաջարկությունները Կառավարություն են ներկայացվել դեռևս 2012թ.:

Այսպիսով սույն գործողությունը կարելի է գնահատել որպես գործողություն, որի կատարումը չի բխում ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից:

Այսպիսով, Առողջության պահպանման և կյանքի իրավունքի ոլորտում ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել վեց գործողություն, որից մեկը գնահատվել է ամբողջությամբ իրականացված, երեքը՝ կիսով չափ իրականացված, մեկ գործողություն՝ չիրականացվածն ևս մեկի կատարումը չի բխում ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից:

[23] Տե՛ս ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի «Պատժի կրման հետ անհամատեղելի ծանր հիվանդությունների հիմքով պատժից ազատման համակարգը ՀՀ-ում» հետազոտությունը http://www.pmg.am/images/patji_krman_het_anhamatexeli_hivandutyunner.pdf

[24] Տե՛ս «2014թ ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավուքների և հիմանարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը»

II. Մտքի, խղճի, կրոնի և դավանանքի ազատության իրավունք, խտրականության դեմ պայքար (4/3[25])

1. Գործողություն՝ (7) Հանրակրթական դպրոցներում տարբեր կրոնների և դավանանքների նկատմամբ հանդուրժողականությանն ուղղված քայլերի ձեռնարկում
Ակնկալվող արդյունքը՝ հայերենով Թոլեդոյի ուղղորդող սկզբունքների՝ առանձին գրկույքով տպագրում, հանրակրթական դպրոցներում տարածում, հատկապես, «Հայ եկեղեցու պատմություն» դասավանդողող ուսուցիչների և կրթության ոլորտի պատասխանատուների շրջանում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Ի կատարումն սույն գործողության՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հայտնել է, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագիրը ներառում է ավանդական դասական կրոնների, ինչպես նաև քրիստոնեության պատմությունը՝ ներառելով Աստվածաշնչյան տարածված և հիմնական պատմությունները, որոնք բացառապես ներկայացված են որպես պատմական դեպքեր և ոչ դավանաբանական կամ հավատքի թելադրանք: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի նպատակն է՝ ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր նկարագրի ամբողջացմանը: Այս խնդիրն առանձնակի կարևորություն ունի նաև նոր սերնդին ընդհանուր բարոյական արժեքները և հասկացությունները փոխանցելու առումով, քանի որ ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում եկեղեցին համամարդկային արժեքներ կրող կարևորագույն ինստիտուտ է: Հետևաբար, դասընթացն իր կարևոր նպաստն է բերում սովորողների ընդհանուր աշխարհայացքի, հանդուրժողականության, հոգեբանության և բարոյական ըմբռնումների ներդաշնակ ձևավորմանը: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան օգնում է ընկալելու արևմտյան, մասնավորապես համաեվրոպական կյանքի շատ արժեքներ, որոնք նույնպես կապված են քրիստոնեության հետ»:

Հաշվի առնելով տրամադրված տեղեկատվությունը, կարելի է արձանագրել, որ ԿԳՆ-ն այս ծրագրային գործողությունը չի կատարել: Հարկ է նշել, որ գործողությունը միտված էր հանրակրթական դպրոցներում տարբեր կրոնների և դավանքների հանդեպ հանդուրժողականության ձևավորմանը, իսկ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի

[25] ՀՀ կառավարության 2016 թ. օգոստոսի 18-ի 843-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 9-րդ կետը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107890

դասավանդումը չի կարող ապահովել տարբեր կրոնների և դավանանքների մասին պատկերացման և դրանց հանդեպ հանդուրժողականության ձևավորմանը, քանի որ այն բովանդակային տեսանկյունից իրենից ներկայացնում է քրիստոնեության որպես կրոնի, Հայոց եկեղեցու ձևավորման և կայացման պատմությունը: Միևնույն ժամանակ, գործողության արդյունքն էին կազմում հայերենով Թոլեդոյի ուղղորդող սկզբունքների տպագրումը առանձին գրքույկով և տարածումը հանրակրթական դպրոցներում, որի վերաբերյալ Նախարարությունը ևս տեղեկատվություն չի տրամադրել:

Այսպիսով սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

2. Գործողություն՝ (8) Ուսումնասիրել ՀՀ օրենսդրության համապատասխանությունը խտրականության արգելմանը վերաբերող միջազգային իրավական նորմերին: Քննարկել «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենք ընդունելու նպատակահարմարության հարցը:
Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Ի պատասխան սույն գործողության վերաբերյալ ուղարկված հարցման՝ ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնում է, որ ՀՀ ԱՆ կողմից մշակվել է «Խղճի և կրոնական ազատությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագիծը ուղարկվել է Վենետիկի հանձնաժողով՝ քննարկման, ինչպես նաև ներկայացվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիք ստանալու նպատակով: «Խղճի և կրոնական ազատությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ -ի կողմից համատեղ կարծիքը ներկայացվել է դեռևս 2011թ. սեպտեմբերի 30-ին [26] : Այնուամենայնիվ, անգամ 2017թ. մայիս ամսվա դրությամբ Օրենքի լրամշակված նախագիծը հանրային քննարկման չի ներկայացվել:

Ինչ վերաբերում է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենք ընդունելուն, ապա նախարարությունը հայտնել է, որ Եվրասիա համագործակցության հիմնադրամի հետ համատեղ իրականացրել է խտրականության դեմ պայքարի համապարփակ ուսումնասիրություն, որի նպատակն է եղել վեր հանել խտրականության ոլորտի խնդիրները, ինչպես նաև քննարկել առանձին օրենքի նախագիծ մշակելու նպատակահարմարությունը: 2015թ. ապրիլի 8-ին տեղի է ունեցել խտրականության

[26] Joint opinion on the draft law on freedoms of conscience and religion and on the laws making amendments and supplements to the criminal code, the administrative offences code and the law on the relations between the republic of Armenia and the holy Armenian apostolic church of the republic of Armenia, Venice commission and the OSCE/ODIHR, adopted by the Venice Commission at its 88th Plenary Session. 17 October 2011 http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2011)086-e

արգելման օրենսդրության հարցերին առնչվող հանրային քննարկում և «Արդյոք անհրաժեշտ է խտրականության դեմ պայքարի մասին առանձին օրենք ունենալ» վերտառությամբ ձեռնարկի շնորհանդես: Քննարկման արդյունքում որոշվել է միասնական օրենքի նախագիծ մշակման աշխատանքներ սկսել ուղղությամբ Ուսումնասիրության իրականացումն ավարտվել է և առաջարկությունների փաթեթը 2015 թ. հունվարի 21-ի թիվ 01/19/232-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Ինչ վերաբերում է օրենքի նախագծի մշակմանը, ապա պետք է նշել, որ խտրականության դեմ պայքարի մասին օրենքի նախագծի մշակման աշխատանքներն ընթացքում են: Նախատեսվում է, որ օրենքը կընդունվի մինչև 2017թ. ավարտը: Միաժամանակ, ՀՀ Արդարադատության նախարարությունը նշել է, որ օրենքի ընդունումը հանդիսանում է ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություն, մասնավորապես 2015 թ. դեկտեմբերի 11-ին Բրյուսելում Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ԵՄ Բյուջետային աջակցության ծրագրի ֆինանսավորման համաձայնագրով, ուստի 2017 թ. ընթացքում նախատեսվում է խտրականության դեմ պայքարի մասին օրենսդրության ընդունում:

Ուշագրավ է, որ 2017թ. հունիսի 1-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է դրվել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը, որոնք պարունակում են խնդրահարույց մի շարք դրույթներ: Ուստի, Կազմակերպությունը ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացրել նշված նախագծի վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:[27]

Նախևառաջ պետք է նշել, որ գործողությունը ձևակերպված է շատ անորոշ, և թեև գործողության կատարումը ակնհայտորեն չի իրականացվել Ծրագրով սահմանված ժամկետներում, այնուամենայնիվ հաշվի առնելով, որ առաջարկությունը ՀՀ կառավարություն չի ներկայացվել, գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված:

Այսպիսով սույն գործողությունը կարելի է գնահատել կիսով չափ իրականացված:

[27]Տե՛ս ՀՔԱՎ առաջարկությունների փաթեթը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ http://hcav.am/events/26-6-17-06/

3. Գործողություն՝ (9) Բացառել դպրոցներում ուսուցիչների հավատաքննության դեպքերը և աշխատանքի ընդունումը կամ հեռացումը՝ ըստ կրոնական պատկանելության
Ակնկալվող արդյունքը՝ Համապատասխան իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Սույն գործողությունը պատկանում է այն միջոցառումների շարքին, որոնց կատարման ընթացքի մասին տրամադրվել է ոչ բովանդակային պատասխան, այնուհետև Կազմակերպության կողմից ուսումնասիրությամբ պարզվեց, որ պատասխանատու մարմնի նախաձեռնությամբ ՀՀ կառավարության 2016 թ. օգոստոսի 18-ի 843-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել այն ճանաչվել է ուժը կորցրած:[28]

Այսպես, ի սկզբանե որպես սույն գործողության վերաբերյալ տեղեկատվություն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ներկայացրել է ՀՀ կթության և գիտության նախարարի 2013 թ. ապրիլի 15-ի թիվ 396-Ն հրամանը, որով հաստատվում է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը:

Այնուհետև նախարարության նախաձեռնությամբ սույն կետը ճանաչվում է ուժը կորցրած, պատճառաբանելով, որ Ծրագրի նախագիծը սահմանված կարգով շրջանառելու ժամանակ, հավանաբար, բավարար ուշադրություն չի դարձվել, որպես ակնկալվող արդյունք իրավական ակտի մշակման և ՀՀ կառավարություն ներկայացնելու հանգամանքին և առաջարկություն չի ներկայացվել այդ կետը նախագծից հանելու վերաբերյալ, քանի որ նման հարաբերությունները կարգավորվում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

ՀՀ ԿԳՆ պատասխանից պարզ է դառնում, որ նախարարության կողմից այս գործողության կատարման ուղղված որևէ միջոց չի ձեռնարկվել և փաստացի նախարարությունը որևէ խնդիր չի տեսնում: Մինչդեռ կրոնական պատկանելության պատճառով ուսուցիչներին աշխատանքից ազատելու հարցը շարունակվում է մնալ չլուծված:[29]

Այսպիսով սույն գործողությունը կարելի է գնահատել չիրականացված:

[28] ՀՀ կառավարության 2016 թ. օգոստոսի 18-ի 843-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՄԻՊԱՌՄԾ 9-րդ կետը http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107890

[29] «Մտքի, խղճի և կրոնի ազատությունը Հայաստանում. տարեկան զեկույց -2013», Համագործակցություն հանուն Ժողովրդավարության Կենտրոն

http://www.religions.am/arm/documents/comments/ Մտքի_-խղճի-և-կրոնի-ազատությունը-Հայաստանում/

4. Գործողություն՝ (10) «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող «Գենդերային հավասարության ապահովման պետական մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերևի նախարարություն

Ըստ ՀՀ ԱՍԻՆ պատասխանի՝ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն է ներկայացվել 2014թ. ապրիլի 30-ին:

Նախարարությունը ՀՀ կառավարության կողմից որոշման ընդունման վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել, իսկ պաշտոնական էլեկտրոնային աղբյուրների ուսումնասիրության արդյունքում հնարավոր չեղավ պարզել նշյալ իրավական ակտը ընդունվել է, թե ոչ:

Այսպիսով, սույն գործողությունը կարելի է գնահատել մեծամասամբ իրականացված:

Այսպիսով, Մտքի, խղճի, կրոնի և դավանանքի ազատության իրավունքի, խտրականության դեմ պայքարի ոլորտում ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել 4 միջոցառում, որից երկուսը գնահատվել է չիրականացված, մեկ գործողություն գնահատվել է կիսով չափ իրականացված և ևս մեկը՝ մեծամասամբ իրականացված:

III. Կրթության իրավունք (4)

1. Գործողություն՝ (11) Ձեռնարկել արդյունավետ միջոցներ դպրոցների մանկավարժական խորհուրդների և կառավարման խորհուրդների նիստերը հասարակության համար թափանցիկ դարձնելու ուղղությամբ

Ակնկալվող արդյունքը՝ թափանցիկությունն ապահովելու համար դպրոցների, մանկավարժական խորհուրդների և կառավարման խորհուրդների կայացրած որոշումների տեղադրում համապատասխան դպրոցի կայքէջում

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Ըստ ՀՀ ԿԳՆ տրամադրած տեղեկատվության՝ դպրոցների մանկավարժական խորհուրդների և կառավարման խորհուրդների նիստերը հասարակության համար թափանցիկ դարձնելու նպատակով համապատասխան գրություններ են ուղարկվել Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ, որպեսզի բոլոր դպրոցների կայքէջերում տեղադրվեն խորհուրդների կայացրած որոշումները: ՀՀ ԿԳՆ կողմից կատարված հարցման արդյունքում ճշտվել է նաև հանրապետության այն դպրոցների ցանկը, որոնք կայքէջեր չունեն և հանձնարարվել է կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին այդ դպրոցների համար ստեղծել կայքէջեր:

Այն մասին, թե որքանով և որ դպրոցների կայքէջերում է տեղադրվել մանկավարժական խորհուրդների և կառավարման խորհուրդների կայացրած որոշումները, տեղեկատվությունը բացակայում է: Ինչի արդյունքում նաև պարզ չէ գործողության իրականացման արդյունքը: Կարելի է նաև եզրակացնել, որ նախարարությունը բավականաչափ ջանք չի գործադրել գործողության իրականացման ուղղությամբ:

Ուստի սույն գործողությունը կարելի է համարել մեծամասամբ չիրականացված:

2. Գործողություն՝ (12) Ապահովել պետական ֆինանսավորմամբ բոլոր կրթական հաստատությունների բյուջեների և բյուջեների փոփոխությունների ու կատարողականների, ինչպես նաև դրանց ղեկավար մարմինների որոշումների հրապարակայնությունը

Ակնկալվող արդյունքը՝ համապատասխան իրավական ակտի (ակտերի) նախագիծը (նախագծերը) ՀՀ կառավարություն ներկայացնելը

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2014 թ. ընթացքում Նախարարությունը իրականացրել է նախնական քննարկումներ պետական ֆինանսավորմամբ բոլոր կրթական հաստատությունների բյուջեների և բյուջեների փոփոխությունների ու կատարողականների, ինչպես նաև դրանց ղեկավար մարմինների որոշումների հրապարակայնությունն ապահովելու ուղղությամբ: 2014 թ. նոյեմբերի 17-ի 1105-Ա/Ք հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընգրկված են նաև հարցի հետ առնչություն ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նախարարությունը հայտնել է, որ սկսած 2007 թ. schoolsite.am տիրույթում տեղադրված են 292 դպրոցների կայքէջերի հղումներ, իսկ 2013 թ. ուսումնական հաստատությունների արդիական կայքէջերի գործարկման նպատակով schoolsite.am տիրույթում նոր հնարավորություններ են տրամադրվել դիմող 127 ուսումնական հաստատությունների (այդ թվում' 122 հանրակրթական դպրոցների և 5 ուսումնարանների): Բացի այդ, կայքէջ չունեցող ուսումնական հաստատությունների փաստաթղթերի հրապարակման նպատակով, «Հայկական կրթական միջավայրի» «Պաշարների շտեմարան» կայքում (http://lib.armedu.am/) ստեղծվում են համապատասխան կատեգորիաներ, որոնցում տեղադրվում են «Ներքին գնահատման», «Գնումների գործընթացի» և այլ փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները: Այսօրվա դրությամբ իրենց փաստաթղթերը հրապարակել են՝ «Ներքին գնահատում 2015» ենթաբաժնում՝ 715, «Ներքին գնահատում 2016-ում»՝ 7, «Գնումների գործընթաց 2016-ում»՝ 38 հանրակրթական ուսումնական հաստատություններ: Կայքէջ չունեցող նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների փաստաթղթերը հրապարակվում են «Մասնագիտական կրթություն և ուսուցում» պորտալում (http://vetarmenia.am/): 2016թ. հուլիսի 1-ից «Գնումների գործընթացի» փաստաթղթեր են տեղադրել 13-ը:

Այս գործողության արդյունքն է կազմում իրավական ակտի/ակտերի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը, որի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ուստի սույն գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

3. Գործողություն՝ (13) Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վճարների մասնակի կամ ամբողջական փոխհատուցում պետության կողմից՝ ելնելով յուրաքանչյուր տարի ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման

համակարգում հաշվառված՝ ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող խմբերին՝ անկախ մասնագիտությունից և բուհից
Ակնկալվող արդյունքը՝Իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՀՀ ԿԳՆ-ն տեղեկատվություն է տրամադրել ՀՀ ԿԳՆ կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների ուսանողներին, յուրաքանչյուր տարի՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու գործընթացի վերաբերյալ, որը մեկնարկել է 2013 թ. սեպտեմբերից: 2014 թ. համար ուսման վարձի փոխհատուցում է տրամադրվել 1070 ուսանողի:

ՀՀ ԿԳՆ-ն տեղեկատվություն է տրամադրել նաև 2014 թ. մայիսի 19-ին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ: Օրենքով սահմանվել է Բարձրագույն ուսումնական հաստատության պարտավորությունը՝ ապահովել հաստատության վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում մի շարք ուսանողների խմբերին:

Այսպիսով, սույն գործողությամբ փաստացի սահմանվել է այն միջոցառումը, որը իրականացվում է ՀՀ ԿԳՆ-ի կողմից 2013 թ. ի վեր: Ուստի, պարզ չէ նաև այս գործողության ՄԻՌ միջոցառումների ծրագրով սահմանելու անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողության կատարումը չի բխում ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից:

4. Գործողություն՝ (14) Բարձրացնել դատավորների, իրավապահ մարմինների համապատասխան աշխատողների իրազեկվածությունը ՀՀ մասնակցությամբ գործող մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերին

Ակնկալվող արդյունքը՝ համապատասխան ուսումնական ծրագրերի մշակում և դասավանդում՝ դատավորների, դատախազների, ոստիկանության աշխատողների, փաստաբանների համար

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ), ՀՀ փաստաբանական դպրոց (համաձայնությամբ), ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն

Սույն գործողությունը պատկանում է այն միջոցառումների շարքին, որոնց կատարումը կրում է պարբերական բնույթ։

ՀՀ ոստիկանությունը սույն գործողության կատարման վերաբերյալ տեղեկատվութուն տրամադրել է միայն մեկ անգամ, ըստ որի՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական ծրագրերում ներառված «Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր», «Մարդու իրավունքները և ոստիկանությունը» առարկաների, ինչպես նաև «ՀՀ քրեական դատավարության իրավունքի», «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ», «Մինչդատական վարույթի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» դասընթացների շրջանակներում ուսումնասիրվել են մի շարք միջազգային պայմանագրեր։ Հետագա ժամանակահատվածի համար հայցվող տեղեկատվությունը չի տրամադրվել՝ միջոցառման կատարման ժամկետի ավարտի պատճառաբանությամբ։

ՀՀ արդարադատության ակադեմիան, որը սույն գործողության համակատարող է համաձայնության պայմանով, հայտնել է, որ ուսուցանվող ծրագրերում ՀՀ մասնակցությամբ գործող մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի վերաբերյալ դատավորների, դատախազների իրազեկվածության բարձրացման նպատակով, բացի ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վերաբերյալ դասավանդվող առարկաներից (ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական, քաղաքացիական դատավարության, վաչրական գործերով, սեփականության իրավունքի պաշտպանության հարցերով) ներառվել են. «Ռասիզմի և խտրականության դեմ պայքարի արդի հարցերը», «Փախստականների իրավունքների պաշտպսւնության արդի հարցերը», «ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները», «Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցերը», «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը», «Կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդի հարցերը», «Եվրասիական տնտեսական միության իրավունքը և դատարանի դերը դրա կայացման գործում», առարակաները և այլն։

ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից որպես այդպիսին չի տրամադրվել տեղեկատվություն մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի շուրջ փաստաբանական համայնքի գիտելիքների զարգացման մասին՝ որպես ՄԻՌ միջոցառումների ծրագրով նախատեսված գործողություն։ Միևնույն ժամանակ, դպրոցը

տեղեկատվություն է տրամադրել Եվրոպայի Խորհրդի և ՄԱԿ-ի փախստականների գրասենյակի Հայաստանյան ներկայացուցչության հետ իրականացված ՄԻԵԴ ընդունելության չափանիշների ՄԻԵԴ 14-րդ հոդվածի կիրառման, Վերանայված սոցիալական խարտիայի և փախստականների իրավական կարգավիճակի վերաբերյալ վերապատրաստման մի շարք դասընթացների մասին: Ինչ վերաբերում է հետագա ժամանակահատվածի համար հայցվող տեղեկատվությանը, ապա ՀՀ փաստաբանական դպրոցը հայտնել է, որ հանդիսանում միջոցառման համակատարող, իսկ համակարգող մարմինների կողմից առաջարկություններ չեն ստացվել:

Պետք է նշել, որ սույն գործողության վերաբերյալ պատասխանատու մարմինների կողմից ամբողջական և ըստ էության տեղեկատվություն է տրամադրվել միայն Արդարադատության ակադեմիայի կողմից: Միևնույն ժամանակ, որևէ պատասխանատու մարմնի կողմից չի տրամադրվել տեղեկատվություն միջոցառման իրականացման նպատակներից ելնելով կրթական կամ վերապատրաստման ծրագրերի փոփոխման, լրացման, կամ նոր կրթական ծրագրերի մշակման անհրաժեշտության վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ սույն գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ չիրականացված:

Այսպիսով, Կրթության իրավունքի ոլորտում նախատեսված էր իրականացնել ընդհանուր առմամբ 4 գործողություն, ընդ որում թիվ 14 գործողությունը կրում է պարբերական բնույթ: Գործողություններից երկուսը գնահատվել է որպես մեծամասամբ չիրականացված, մեկ գործողություն գնահատվել է չիրականացված և մեկ գործողության կատարումը պայմանավորված չէ Ծրագրով:

IV. Սոցիալական ապահովության, բավարար կենսամակարդակի և աշխատանքի իրավունք (8)

1. **Գործողություն՝ (15)** Պետական նպաստների վարչարարության բարելավում
Ակնկալվող արդյունքը՝ պետական նպաստների նշանակման համար անհրաժեշտ՝ դիմողի կողմից ներկայացված տվյալների և համապատասխան տեղեկատվական բազաներում առկա տվյալների համադրելիության բարձրացում, վերահսկողության մեխանիզմների հստակեցում

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» թիվ 145-Ն որոշման N6 հավելվածով սահմանվել է «Ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայի ստեղծման, ձևավորման, անհատական տվյալների՝ ՀՀ ԱՍԻՆ և սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, ՀՀ նախարարությունների, այլ պետական մարմինների և կազմակերպությունների միջև փոխանակման կարգը»: Ըստ այդ կարգի՝ ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ-ում օրինական բնակվող անձանց անհատական տվյալների միասնական տեղեկատվական շտեմարանը (այսուհետ՝ սոցիալական բանկ) բաղկացած է մի շարք տեղեկատվական բազաներից և այլ կառույցների կողմից վարվող տեղեկատվական այն բազաներից, որոնք պարունակում են անձի սոցիալական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն:

Ըստ ՀՀ ԱՍԻՆ Տեղեկատվական շտեմարանները հնարավորություն են տալիս առավել արագ տեղեկատվություն ստանալ անձանց վերաբերյալ՝ իրենց սոցիալական նպաստների վերաբերյալ տեղեկատվության կատավարման, և դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս: Սոցիալական բանկը ներկայումս տեղակայված է ՀՀ-ում գործարկված համալիր սոցիալական ծառայությունների 19 տարածքային կենտրոններում, իսկ հարակից տեղեկատվական բազաների տվյալները կիրառվում են սոցիալական ծառայությունների 55 տարածքային կենտրոններում:

ՄԻՌ միջոցառումների ծրագիրը հաստատվել է 2014 թ. փետրվարի 27-ին, մինչդեռ ՀՀ ԱՍԻՆ կողմից տեղեկատվություն է տրամադրվել 2014 թ. հունվար ամսին իրականացված միջոցառման վերաբերյալ: Միևնույն ժամանակ, այն միջոցառումները, որոնց վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ ԱՍԻՆ-ն ուղղված են նաև սույն գործողության իրականացմանը: Այնուամենայնիվ պարզ չէ, թե ՄԻՌ բխող միջոցառումների ծրագրով սահմանված սույն գործողության շրջանակներում ինչ է նախատեսվել իրականացնել և ինչ միջոցառումներ են իրականացվել, քանզի ՄԻՌ բխող միջոցառումների ծրագրի հաստատումից ի վեր սույն գործողության ուղղությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ելնելով վերոգյալից՝ սույն գործողությունը կարելի է գնահատել որպես գործողություն, որի կատարումը չի բխում ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից:

2. Գործողություն՝ (16) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների

ծրագերրի մոնիթորինգի և արդյունավետության գնահատման համակարգի ներդրում, մանսնավորապես՝ կենսաթոշակների և նպաստների նշանակման, քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման օրենսդրությամբ սահմանված պահանջների պատշաճ կատարումը և համապատասխան ծրագրերի արդյունավետությունը գնահատելու նպատակով
Ակնկալվող արդյունքը՝ մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ ոլորտում իրականացվող ծրագրերի մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգի ներդրման գործընթացը դեռևս ընթացքի մեջ է: Միևնույն ժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 29.12.2015թ. թիվ 188-Ա/1 հրամանի համաձայն՝ 2016թ. երկրորդ կիսամյակի ընթացքում, իրավական ակտերում կատարված փոփոխություններին համապատասխան, լրամշակվել են զբաղվածության կարգավորման պետական 10 ծրագրերի տեղեկանքները, մոնիթորինգային անձնագրերը և ցուցանիշները, հստակեցվել են դրանց հավաքագրման աղբյուրները: Իրականացվել են տեղեկատվության հավաքագրման դաշտային աշխատանքներ՝ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ԶՏԿ-ներում, իրականացվել են ընթացիկ մշտադիտարկման և շահառուների կարծիքի ուսումնասիրության աշխատանքներ: Ծրագրերի մոնիթորինգի և գնահատման արդյունքում կազմված ամփոփ հաշվետվությունը քննարկվել է բոլոր շահագրգիռ կողմերի հետ, որի արդյունքների հիման վրա լրամշակվել է «Զբաղվածության կարգավորման 2017թ. պետական ծրագիրը»: Հաշվետվությունը սահմանված կարգով և ժամկետում՝ 27.09.2016թ. «Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի» հետ միասին ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Նախարարության կողմից տեղեկատվություն է տրամադրվել նաև իրականացված մի շարք այլ ծրագերի վերաբերյալ, որոնց շրջանակներում լրամշակվել է սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման կարգը և մեթոդաբանությունը, որի հիման վրա ընդունվել է ՀՀ ԱՍՀ նախարարի 2016թ. հունիսի 28-ի N 70-Ա/1 հրամանը: Բացի այդ, ԱՄՆ ՄԶԳ Կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակում իրականացվել է «Աշխատանքային կենսաթոշակ» և «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրերի մոնիթորինգ և գնահատում: Իսկ Նախարարության պաշտոնական կայքում բացվել է

«Ծրագրերի մշտադիտարկում և գնահատում» էջը, որտեղ տեղադրված են բոլոր ամփոփ հաշվետվությունները:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է որպես ամբողջությամբ իրականացված:

3. Գործողություն՝ (17) Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին) համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման համար
Ակնկալվող արդյունքը՝ Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին) համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման համար Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2015 թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 17.12.2014 թ. ՀՕ-231-Ն), որի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել են՝ ՀՀ կառավարության 26.02.2015թ.-ի «Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների միասնական ընդունարանները գործարկելու մասին» N 185-Ն որոշումը՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՍԾՏԿ) սպասարկման տարածքում բնակվող բնակչության համար սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող դիմումների տրման գործընթացում մեկ միասնական մարմնի կողմից «մեկ պատուհանի» սկզբունքի արդյունավետ իրացման և այդ գործընթացի կազմակերպման վերաբերյալ, ՀՀ վարչապետի 2015թ. մարտի 10-ի «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրառումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 198-Ա որոշումը, «ՀՀ վարչապետի 2015թ. մայիսի 26-ի ՀՀ վարչապետի 1998թ. նոյեմբերի 6-ի N 620 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 428-Ն որոշումը, որով փոփոխություններ են տեղի ունեցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատողների թվաքանակում, ՀՀ կառավարության 2015 թ. հունիսի 4-ի «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 582 Ն որոշումը:

Այսպիսով, ելնելով տրամադրած տեղեկատվությունից, կարելի է արձանագրել, որ որպես ծրագային գործողությունն իրականացվել է: Մշակվել է ինչպես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ուժի մեջ է մտել, այնպես էլ ՀՀ կառավարության կողմից հաստատվել են օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտերում փոփոխությունների և լրացումներ:

Այնուամենայնիվ, դեռևս անհրաժեշտ է իրականացնել նշված ծառայությունների տրամադրման համալիր մշտադիտարկում և արդյունավետության ուսումնասիրություն:

Հաշվի առնելով վերոգրյալը, գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

4. Գործողություն՝ (18) Ներկայացնել առաջարկություն ընտանիքների անապահովության գնահատման համակարգով տրամադրվող սոցիալական աջակցության տարաբնույթ ծրագրերի ներդաշնակեցման չափանիշների վերաբերյալ
Ակնկալվող արդյունքը՝ ընտանիքի անապահովության համակարգով տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերի ներդաշնակեցման չափանիշների վերաբերյալ առաջարկությունը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ ի կատարումն սույն գործողության մշակվել և 2014 թ. ապրիլի 30-ին ՀՀ կառավարություն է ներկայացվել Ընտանիքի անապահովության միավորի հիման վրա իրականացվող սոցիալական աջակցության տարաբնույթ ծրագրերի ներդաշնակեցման մասին առաջարկություն:

Հարկ է նշել, որ թեև նախարարությունը հայտնել է առաջարկության մշակման մասին, սակայն այնուամենայնիվ այն չի տրամադրել Կազմակերպությանը, ինչի պատճառով էլ հնարավոր չէ պարզել նշված առաջարկության բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

5. Գործողություն՝ (19) Մինչև 14 տարեկան երեխաներին՝ իրենց համար թույլատրելի աշխատանքներում ներգրավման կարգավորում
Ակնկալվող արդյունքը՝համապատասխան իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ ԱՍԻՆ կողմից մշակվել է «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է սահմանել մինչև 14 տարեկան անձանց իրավունքը ընդգրկվել կինեմատոգրաֆիայի, սպորտային, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում ստեղծագործությունների ստեղծմանը (ստեղծագործական աշխատանք) և (կամ) կատարմանը՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնության դեպքում, ինչը նաև չպետք է վնասի նրանց առողջությանն ու բարոյականությանը, և չպետք է խոչընդոտի կրթությանն ու անվտանգությանը:

Կազմակերպության կողմից լրացուցիչ ուսումնասիրությամբ պարզվեց, որ Նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից, ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողով, իսկ 2015 թ. հունիսի 22-ին այն ընդունվել է:[30]

Կազմակերպության կողմից վերոնշյալ Նախագծի վերաբերյալ առաջարկությունների փաթեթը ներկայացվել էր Ազգային ժողով, որով հատկապես ընգծվել էր այն, որ «կինեմատոգրաֆիայի, սպորտային, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում ստեղծագործությունների ստեղծմանը» արտահայտությունը կարող ենթարկվել սահմանափակ մեկնաբանության: Մասնավորապես պարզ չէ, թե ինչ չափանիշներով պետք է սահմանվի սպորտային, թատերական և համերգային կազմակերպությունը, ինչ չափորոշիչներով պետք է արձանագրվի կազմակերպության որպես այդպիսին լինելը: Պարզ չէ, թե ինչ մեկնաբանություն պետք է տրվի այն դեպքերին, երբ կազմակերպությունը՝ որը չի հանդիսանում ուղղակիորեն կինեմատոգրաֆիայի, սպորտային, թատերական և համերգային կազմակերպություն, իր գործունեության ընթացքում կարող է իրականացնել նաև նման գործունեություն: Ուստի, առավել նպատակահարմար կլիներ «կինեմատոգրաֆիայի, սպորտային, թատերական և համերգային կազմակերպություններում» արտահայությունը փոխարինել «կինեմատոգրաֆիայի, սպորտային, թատերական և համերգային գործունեությանը» արտահայտությամբ:

[30] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=37536

Չնայած վերոշարադյալ վերպահումներին՝ գործողությունը կարելի է գնահատել ամբողջությամբ իրականացված:

6. Գործողություն՝ (20) Քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատման ենթակա անձանց աշխատաշուկային ինտեգրվելուն ուղղված միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ թույլատրելով զբաղվածության պետական ծառայության գործակալության և այդ անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչների մուտքը քրեակատարողական հիմնարկներ
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից 2015 թ. փետրվարի 18-ի թիվ Ե40/7-554 գրությամբ Քրեակատարողական ծառայությունը հայտնել է իր պատրաստակամությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրել «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և համապատասխան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին մուտք գործել քրեակատարողական հիմնարկներ: Հարկ է նշել նաև, որ 2012թ. հունիսի 6-ին «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության և «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպության միջև հինգ տարի ժամկետով ստորագրվել է համագործակցության և փոխադարձ աջակցության մասին հուշագիր: Նախարարությունը նաև հայտնել է, որ պատիժը կատարող հիմնարկ մուտքի և ելքի կարգը սահմանում է պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը: ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1256-Ն որոշման համաձայն՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետը տալիս է թույլտվություն՝ քրեակատարողական հիմնարկներ զանգվածային լրատվության միջոցների, ինչպես նաև ՀՀ սահմանված կարգով գրանցված կրոնական կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մուտքի և ելքի համար: ՀՀ ԱՆ 2011 թ. նոյեմբերի 11-ի «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պահպանության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունության կարգը հաստատելու մասին» թիվ 195-Ն հրամանով սահմանվում է անձանց մուտքի և ելքի կարգը քրեակատարողական հիմնարկներ: Բացի այդ, քրեակատարողական ծառայությունը պատրաստակամ է և վերոհիշյալ իրավական ակտերով սահմանված կարգով թույլատրում

է զբաղվածության պետական ծառայություն գործակալության և համապատասխան ՀԿ-ների ներկայացուցիչներին մուտք գործել քրեակատարողական հիմնարկներ՝ համապատասխան դիմումի ներկայացման դեպքում: Հաշվի առնելով հարցի բավարար իրավական կարգավորման առկայությունը՝ նոր իրավական ակտի մշակման անհրաժեշտությունը բացակայում է:

Գործողության նպատակը քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատման ենթակա անձանց աշխատաշուկային ինտեգրվելուն ուղղված միջոցառումների իրականացումն է: Ընդ որում, որպես այդպիսի միջոցառում նախատեսվում է զբաղվածության պետական ծառայության գործակալության և նշված անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչների մուտքի թույլտվությունը քրեակատարողական հիմնարկներ, որն անկասկած բավարար չէ ազատման ենթակա անձանց աշխատաշուկային ներգրավվելու հիմնախնդիրը լուծելու համար: Պարզ չէ, թե որքանով է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության թիվ Ե40/7-554 գրությունը նպաստել Զբաղվածության պետական գործակալության այցելությունների կատարմանը քրեակատարողական հիմնարկներ, և արդյոք նման այցելություններ կատարվել են, թե ոչ: Բացի այդ, գործողության կատարման արդյունքն էր կազմում համապատասխան իրավական ակտի նախագծի մշակումը, որը սակայն չի մշակվել, քանի որ, ինչպես նշում է ՀՀ արդարադատության նախարարությունը, դրա մշակման անհրաժեշտությունը բացակայում է:

Անհրաժեշտ է նշել, որ գործողության իրականացման վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, որը հանդիսանում է գործողության համակատարող:

Հաշվի առնելով վերոգրյալը, գործողությունը գնահատվում է չիրականացված:

7. Գործողություն՝ (21) Զբաղվածության պետական ծառայություն գործակալության տարածքային կենտրոններին կից միգրացիոն ռեսուրս կենտրոնների ստեղծում
Ակնկալվող արդյունքը՝ Միգրացիոն ռեսուրս կենտրոնների գործարկում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարությունը հայտնել է, որ Հանրապետությունում գործող թվով 7 միգրացիոն ռեսուրս կենտրոններից ստացված տեղեկատվության համաձայն՝ 01.06.2015թ.-ի դրությամբ արտագնա աշխատանքի մեկնողներին տրամադրվել է խորհրդատվություն համապատասխան երկրի աշխատանքային միգրացիոն օրենսդրության վերաբերյալ, տրվել են տեղեկատվական նյութեր, վերադարձածներին տրվել է խորհրդատվություն զբաղվածության կենտրոններում հաշվառվելու կարգի, թափուր աշխատատեղերի, ինչպես նաև զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի վերաբերյալ: Շահառուների հետ հանդիպումների ժամանակ նրանց բաժանվել են համապատասխան տեղեկատվական նյութեր, բուկլետներ: Մինչև 2015թ. հունիսի 1-ը էրեբունու, Նուբարաշենի ՄՌԿ-ում խորհրդատվություն է ստացել թվով 136 շահառու, Աշտարակում՝ 119, Իջևանում՝ 306, Արմավիրում՝ 34, Արտաշատում՝ 73, Վայքում՝ 248, իսկ Գորիսում 241 շահառու: 01.06.2015թ-ի դրությամբ 7 միգրացիոն ռեսուրս կենտրոններում խորհրդատվություն ստացած անձանց թիվը կազմել է՝ 1157: 2016թ հունիսի 5-ին Միգրացիայի միջազգային կազմակերությունը «Հայաստանի աշխատանքային միգրացիայի կառավարման կարողությունների հզորացում դեպի ուժեղ ժողովրդավարություն և արդյունավետ կառավարում» ծրագրի շրջանակներում Ռումինիայի կառավարության հետ ստորագրեց համագործակցության պայմանագիր: Ծրագրի նպատակն է նպաստել միգրացիայի կառավարման ոլորտում ՀՀ կառավարության ջանքերին. ընդլայնել առկա միգրացիոն ռեսուրս կենտրոնների ցանցը և ստեղծել մինչ մեկնման կողմնորոշման կենտրոններ:

Այսպիսով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի տրամադրել տեղեկատվություն միգրացիոն ռեսուրս կենտրոնների ստեղծման մասին, պարզ չէ, թե երբ և որ իրավական ակտի հիման վրա են այդ կենտրոնները ստեղծվել:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ դեռևս 2010թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան առաքելությունը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կառուցվածքում Միգրացիոն ռեսուրս կենտրոն/ներ/ տեղայնացնելու վերաբերյալ: [31] Այսինքն սույն գործողության ուղղությամբ համապատասխան աշխատանքները մեկարկել են ավելի վաղ՝ մինչև Ծրագրի հաստատումը, ինչն էլ իր հերթին վկայում է այն մասին, որ սույն գործողության կատարումը պայմանավորված չէ ՄԻ պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով:

Հաշվի առնելով վերոգրյալը, սույն գործողության կատարումը չի բխում ՄԻ պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից:

[31] Տե՛ս http://employment.am/am/75/free.html

8. Գործողություն՝ (22) Երիտասարդության շրջանում զբաղվածության խնդրի լուծման կապակցությամբ մշակել հստակ ծրագրեր և իրականացնել տարբեր միջոցառումներ ՀՀ բոլոր մարզերում՝ ապահովելով դրանց շարունակական բնույթը
Ակնկալվող արդյունքը՝ Ծրագրերի հաստատում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ՀՀ ԱՍԻՆ-ն իր կողմից տրամադրված տեղեակտվության մեջ վկայակոչել է «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքը, արձանագրելով, որ այս օրենքին համապատասխան ներդրվել է զբաղվածության քաղաքականության նոր մոդելը՝ բացառապես ակտիվ բնույթ ունեցող և գործազուրկների, այդ թվում առավելապես՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն զբաղվածության ապահովմանը ուղղված ծրագրերով:

Նախարարության կողմից ներկայացվել են զբաղվածության կարգավորմանն ուղղված ծրագրեր՝ «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում», «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման», «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում», «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում», «Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում» և այլն: Այդ ծրագրերի իրականացման արդյունքում, ըստ ՀՀ ԱՍԻՆ 2014թ. ընթացքում աշխատանքի է տեղավորվել 11495 աշխատանք փնտրող, որից 28.9%-ը կամ 3319-ը երիտասարդ են:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարությունը ևս տեղեկատվություն է տրամադրել մի շարք ծրագրերի իրականացման վերաբերյալ: Երիտասարդների զբաղվածության խնդիրը լուծելու նպատակով իրականացվել են «Տանք միմյանց աշխատանք», «Գործարար երիտասարդները հանուն գյուղական համայնքի զարգացման» ծրագրերը: Միևնույն ժամանակ տեղեկատվություն է տրամադրվել 2014 թ. իրականացված «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծության վերաբերյալ, որը հրապարակվել է ՀՀ ՍՍԻՆ և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցությամբ: [32]

[32] http://www.ystudies.am/reports/1065

Սույն գործողության բովանդակությունն են կազմում երիտասարդների զբաղվածության խնդրի լուծման նպատակով հատուկ ծրագրերի մշակումն ու հաստատումը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված ծրագրերը վերաբերում են զբաղվածության ընդհանուր հիմնախնդրի լուծմանը, այսինքն ծրագերի թիրախը երիտասարդները չեն: Անշուշտ, չի նվազեցվում այդ ծրագերի իրականացման կարևորությունը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ սույն գործողությունը կարելի է գնահատել կիսով չափ իրականացված:

Սոցիալական ապահովության, բավարար կենսամակարդակի և աշխատանքի իրավունքի ոլորտում ենթակա էին իրականացման ընդհանուր առմամբ ութ գործողություն, որից երկուսի կատարումը չի բխում Ծրագրից, չորս գործողություն գնահատվել է որպես ամբողջությամբ իրականացված, մեկ գործողություն՝ կիսով չափ իրականացված և ևս մեկ գործողութուն գնահատվել է որպես չիրականացված:

V. Անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք (1)

Գործողություն՝ (23) «Անհատական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի ընդունած չափանիշներին համապատասխան
Ակնկալվող արդյունքը՝ Իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ ԱԺ կայքէջեր

Սույն գործողության կատարման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով Կազմակերպության կողմից հարցում չի ուղարկվել, քանի որ օրենքի մշակումը և դրա հետ կապված գործընթացները կրում էին հրապարակային բնույթ:

Ի կատարումն սույն գործողության, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և 2014 թվականի սեպտեմբերի 4-ին և այնուհետև նոյեմբերի 27-ին [33] ՀՀ կառավարություն է ներկայացվել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ

[33] Նախագիծը ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել 2 անգամ:

օրենքի նախագիծը, որը 2015 թվականի մայիսի 18-ին ընդունվեց ՀՀ ԱԺ-ի կողմից։[34] Օրենքի կարգավորման առարկան է հանդիսանում անձնական տվյալների մշակման, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները։ Ընդ որում, սա այն եզակի ծրագրային գործողությունն է, որի վերաբերյալ հրապարակված տեղեկատվությունը եղել է ամբողջական, և տեղեկատվության լրացուցիչ հարցման անհրաժեշտություն չի եղել։

Հաշվի առնելով վերոգրյալը, գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված։

Այսպիսով, Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի ոլորտում նախատեսված է եղել իրականացնել 1 գործողություն, որը գնահատվել է որպես ամբողջությամբ իրականացված։

VI. Ազատ և արդար ընտրությունների իրավունք (1)

Գործողություն՝ (24) Ուսումնասիրել ստացիոնար առողջապահական կազմակերպությունում չգտնվող, սակայն հիվանդության կամ հաշմանդամության պատճառով ընտրական տեղամաս այցելելու դժվարություն ունեցող անձանց ընտրական իրավունքը մատչելի ձևով իրականացնելու միջազգային փորձը և ներկայացնել առաջարկություններ
Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ կառավարութուն առաջարկություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ), ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Ի կատարումն սույն գործողության ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ Կառավարություն է ներկայացրել «ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվել է հիշյալ կետի կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2016թ. երրորդ եռամսյակ, որը պայմանավորված է ՀՀ նոր ընտրական օրենսգրքի ընդունմամբ, և որի շրջանակներում ըստ նախարարության անդրադարձ կկատարվի նաև ստացիոնար առողջապահական կազմակերպությունում

[34] Կազմակերպության կողմից մշակվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների փաթեթ։

չգտնվող, սակայն հիվանդության կամ հաշմանդամության պատճառով ընտրական տեղամաս այցելելու դժվարություն ունեցող անձանց ընտրական իրավունքը մատչելի ձևով իրականացնելու խնդրին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սույն գործողության կատարման վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրել: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որը գործողության իրականացման համար պատասխանատու մարմին է հանդիսանում համաձայնության պայմանով, հայտնել է, որ ուսումնասիրվել է ստացիոնար առողջապահական կամակերպություններում չգտնվող, սակայն հիվանդության կամ հաշմանդամության պատճառով ընտրական տեղամաս այցելելու դժվարություն ունեցող անձանց ընտրական իրավունքը մատչելի ձևով իրականացնելու միջազգային փորձը, կազմվել է համապատասխան տեղեկանք, արվել է համապատասխան առաջարկություն և կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015թ. հուլիսի 1-ի թիվ 01-276 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադության նախարարություն: Կազմակերպությանը, սակայն, նշյալ հարցի կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը չի տրամադրվել:

Կազմակերպության կողմից լրացուցիչ ուսումնասիրությամբ պարզվել է, որ քննարկվող գործողության ժամկետի երկարաձգման վերաբերյալ ՀՀ կառավարությունը որոշում չի կայացրել: Պատասխանատու մարմինների կողմից ՀՀ արդարադատության նախարարություն Ծրագրի կատարման ընթացքի մասին հաշվետվության մեջ նշվում է, որ իրականացվել է 50-ից ավելի պետությունների փորձի ուսումնասիրություն, որով առաջարկվում է ներդնել շրջիկ արկղի կիրառումը: Հարկ է նշել, որ 2016թ. հունիսի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքը[35], որի 56-րդ հոդվածով սահմանվում է ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների և ռազմաբժշկական հաստատությունում ստացիոնար բուժման մեջ գտնվող զինծառայող ընտրողների, իսկ 63-րդ հոդվածով՝ ձերբակալված, քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողների համար շրջիկ արկղի կիրառությամբ քվերակելու հնարավորությունը: Այսինքն, այն անձինք, ովքեր չեն գտնվում ստացիոնար առողջապահական կազմակերպությունում և հիվանդության կամ հաշմանդամության պատճառով չեն կարող այցելել ընտրական տեղամաս, չեն օգտվում շրջիկ արկղի միջոցով քվերարկելու հնարավորությունից , ուստի զրկվում են ընտրելու իրավունքից:

Հաշվի առնելով վերոգրյալը, գործողությունը գնահատվում է չիրականացված:

[35] Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքը http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109081

Այսպիսով, Ազատ և արդար ընտրությունների իրավունքի ոլորտում նախատեսված էր իրականացնել 1 գործողություն, որի իրականացման համար պատասխանատու էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ արդարադատության նախարարությունները և ՀՀ ԿԸՀ-ը համաձայնության պայմանով: Գործողությունը գնահատվել է որպես չիրականացված:

VII. Ազատ արտահայտման, հավաքների և միավորումների ազատության իրավունք (8/7[36])

1. Գործողություն՝ (25) Հանրային հեռուստաընկերության կողմից ապահովել հանրության համար առավել հարմար ժամի հեռարձակվող լրատվական հաղորդումներում սուրդոթարգմանություն կամ հայերեն լուսագրեր՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի դրույթների պահանջներին համապատասխան
Ակնկալվող արդյունքը՝ առնվազն երկու լրատվական հաղորդման սուրդո-թարգմանության կամ հայերեն լուսագրի առկայության ապահովում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ ՀՌԱՀ-ը իր կողմից ներկայացված տեղեկատվության մեջ հայտնել է այն մասին, որ ՀՀ-ում գործող հեռուստատեսությունների կողմից լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հեռուստաեթերի մատչելիության ապահովումը կարգավորված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5.1 հոդվածով՝ Հանրային հեռուստաընկերությունը և ՀՀ գործող այն մասնավոր հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են նաև մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել խուլ հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով: Հանրային հեռուստառադիոընկերությունը և ՀՀ-ում գործող այն մասնավոր

[36] ՀՀ կառավարության 2016 թ. դեկտեմբերի 29-ի 1368-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=110570

հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են նաև մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ ապահովում են իրենց օրվա եթերաժամում խուլ հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը: Եվ քանի որ Օրենքի 5.1 հոդվածում փոփոխություն չի կատարվել, ապա հայտնում ենք, որ Հանձնաժողովն Օրենքով սահմանված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում է Օրենքի դրույթին համապատասխան:

Այսպիսով, այն մասին, թե արդյոք Հանրային հեռուստաընկերության և ՀՀ գործող մասնավոր հեռուստաընկերությունների կողմից ապահովվել է 5.1-րդ հոդվածի կատարումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը տեղեկատվություն չի տրամադրել: Այնուամենայնիվ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից տրված տեղեկատվությունից կարելի է նաև եզրակացնել, որ օրենսդրական առկա կարգավորումը ևս թույլ չի տալիս ապահովել գործողության արդյունավետ կատարումը: Այսպես, գործողությունը պահանջում է, որպեսզի Հանրային հեռուստաընկերության կողմից ապահովվի <u>հանրության համար առավել հարմար ժամի</u> հեռարձակվող լրատվական հաղորդումներում սուրդոթարգմանություն կամ հայերեն լուսագրեր: Սակայն օրենսդրությամբ հանրության համար առավել հարմար ժամի պահանջը սահմանված չէ: Ուստի անհրաժեշտ է վերաձևակերպել գործողությունը, սահմանելով օրենսդրական փոփոխության իրականացման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

2. Գործողություն՝ (26) Միջազգային փորձին համապատասխան օրենսդրորեն հստակեցնել տեղեկատվության դասակարգման չափանիշները (պետական, ծառայողական, առևտրային, անձնական գաղտնիք)
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ԿԱ ԱԱԾ, ՀՀ պաշտպանության նախարարություն

Սույն գործողությունը ի սկզբանե նախատեսված էր իրականցնել 2015 թ. երրորդ եռամսյակում, սակայն ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ այն երկարաձգվեց մինչև 2016 թ երրորդ եռամսյակ[37]:

Միջոցառման համակատարող ԱԱԾ-ն հայտնել է, որ գործողության շրջանակներում իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքներով ՀՀ ԱԱԾ լիազորության ներքո գտնվող պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների դասակարգման չափանիշների հստակեցման վերաբերյալ առաջարկություններ չեն մշակվել՝ դրանց անհրաժեշտության բացակայության պատճառով: ԱԱԾ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, սակայն, Կազմակերպությանը չեն տրամադրվել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ի կատարումն սույն գործողության ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկվել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում ներառել ծառայողական գաղտնիքի դասակարգման նոր դրոշմագրեր: Սակայն, թե ո՞ր դրոշմագրերը որպես ծառայողական գաղտնիք պետք է ներառվեն, նախարարությունը որևէ տեղեկատվություն չի տրամադրել:

ՀՀ արդարադատության նախարարությունը որպես գործողության համակարգող մարմին հայտել է, որ 2016թ. մշակվել և 2017թ. հունվարի 13-ին ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կարգավորում է առևտրային գաղտնիքի հետ կապված հարաբերությունները: Բացի այդ, 2016 թվականին մշակվել է Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգ, որի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարությանը: Անձի՝ ինքն իր մասին տեղեկություն և հանրային նշանակության տեղեկություն ստանալու իրավունքների ապահովման շրջանակներում նախատեսվել է հստակեցնել տեղեկությունների դասակարգման չափանիշները (պետական, ծառայողական, առևտրային, անձնական գաղտնիք և այլն): Մասնավորապես, որպես չափանիշ առաջարկվում է վնասի թեստի (harm test) կիրառումը՝ պարզելու համար արդյոք տեղեկությունը չհրապարակելը տվյալ իրավիճակում ավելի մեծ վնաս կհասցնի հանրային շահին, քան հրապարակելը:

Այպիսով, թեև սույն գործողության կատարման ուղղությամբ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձեռնարկվել են որոշակի գործողություններ, այնուամենայնիվ դրանք ամբողջական չեն և չեն կարող համարվել բավարար տեղեկատվության

[37] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ 26-րդ կետի 4-րդ ենթակետում «2015 թ. երրորդ եռամսյակ» բառերը փոխարինվել են «2016 թ. երրորդ եռամսյակ» բառերով: http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

դասակարգման չափանիշները հստակեցնելու տեսանկյունից։ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագիծը առավել կենտրոնացած է առևտրային գաղտնիքի հետ կապված հարաբերությունների կարգավորման վրա, իսկ նախարարության կողմից վկայակոչված հայեցակարգի մշակումը անշուշտ ողջունելի է, սակայն որպես կանոն հայեցակարգով տրվում են կարգավորման ենթակա հարաբերությունների բնութագիրը, ապագա իրավական ակտի նպատակները և այլն։

Հաշվի առնելով վերոշարադրյալը գործողությունը գնահատվում է մեծամասամբ չիրականացված։

3. Գործողություն՝ (27) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման կատարելագործման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների համար կազմակերպել դասընթացներ և բարձրացնել իրազեկվածությունը՝ միջազգային չափանիշներին և պահանջներին համապատասխան
Ակնկալվող արդյունքը՝ դասընթացների պարբերաբար կազմակերպում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Սույն գործողության կատարումը նախատեսված է Ծրագրի ողջ ընթացքում՝ 2014-2016թթ։

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը հայտնել է, որ համայնքային ծառայողների վերապատրաստմանը զուգահեռ իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների աշխատակիցների վերապատրաստում։ Վերապատրաստման մոդուլները այլ թեմաներից բացի ներառում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման կատարելագործմանն ուղղված թեմաներ, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովման իրավական հիմքերին և մեխանիզմներին, տեղեկատվության ազատությանը, տեղեկատվություն ստանալու և տրամադրելու եղանակներին, ինչպես նաև տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերին վերաբերող թեմաներ: Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2014թ. վերապատրաստվել են 1240 համայնքային ծառայողներ և 763 համայնքի ղեկավարներ և ավագանու անդամներ, 2015թ.՝ 780 համայնքային ծառայող, 560 համայնքների ղեկավարներ և ավագանիների անդամներ, ինչպես նաև մարզպետարանների 75 աշխատակիցներ: 2016թ. իրականացման

ենթակա վերապատրաստումների նախարարության կողմից տեղեկատվություն չի տրամադրվել:

Միևնույն ժամանակ, նախարարության կողմից նշված գործողության կատարման շրջանակներում կազմակերպված դասընթացների արդյունքների գնահատման մասին տեղեկատվություն չի տրամադրվել: Ուստի պարզ չէ, թե ինչ արդյունքներ են ունեցել և ինչ ազդեցություն կարող էին ունենալ նշված դասընթացները:

Հաշվի առնելով վերոշարադրյալը գործողությունը գնահատվում է մեծամասամբ իրականացված:

4. Գործողություն՝ (28) Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող մարմինների ընտրության և կազմավորման կարգի համապատասխանեցումը միջազգային և առաջին հերթին՝ եվրոպական պահանջներին
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (համաձայնությամբ), ՀՀ արդարադատության նախարարություն

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը չի տրամադրել ըստ էության տեղեկատվություն սույն գործողության իրականացման վերաբերյալ: Հանձնաժողովը հայտնել է Հանձնաժողովի անդամների ընտրության և նշանակման կարգի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկացրել այն մասին, որ Հանձնաժողովը օրենսդրական նախաձեռնության իրավունք չունի:

Այսպիսով սույն գործողության իրականացման ուղղությամբ որևէ միջոցառում չի իրականացվել: Թեև Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը իր ներկայացրած տեղեկատվությամբ նաև հիմնավորվում է ներկայացրել այն մասին, որ Օրենքը սահմանում է հստակ պահանջներ, որոնք համապատասխանում են միջազգային և եվրոպական պահանջներին, այնուամենայնիվ սույն խնդիրը պահանջում է առավել խորը վերլուծություն:

Ի սկզբանե սույն գործողության կատարման ժամկետն էր 2014 թ. երկրորդ եռամսյակը, սակայն ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015 թ. թիվ 1302-Ն որոշմամբ այն երկարաձգվեց մինչև 2016 թ. երրորդ եռամյակ,[38] իսկ 2016 թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ կառավարության թիվ

[38] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ ծրագրի 28-րդ կետի 4-րդ սյունակում «2014 թ. երկրորդ եռամսյակ» բառերը փոխարինվել է «2016 թ. երրորդ եռամսյակ» բառերով
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

1368-Ն որոշմամբ այն ուժը կորցրած ճանաչվեց այն պատճառաբանությամբ, որ 2015թ. դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 210-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ի թիվս այլ օրենքների «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը համապատասխանեցվում է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը և հետևաբար, Սահմանադրական նորմի գործողության պայմաններում անհրաժեշտ է դրան համապատասխանեցնել գործող ենթաօրենսդրական իրավակարգավորումը:[39]

Միևնույն ժամանակ, պետք է փաստել, որ ի սկզբանե սույն գործողությունը ուներ միայն մեկ պատասխանատու մարմին, սակայն ՀՀ կառավարության վերոնշյալ՝12 նոյեմբերի 2015 թ. 1302-Ն որոշմամբ որպես պատասխանատու մարմին սահմանվեց նաև ՀՀ Արդարադատության նախախարությունը,[40] որի կողմից որևէ միջոցառում չի ձեռնարկվել:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, գործողությունը գնահատվում է չիրականացված:

5. Գործողություն՝ (29) Խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման չափանիշների միջև առկա սահմանազատման միջազգայնորեն ընդունված չափանիշների վերաբերյալ պետական ծառայողների և լրատվանիջոցների վերապատրաստման անցկացում՝ հաշվի առնելով Յոհանեսբուրգյան սկզբունքներն ազգային անվտանգության, արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության վերաբերյալ
Ակնկալվող արդյունքը՝ պարբերական դասընթացների կազմակերպում և իրականացում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ՀՀ արդարադատության ակադեմիա,[41] ՀՀ արդարադատության նախարարություն, ԱԱԾ, ՄԻՊ (համաձայնությամբ)

Սույն գործողությունը դասվում է Ծրագրով սահմանված այն միջոցառումների շարքին, որի իրականացումը կրում է պարբերական բնույթ, ըստ այդմ տեղեկատվությունը հավաքագրվել է մի քանի փուլով (ըստ եռամսյակների):

Միջոցառման կատարման համար պատասխանատու մարմիններից ՀՀ ոստիկանության կողմից՝ որպես սույն գործողության իրականացման ուղղված միջոցառում է ներկայացվել Ոստիկանություն-ՋԼՄ-ներ համագործակցությունը խոսքի ազատության և

[39] ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2016 թ. թիվ 1368-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Ծրագրի 28-րդ կետը http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=110570

[40] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ Ծրագրի 28-րդ կետի 5-րդ սյունակի երկրորդ տողը լրացվել է «ՀՀ արդարադատության նախարարություն» բառերով: http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

[41] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ 29-րդ կետի 5-րդ սյունակում «ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)» բառերը փոխարինվել է «ՀՀ արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ» բառերով:

ազգային անվտանգության ապահովման չափանիշների միջև առկա սահմանազատման միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով կազմակերպված երկօրյա կլոր-սեղան քննարկումը՝ ՀՀ ոստիկանության հասարակության հետ կապի և լրատվության վարչության, շուրջ երկու տասնյակ լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու փորձագետների մասնակցությամբ: ՀՀ ոստիկանության ծառայողների համար իրականացված լրացուցիչ դասընթացների և վերապատրաստումների վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել: Ինչ վերաբերում է հաջորդ ժամանակագատվածի համար հայցվող տեղեկատվությանը, ապա ՀՀ ոստիկանությունը որևէ տեղեկատվություն չի տրամադրել՝ ծրագրի կատարման ժամկետը ավարտված լինելու պատճառաբանությամբ:

ԱԱԾ-ն հայտնել է, որ նշված հարցի շուրջ պարբերաբար կազմակերպվել և իրականացվել են վերապատրաստման դասընթացներ: Իրականացված դասընթացների քանակի, ժամկետի և մասնակիցների թվի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել՝ ծառայողական գաղտնիք պարունակելու պատճառաբանությամբ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ 2015թ. մարտին Կազմակերպությունը տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու հայցադիմում է ներկայացվել ընդդեմ ԱԱԾ, որը թեև Դատարանի կողմից չի բավարարվել, սակայն հայցադիմումում ի թիվս այլնի վիճարկվել է իրականացված դասընթացների քանակի, ժամկետի և ընդհանուր առմամբ մասնակիցների թիվը գաղտնի լինելու հանգամանքը: Արդյունքում վերջին եռամսյակի համար հայցվող տեղեկատվությամբ տրամադրվել է իրականացված դասընթացների ժամկետի և քանակի վերաբերյալ տեղեկատվություն՝ 2016 թ. երրորդ և չորրորդ եռամսյակներում ընդհանուր 26 դասընթաց:

ՄԻՊ-ը սույն գործողության համար պատասխանատու մարմին է համաձայնության պայմանով, ըստ վերջինիս կողմից տրամադրած տեղեկատվության, վերապատրաստումների կազմակերպման ուղղությամբ չեն նախաձեռնվել համապատասխան քայլեր պատասխանատու գերատեսչությունների կողմից, և հետևաբար, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները չեն հրավիրվել մասնակցելու պարբերական դասընթացների իրականացմանը:

ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվում են մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթացներ, որի ընթացքում անդրադարձ է կատարվում նաև Յոհանեսբուրգյան սկզբունքներին: 2014-2016թ. վերապատրաստումների ընթացքում մարդու իրավունքներ դասընթացին մասնակցել են՝ քրեակատարողական ծառայողներ՝ 1618 մասնակից, դատական ակտերի հարկադիր ծառայությունն ապահովող ծառայողներ՝ 120 մասնակից, քաղաքացիական ծառայողներ՝ 171 մասնակից:

Սույն գործողության վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու արդյունքում պարզ դարձավ, որ պետական մարմինների կողմից գործողության կատարման ժամկետը միատեսակ չի ընկալվում: Այնուամենայնիվ սույն միջոցառման կատարման ժամկետի ձևակերպումը (այդ թվում՝ Ծրագրով սահմանված նմանատիպ այլ միջոցառումների) և այլ պատասխանատու մարմինների կողմից ժամկետի ավարտի վերաբերյալ առարկությունների բացակայությունը թույլ է տալիս պնդել, որ այն նախատեսված էր իրականացնել Ծրագրի ողջ ընթացքում: ՀՀ արդարադատության ակադեմիան որպես սույն գործողության համար պատասխանատու է ճանաչվել 2015թ. նոյեմբերից և որևէ տեղեկատվություն չի տրամադրել: Որևէ պատասխանատու մարմին տեղեկատվություն չի տրամադրել իրականացված վերապատրաստումների ազդեցության գնահատման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ ոստիկանության, ՀՀ արդարադատության նախարարության և ԱԱԾ-ի կողմից գործողության կատարումը գնահատվում է կիսով չափ իրականացված, ՀՀ ՄԻՊ-ի և ՀՀ արդարադատության ակադեմիայի կողմից՝ չիրականացված: Ընդհանուր առմամբ Ծրագրի ողջ ընթացքի տեսանկյունից գործողության կատարումը գնահատվում է մեծամասամբ չիրականացված:

6. Գործողություն՝ (30) Իրավապահ մարմինների և համայնքային ծառայողների համար կազմակերպել շարունակական վերապատրաստումներ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան կանոնակարգերի դրույթների պրակտիկ կիրառման վերաբերյալ
Ակնկալվող արդյունքը՝ պարբերական դասընթացների կազմակերպում և իրականացում, ուսումնամեթոդական ձեռնարկների և նյութերի տպագրում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ՀՀ ԿԱ ԱԱԾ, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Սույն գործողության կատարումը կրում է պարբերական բնույթ:

ՀՀ ոստիկանության կողմից տեղեկատվություն տրամադրվել է միայն 2014թ. իրականացված վերապատրաստումների վերաբերյալ, որի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների, այդ թվում հասարարական կարգի պահպանության ոլորտում գործունեություն իրականացնող ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացի շրջանակներում նշված ծառայողները ուսումնասիրում են «Հավաքների

ազատության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև նշված օրենքից բխող, ՀՀ ոստիկանության կողմից ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ նախապատրաստված՝ «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման», «Հասարակական կարգը պահպանելիս և հասարակական անվտանգությունն ապահովելիս բանակցություններ վարելու վերաբերյալ» ուղեցույցները: Նշված օրենքի և ուղեցույցների դրույթները պարբերաբար դասավանդվում են վերապատրաստող ծառայողներին, ինչպես նաև առավել տպավորիչ լինելու համար ամրապնդվում են պրակտիկ պարապմունքների ընթացքում: Ինչ վերաբերում է 2015թ. և 2016թ. իրականացված վերապատրաստումներին, ապա տեղեկատվություն չի տրամադրվել՝ գործողության կատարման ժամկետն ավարտված լինելու կապակցությամբ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է, որ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան կանոնակարգերի դրույթների պրակտիկ կիրառման վերաբերյալ պարբերաբար իրականացվել են դասընթացներ: ԱԱԾ կողմից իրականացված դասընթացների ժամանակի, քանակի, վերապատրաստված ծառայողների քանակի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ինչ վերաբերում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը, որը նույնպես հանդիսանում է գործողության համակատարող, ապա որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, սույն գործողության կատարումը գնահատվում է մեծամասաբ չիրականացված:

7. Գործողություն՝ (31) Հասարակական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված հասարակական կազմակերպությունների ֆինանսական հաշվետվության թափանցիկության բարձրացմանը, պետական մարմինների հետ համագործակցության խթանմանը
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարության կայքէջ

2014 թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հասարակական կազմակերպությունների մասի» ՀՀ օրենքի նախագիծը: Այն հանրային քննարկման է դրվել

ՀՀ արդարադատության նախարարության կայքէջում և ենթարվել մի շարք լրամշակումների: «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի մշակման ընթացքում նաև իրականացվել են մի շարք հանրային և աշխատանքային քննարկումներ ՀՀ արդարադատության նախարարության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, այդ թվում ՀՀ արդարադատության նախարարությանը կից հասարակական խորհրդի շրջանակներում: [42] Նշված քննարկումների ժամանակ Կազմակերպության կողմից ներկայացվել են մի շարք առաջարկություններ:

Հետևելով նախագծի ընդունման ընթացքին, 2016թ. սեպտեմբերին նախագիծը ընգրկվել է ԱԺ նստաշրջանի և այնուհետև քառօրյա նիստերի օրակարգ: 2016թ. դեկտեմբերի 16-ին այն ընդունվել է երրորդ ընթեցմամբ և ամբողջությամբ: Օրենքը պարունակում է կարգավորումներ՝ ուղղված հասարարական կազմակերպությունների ֆինանսական հաշվետվության թափանցիկության ապահովմանը՝ հստակ տարբերակում դնելով պետական և/կամ համայնքային բյուջից և միջազգային աղբյուրներից սնվող կազմակերպությունների միջև:

Ելնելով վերոգրայից, գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

8. Գործողություն՝ (32) Ապահովել ՀՀ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև համագործակցության զարգացումը՝ նախատեսելով վերջիններիս միջև տարեկան առնվազն մեկ անգամ պարտադիր հանդիպում՝ իրենց իրավասությանն առնչվող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված երկուստեք առաջարկների քննարկման համար
Ակնկալվող արդյունքը՝ հարցի համապատասխան իրավական կարգավորում, հանդիպումների պարբերաբար իրականացում և դրանց արձանագրությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ հանրապետական գործադիր մարմիններ

Սույն գործողության կատարման ժամկետն է 2014թ. չորրորդ եռամսյակից-պարբերաբար: 2014-15թթ համար ՀՀ կառավարություն ուղարկված հարցումը վերահասցեագրվել է ՀՀ արդարադատության նախարարություն: ՀՀ արդարադատության նախարարության կողմից տեղեկատվություն է տրամադրվել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման վերաբերյալ, ՀՀ

[42] Տե՛ս նաև՝ Առաջարկություններ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ http://hcav.am/events/09-04-2015-3/

արդարադատության նախարարին կից հանրային խորհրդի կազմավորման և Հանրային խորհրդի շրջանակներում կազմակերպված օրենսդրական նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների մասին: Իսկ 2016թ. համար ՀՀ կառավարություն ուղարկված հարցումը վերահասցեագրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, որը տեղեկատվություն է տրամադրել 2014-2016թթ ընթացքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ ոլորտի հասարակական կազմակերպությունների, միությունների, ասոցիացիաների հետ կազմակերպված հանդիպումների, քննարկումների վերաբերյալ:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ գործողության կատարման համապատասխան ժամանակահատվածներում որևէ այլ մարմնի կողմից տեղեկատվություն չի տրամադրվել: Իսկ գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը փաստում է, որ 2014 թ. և 2015 թ. իրականացված միջոցառումները կարող էին տրամադրվել նաև նախկինում, սակայն փաստացի չեն տրամադրվել:

Թեև ՀՀ արդարադատության և գյուղատնտեսության նախարարությունների կողմից տրամադրվել է գործողության շրջանակներում իրականացված միաջոցառումների վերաբերյալ որոշ տեղեկատվություն, այնուամենայնիվ արձանագրում ենք, որ քննարկվող ծրագրային գործողությունը նախևառաջ ձևակերպված չէ բավարար հստակությամբ և պարզ չէ, թե որ մարմինն է իրականում պատասխանատու գործողության կատարման համար: Եվ, եթե ի սկզբանե նախատեսվում էր բոլոր մարմինների մասնակցությունը սույն գործողության իրականացմանը, ապա ինչու համապատասխան տեղեկատվություն չի տրամադրվել:

Սույն գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ չիրականացված:

Այսպիսով, Ազատ արտահայտման, հավաքների և միավորումների ազատության իրավունքի ոլորտում նախատեսված էր իրականացնել ընդհանուր առմամբ 8 գործողություն, որից 4-ը գնահատվել է մեծամասամբ չիրականացված, 2-ը՝ չիրականացված, մեկ գործողություն գնահատվել է ամբողջությամբ իրականացված և ևս մեկ գործողություն՝ մեծամասամբ իրականացված:

VIII. Խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք (13)

1. Գործողություն՝ (33) ՀՀ օրենսդրությամբ նախատեսել խոշտանգումների զոհերին խոշտանգման հետևանքով պատճառված վնասի արդար և համաչափ փոխհատուցման և ռեաբիլիտացիայի կարգավորումը՝ համաձայն Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի 14-րդ հոդվածի
Ակնկալվող արդյունքը՝ անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարաատության նախարարություն

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, 2015թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ ԱԺ ընդունել է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով եվրոպական չափանիշներին համապատասխանող կարգավորումներ սահմանելով ընդլայնվում է քաղաքացիների հնարավորությունները պահանջելու վնասների նյութական կամ գումարային հատուցում բոլոր այն դեպքերում, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից նրանց իրավունքների խախտմամբ պատճառվել է ոչ նյութական կամ, այլ կերպ ասած, բարոյական վնաս: Օրենքի կարևորությունը պայմանավորված է նաև ՄԻԵԴ կողմից Հայաստանի վերաբերյալ կայացված վճիռների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թ. նոյեմբերի 5-ի ՍԴՈ-1121 որոշման պահանջների լիարժեք կատարման անհրաժեշտությամբ:

Ինչ վերաբերում է ռեաբիլիտացիայի ապահովմանը, ապա ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով օրենսդրական կարգավորումներ են նախատեսվում խոշտանգումների զոհերին խոշտանգման հետևանքով պատճառված վնասի արդար և համաչափ փոխհատուցման և ռեաբիլիտացիայի համար: Նախագծերը 2016թ. դեկտեմբերի 8-ին արժանացել են ՀՀ կառավարության դրական եզրակացությանը և ընդգրկվել ՀՀ Ազգային ժողովի 2016թ.

դեկտեմբերի 13-ի արտահերթ նիստի օրակարգում: 2016թ. դեկտեմբերի 16-ին օրենսդրական փաթեթը ընդունվել է ԱԺ-ի կողմից[43]:

Հարկ է նշել, որ բացի վերոգրյալ օրենսդրական փաթեթների, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվել է «Խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական ծառայություններից օգտվելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:[44]

Այսպիսով, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

2. Գործողություն՝ (34) Ուսումնասիրել ազատազրկման վայրերում խոշտանգումների և վատ վերբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացքն ապահովող անկախ մեխանիզմի ստեղծման միջազգային փորձը և ներկայացնել առաջարկություններ
Ակնկալվող արդյունքը՝ ուսումնասիրությունների արդյունքում կազմված առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարաատության նախարարություն

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կոցմից տրամադրված տեղեկատվության՝ ուսումնասիրվել է ազատազրկման վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացքն ապահովող անկախ մեխանիզմի ստեղծման միջազգային փորձը: Ուսումնասիրության արդյունքում մշակվել է Ազատազրկման վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացքն ապահովող անկախ մեխանիզմի ստեղծման միջազգային իրավական չափանիշների և միջազգային փորձի վերաբերյալ ուսումնասիրությունը, որի վերջնական տեքստը 2015թ. դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:

ՀՀ ԱՆ կողմից տրամադրվել է իրականացված ուսումնասիրության օրինակը, որը պարունակում է տեղեկատվություն Ֆրանսիայի, Բելգիայի, Հյուսիսային Իռլանդիայի, Գերմանիայի, Լատվիայի, Մոլդովայի, Բելառուսի, Ուկրաինայի ազատազրկման վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ բողոքների քննման մեխանիզմների վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է

[43] Տե՛ս http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=42229
[44] Տե՛ս https://www.e-draft.am/projects/168/about

օրենսդրորեն ամրագրել նաև ազատությունից զրկված անձի՝ ներկայացված դիմումների և բողոքների կապակցությամբ պատճառաբանված որոշում ստանալու իրավունքը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների դատական կարգով բողոքարկման իրավունքը: Ինչ վերաբերում է բողոքների քննության անկախ մարմնի ստեղծմանը, ապա առաջարկվել է ապահովել դրա անկախությունը և տվյալ մարմնի՝ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող որոշում ընդունելու, խոշտանգումների և վատ վերաբերմունքի մյուս դեպքերում առանց համապատասխան բողոքի առկայության սեփական նախաձեռնությամբ քննություն իրականացնելու իրավազորությունը և այլն:

Թեև Նախարարության կողմից իրականացվել է համապատասխան հարցի ուսումնասիրություն և մշակվել են առաջարկություններ, այնուամենայնիվ տեղեկատվություն չի տրամադրվել ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունման վերաբերյալ:

Այսպիսով, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

3. Գործողություն՝ (35) Ուժեղացնել զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների արգելման և վերացման համար ձեռնարկվող միջոցները և ապահովել ոչ կանոնակարգային հարաբերությունների և զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան բոլոր դեպքերի արագ, անաչառ և մանրամասն հետաքննություն
Ակնկալվող արդյունքը՝ զինված ուժերում արտականոնադրային հարաբերությունների վերացում, զինված ուժերում կանխարգելիչ միջոցառումների իրականացում, վերապատրաստումներ՝ ուղղված խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքի մասին տեղեկացվածության բարձրացմանը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի կատարումն սույն գործողության տեղեկատվություն է տրամադրել ինչպես կանխարգելիչ, այնպես էլ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Այսպես, ՀՀ ՊՆ ՌՈ տարածքային բաժինների պետերի անմիջական մասնակցությամբ, հրամանատարների հետ համատեղ անցկացվել են անմիջական հանդիպումներ կարգազանց զինծառայողների հետ, որոնց մասնակցել են նաև ծնողներ, պատերազմի վետերաններ: Կազմակերպվել են արտագնա դատական նիստեր, իրականացվել են շարքի առաջ ձերբակալություններ և այլն: «Զինվորական կարգապահության և իրավակարգի ամրապնդման, իրավիճակի գնահատման, արատավոր երևույթների, իրավախախտումների և պատահարների կանխարգելման միջոցառումների»,

«Իրավախախտումների դեպքերի, պատահարների կանխարգելման' զորամասի հրամանատարության և ռազմական ոստիկանության կայազորային բաժնի (բաժանմունքի) համատեղ իրականացվող միջոցառումների» պլանների շրջանակում, ինչպես նաև արտապլանային կարգով՝ սահմանված ժամկետներում ներկայացվել են ու բացատրվել են ոչ կանոնագրքային հարաբերությունների, վիրավորանք հասցնելու, պատիվն ու արժանապատվությունը ոտնահարելու բացասական հետևանքները, վերլուծվել են ՀՀ զինված ուժերում արձանագրված ոչ կանոնագրքային հարաբերությունների, բռնության կիրառման և վիրավորանք հասցնելու դեպքերի պատճառահետևանքային կապերը, ծառայողական քննությունների անցկացմամբ բացահայտվել ղրանց նպաստող պատճառներն ու պայմանները և կրկնությունը բացառելու նպատակով կոնկրետ հանձնարարականներ ուղարկվել զորամասեր, որտեղ քննարկվել, ծանոթացվել են անձնակազմին՝ ամրագրելով զինծառայողների անձնական ստորագրությամբ:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համագործակցության ծրագրի շրջանակում՝ զորամասերում սոցիոլոգների, իրավաբանների և հոգեբանների փորձագիտական խմբերի կողմից անցկացվել են թրեյնինգներ՝ նորակոչիկների սոցիալ-հոգեբանական և իրավական հարմարման, ծառայության սթրեսածին գործոնների հաղթահարման և կոնֆլիտների կանխարգելման թեմայով: Նշված ծրագրի շրջանակներում արծարծվել են նաև խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ հարցերը, որի թիրախային խումբ են հանդիսանում ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության կարգապահական վաշտերի անձնակազմը, սպայակազմը, նորակոչիկները (մոտ 900 մասնակից), ինչպես նաև նախազորակոչային տարիքի դպրոցականները: Խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի մասով՝ 2016թ. հաշվետու ժամանակահատվածում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ անցկացվել են «Մարդու իրավունքները զինված ուժերում» թեմայով դասընթացներ (ՌՈ և ԱՀՏԱ ուղղությամբ), ընդհանուր թվով՝ մոտ 70 զինծառայողների մասնակցությամբ: Դասընթացներին մասնակցել են Ռազմական ոստիկանության ներկայացուցիչներ, օպերլիազորներ, հետաքննիչներ,կարգապահական վաշտերի անձնակազմի անդամներ, կադրային հարցերի պատասխանատուներ և այլն:

Նախարարությունը նաև հայտնել է, որ ընդհանուր կարգով մոնիթորինգ է իրականացվել դասընթացներին մասնակցության ակտիվությունը և հետաքրքրվածությունը պարզելու ուղղությամբ, որի արդյունքում գրանցվել է դրական դինամիկա: Բացի այդ, միջազգային գործընկերների հետ համատեղ դիտարկվում է նմանօրինակ դասընթացների ազդեցության գնահատման մեթոդիկայի մշակման հնարավորությունը:

ՀՀ Զինված ուժերում և ԷՂ պաշտպանության բանակում մահացությունների դեպքերի մասին Կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրությունները ևս մեկ անգամ փաստում են խնդրի հրատապության մասին: Բավարար է միայն նշել, որ 2014 թ. 42

միջադեպի արդյունքում մահացել է 46 զինծառայող, որոնցից 4-ը՝ սպանության, 3-ը՝ ինքնասպանության պատճառով: 2015թ. տեղի է ունեցել 58 միջադեպ, որի արդյունքում մահացել է 76 զինծառայող, որոնցից 3-ը՝ սպանության , 6-ը՝ ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու պատճառով: 2016 թ. մահացել է 162 զինծառայող, որոնցից 13-ը՝ սպանության, 13-ը ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու պատճառով: Պետք է նշել, որ սպանությունների, ինքնասպանությունների (այդ թվում՝ ինքնասպանության հասցնելու) դեպքերի դրդրապատճառները կականոնադրային հարաբերությունների խախտումն է:[45]

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումները շատ կարևոր են արտականոնադրային հարաբերությունների վերացման, զինծառայողների իրավագիտակցության բարձրացման գործում: Նմանատիպ միջոցառումների իրականացումը չպետք է պայմանավորված լինի միայն ռազմավարական փաստաթղթերով, դրանք պետք է կրեն շարունակական բնույթ:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

4. Գործողություն՝ (36) Ուսումնասիրել հարցաքննությունների տեսաձայնագրման առկա միջազգային փորձը և ներկայացնել առաջարկություն տեսաձայնագրման համակարգը Հայաստանի Հանրապետությունում ներդնելու նպատակահարմարության վերաբերյալ
Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)[46], ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ), ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն

Սույն գործողությունը ի սկզբանե նախատեսված էր իրականացնել 2014թ. երրորդ եռամսյակում, սակայն, ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ այն երկարաձգվեց մինչև 2016 թ. երրորդ եռամսյակ[47]:

[45] Տե՛ս ՀՀ Զինված ուժերում և ԼՂ պաշտպանության բանակում մահացությունների դեպքերի մասին ՀՔԱՎ կողմից իրականացված ուսումնասիրությունները
2014թ.՝ http://hcav.am/publications/09-01-2015/
2015թ.՝ http://hcav.am/publications/%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-09-01-2016/
2016թ. ՝ http://hcav.am/publications/16-01-2016-06/

[46] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ 36-րդ կետում 5-րդ այունակում «ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն» բառերը փոխարինել «ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)» բառերով:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

Ըստ ՀՀ ԿԱ ԱԱԾ կողմից տրամադրված տեղեկատվության՝ ուսումնասիրելով հարցաքննությունների տեսաձայնագրման առկա միջազգային փորձը և տեսաձայնագրման համակարգի ներդրման վերաբերյալ առարկություն չունենալու մասին դիրքորոշում է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն:

ՀՀ դատախազությունը և ՀՀ քննչական կոմիտեն որպես համաձայնության պայմանով գործողության կատարման պատասխանատու մարմիններ տրամադրել են քննարկող հարցի վերաբերյալ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Խորվաթիայի, Սերբիայի և այլ երկրների փորձի վերաբերյալ տեղեկատվություն: ՀՀ գլխավոր դատախազությունը հավելել է, որ հարցաքննությունների տեսաձայնագրման հարցը մասնակի կարգավորում է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում: Քրեական դատավարության իրավունքի զարգացման հայեցակարգին համապատասխանությունն ապահովելու համար ՀՀ դատախազության կողմից առաջարկվել է հարցը քննարկել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակելու համար ստեղծված աշխատանքային խմբի հետ՝ նախագծի հետագա կատարելագործման շրջանակներում:

ՀՀ քննչական կոմիտեն իր ուսումնասիրության մեջ արձանագրում է, որ հարցաքննությունների տեսաձայնագրման ինստիտուտի ներդրումը պահանջվում է նաև Հայաստանի մասնակցությամբ միջազգային կազմակերպության' Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի զեկույցներում, այդ թվում՝ ՀՀ-ի վերաբերյալ 2010թ. զեկույցում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմին է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության դրական դիրքորոշումը՝ նշված համակարգը ՀՀ-ում ներդնելու անհրաժեշտության վերաբերյալ:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրվել է նույնաբովանդակ տեղեկատվություն միջազգային փորձի ուսումնասիրության վերաբերյալ և հավելել, որ հարցաքննությունների տեսաձայնագրման համակարգը ՀՀ-ում ներդնելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկությունը 2015 թվականի հունվարի 21-ին ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

[47] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ 36-րդ կետում 4-րդ այունակում «2014» թիվը փոխարինվել է «2016» թվով: http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

5. Գործողություն՝ (37) Օրենսդրորեն երաշխավորել, որ այն բոլոր դեպքերում, երբ անձը հիմնավոր կերպով պնդում է, որ խոստովանությունն ստացվել է խոշտանգումների միջոցով, ապահովել արդյունավետ քննություն այդ պնդումների վերաբերյալ՝ նախատեսելով դատարանում վարույթի կասեցման հնարավորությունը՝ մինչև այդ հարցով քննության ավարտը
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված նախնական տեղեկատվության՝ հարցի կարգավորման նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխություններ են նախապատրաստվել ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում: ԵՄ-ՀՀ համագործակցության շրջանակներում իրականացվում է «Աջակցություն քրեական արդարադատությանը և դաժան, անմարդկային վերաբերմունքի դեմ պայքարին» ծրագիրը, որի նպատակներից մեկն էլ աջակցությունն է քրեական օրենսդրության բարեփոխումներին: Նշված բարեփոխումների շրջանակում համապատասխան փոփոխություններ են մշակվել նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում ներառելու համար և 2016 թ. մարտին նախատեսվում է հարցը քննարկել Եվրոպական դատարանի և ԵՄ Նախարարության կոմիտեի քարտուղարության մասնագետների մասնակցությամբ:

Հարկ է նշել, որ սույն գործողության կատարման վերջնաժամկետն էր 2015 թ. չորրորդ եռամսյակը, սակայն գործողության կատարումը նշված ժամանակահատվածում գտնվում էր դեռևս քննարկման մակարդակում:

Ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվության մեջ Արդարադատության նախարարությունը նշում է, որ գործողության իրագործումը հանգեցնելու է գործնական լուրջ խնդիրների, ցուցմունքները խոշտանգմամբ կորզելու յուրաքանչյուր հայտարարության դեպքում դատական քննության կասեցման հնարավորությունն առաջին հերթին վտանգելու է անազատության մեջ գտնվող ամբաստանյալի՝ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անորոշ ժամկետով կասեցված վարույթի պարագայում վերջինս շարունակելու է մնալ անազատության մեջ: Բացի այդ, առաջարկվող փոփոխության արդյունքում կվտանգվեն քրեական գործերը ողջամիտ ժամկետում քննելու և լուծելու ՀՀ Սահմանադրության 63-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքները: Ավելին, նշված կետի իրացման պայմաններում ենթադրվում է, որ դատական քննությունը պետք է կասեցված մնա այնքան ժամանակ, քանի դեռ խոշտանգման դեպքի առթիվ իրականացվող

քննությամբ չի կայացվել գործն ըստ էության լուծող դատական ակտ (գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտ), ինչն իր հերթին ենթադրում է, որ սկզբնական գործի դատական քննությունն անորոշ ժամկետով մնալու է կասեցված: Նման կարգավորում նախատեսելու պարագայում կվտանգվեն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետները:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

6. Գործողություն՝ (38) Կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, համաձայն որոնց խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեպքերում, դրանց հնարավոր առնչություն ունեցող բոլոր պաշտոնյաների լիազորությունները կկասեցվեն այնքան ժամանակ, քանի դեռ ընթանում է քննությունը
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ ի կատարումն սույն գործողության՝ 2015 թ. հունիսի 9-ին ՀՀ ԱԺ-ն ընդունել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքները: ՀՀ ԱՆ այս օրենսդրական նախաձեռնության արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգման հանցակազմը լիովին համապատասխանեցվեց միջազգային իրավական պահանջներին: Բացի այդ, նախագծերի փաթեթի կարգավորումներով հստակեցվեցին խոշտանգման հանցակազմի և դրա հետ առնչություն ունեցող այլ հանցակազմերի հարաբերակցությունը, ինչպես նաև մասնավոր սուբյեկտների միջև խոշտանգման դրսևորումները դարձան հանրային հետապնդման առարկա:

Ինչ վերաբերում է վատ վերաբերմունքի դեպքերով քննության իրականացման ընթացքում դրանց հնարավոր առնչություն ունեցող բոլոր պաշտոնյաների լիազորությունների կասեցման վերաբերյալ համապատասխան օրենսդրական փոփոխություններին, ապա դրանք չեն մշակվել, քանի որ Արդարադատության նախարարությունը նշված կետի իրագործումը աննպատակահարմար է համարում: Մասնավորապես նշվում է, որ պրակտիկայում շատ է պատահում, երբ թե՛ մինչդատական

վարույթում, թե՛ դատական քննության փուլում մեղադրյալը (ամբաստանյալը) հայտարարում է իր նկատմամբ հետաքննության մարմնի կամ քննիչի կողմից գործադրված բռնության մասին: Արդյունքում կստեղծվի մի իրավիճակ, երբ գործը քննող հետաքննության մարմնի աշխատակցի կամ քննիչի լիազորություններն անորոշ ժամանակով կկասեցվեն, և ինչպես տվյալ, այնպես էլ մնացած բոլոր գործերը, որոնց քանակը կարող է հասնել ընդհուպ մի քանի տասնյակի, նախաքննություն իրականացնելու համար կհանձնվեն այլ անձանց: Ընդ որում, նման կարգավորումների նախատեսման պայմաններում չի բացառվում նաև հետաքննության մարմնի աշխատակիցների և քննիչների ծանրաբեռնվածության անհավասարաչափ բաշխում, ինչը վտանգելու է յուրաքանչյուր գործով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու հնարավորությունը:

Սույն գործողությունը գնահատվել է որպես չիրականացված:

7. Գործողություն՝ (39) Քննարկել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի վավերացման նպատակահարմարության հարցը և ներկայացնել առաջարկություն
Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Ինչպես հայտնել է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝ ԵԽ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան ՀՀ կողմից ստորագրելու գործընթացի առնչությամբ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը կազմակերպել է հանդիպում շահագրգիռ պետական մարմինների և կազմակերպությունների հետ, որի ընթացքում քննարկվել են փաստաթղթի ստորագրման առնչությամբ ՀՀ կողմից ձեռնարկվելիք քայլերը: Հանդիպման հաշվետությունը ներակայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարարությունը որևէ տեղեկատվություն չի տրամադրել, պատճառաբանելով, որ հանդիսանում է գործողության համակատարող:

Պետք է նշել, որ թեև նախարարությունը տրամադրել է տեղեկատվություն կայացած քննարկման մասին, այնուամենայնիվ հարցի վերաբերյալ ըստ էության տեղեկատվություն չի տրամադրվել: Պարզ չէ, թե ինչ հետևության են հանգել շահագրգիռ կողմերը: Բացի այդ, Կազմակերպությանը չի տրամադրվել նաև քննարկման արդյունքում մշակված առաջարկության օրինակը:

Սույն գործողությունը գնահատվում է որպես մեծամասամբ չիրականացված:

8. Գործողություն՝ (40) Ընտանեկան բռնության դրսևորումների կանխարգելման և պատասխանատվության գործուն մեխանիզմների նախատեսում՝ միջազգային չափանիշներին համապատասխան
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության կոցմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ վարչապետի 2016թ. հունիսի 28-ի «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության» ՀՀ օրենքի նախագծի մշակման միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 567-Ա որոշմամբ ձևավորվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: 2016թ. հուլիսի 14-ին տեղի է ունեցել նշված աշխատանքային խմբի առաջին նիստը, որի շրջանակներում քննարկվել է օրենսդրության խնդիրներն ու նպատակները, օրենքի կարգավորման առարկան ու համակարգը, ինչպես նաև սահմանվել է ռառումնասիրության ենթակա հարցերի շրջանակ: 2016թ. նոյեմբերի 8-ի աշխատանքային խմբի կողմից մշակված «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության» ՀՀ օրենքի նախագիծը՝ հարակից օրենքների նախագծերի փաթեթի հետ միասին, ուղարկվել է համապատասխան շահագրգիռ մարմիններ՝ կարծիքի և բոլոր կարծիքները ստանալուց և ամփոփելուց հետո այն 2016թ. դեկտեմբերի 30-ին ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:

Սույն գործողության համակատարող է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որի կոցմից սույն գործողության կատարման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ելնելով վերոգրյալից սույն գործողությունը գնահատվում է որպես ամբողջությամբ իրականացված:

9. Գործողություն՝ (41) «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծում ներառել ընտանեկան բռնության զոհերի սոցիալական աջակցությանը վերաբերող դրույթներ
Ակնկալվող արդյունքը՝ նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել և 2014թ. նոյեմբերի 27-ին ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:

Կազմակերպության կողմից լրացուցիչ ուսումնասիրմամբ պարզվել է, որ 2014 թ. դեկտեմբերի 17-ին «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից, այն ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 1-ից: Օրենքի մեջ ներառվել է «ընտանեկան բռնություն» հասկացությունը, ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ որպես ժամանակավոր օթևան՝ մինչև 12 ամիս ժամկետով կացարանի տրամադրումը, որպես հիմնական սոցիալական ծառայություն:

Միևնույն ժամանակ նշված օրենքով ամրագրված ընտանեկան «բռնության հասկացության» սահմանումը ոչ ամբողջությամբ է համապատասխանում միջազգային չափորոշիչներին, մասնավորապես՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպական կոնվենցիայի դրույթներին: [48] Ըստ նշված Կոնվենցիայի 2 րդ հոդվածի «բ» կետի՝ «ընտանեկան բռնություն»՝ նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում: Ըստ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ ընտանեկան բռնություն է ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառում կամ տնտեսական միջոցներից զրկում: Ինչպես երևում է վերոշարադրյալ սահմանումից՝ ընտանեկան բռնության սահմանումը սահմանափակված է միայն ընտանիքի ներսում կիրառվող գործողություններով, իսկ ֆինանսական բռնությունը՝ միայն տնտեսական միջոցներից զրկելու գործողությամբ:

[48] Կոնվենցիան ՀՀ-ի կողմից ստորագրված և վավերացված չէ:

Թեև օրենքով տրված սահմանումը ոչ ամբողջությամբ է արտահայտում ընտանեկան բռնության՝ միջազգայնորեն ընդունված չափանիշները, այնուամենայնիվ գործողությունը կարելի է համարել ամբողջությամբ իրականացված:

10. Գործողություն՝ (42) Ուսուցանել իրավապահ մարմինների համապատասխան աշխատակիցներին, սոցիալական աշխատողներին, նախակրթական և կրթական հաստատությունների, ինչպես նաև բժշկական հաստատությունների անձնակազմերին ընտանեկան բռնության զոհերի բացահայտման, հաղորդակցման և պատշաճ խորհրդատվություն տրամադրելու հմտությունները
Ակնկալվող արդյունքը՝ ամենամյա վերապատրաստումների իրականացում, դասընթացներ՝ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության համակարգի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության բժշկական հաստատությունների համապատասխան աշխատողների համար Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ԱՍԻՆ, ԿԳՆ, ԱՌՆ

Սույն գործողության կատարման վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է ըստ եռամսյակների, քանի որ դրա կատարումը կրում է պարբերական բնույթ:

Ի կատարումն սույն գործողության ՀՀ ոստիկանության կողմից Ընտանեկան բռնության զոհերին աջակցություն ցուցաբերելու և վերջիններիս հետ աշխատանքներ տանելու ուղղությամբ 2014 թվականի սեպտեմբեր և նոյեմբեր ամսիների ընթացքում անց են կացվել վերապատրաստման 3 դասընթացներ, որոնց մասնակցել են ՀՀ ոստիկանության շտաբի, Քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի և հասարակական կարգի ապահովման վարչությունների թվով 31 ծառայողներ: Ինչ վերաբերում է 2015 և 2016 թթ անցկացված վերապատրաստումներին, ապա ՀՀ ոստիկանությունը որևէ տեղեկատվություն չի տրամադրել՝ գործողության կատարման ժամկետը ավարտված լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2015թ. հունիս ամիսին վերոնշյալ գործողության շրջանակներում վերապատրաստվել է 23 անձ, իսկ Իսկ 2015թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ Արարատի մարզի սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների շուրջ 20 սոցիալական աշխատողների (դեպք վարողների) համար

կազմակերպել է «Ընտանեկան բռնություն» թեմայով դասընթաց, որն ուղղված է ընտանեկան բռնության ենթակված անձանց տրամադրվող ծառայությունների արդյունավետ կազմակերպմանը, ինչպես նաև ինտեգրված սոցիալական ծառայողների գործառույթների հստակեցմանը և համապատասխան հմտությունների ձեռքբերմանը:

2016 թ երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի Ա567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից «Ընտանեկան բռնություն» թեմայով վերապատրաստվել են բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների 21 քաղաքացիական ծառայողներ:

Առողջապահության նախարարությունը հայտնել է, որ 2014թ. ընտանեկան բռնության զոհերի բացահայտման, հաղորդակցման և պատշաճ խորհրդատվություն տրամադրելու հմտություններ ուսուցանելու նպատակով կազմակերպվել են դասընթացներ, որի ընթացքում իրականացվել է բժշկական հաստատությունների թվով 50 աշխատողի ուսուցում: 2015թ. առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում կազմակերպվել են ընտանեկան բռության զոհերի բացահայտման, հաղորդակցման և պատշաճ խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ ամենամյա վերապատրաստման դասընթացներ: Իսկ 2016թ. նոյեմբեր ամսին Արմավիրի մարզի առաջնային բուժօգնություն տրամադրող 25 ընտանեկան բժիշկների, մանկաբարձ գինեկոլոգների համար կազմակերպվել է 3-օրյա ուսուցում՝ ընտանեկան բռնության դեպքերի վաղ հայտնաբերման, հաղորդակցման և զոհերին պատշաճ խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրվել է տեղեկատվություն 2015թ. մայիս-հունիս ամիսներին կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության, սեռի հատկանիշով բռնության կանխարգելման մոդուլներով իրականացված վերապատրաստումների մասին: Նշված մոդուլով վերապատրաստվել են ՀՀ հանրակրթական դպրոցների 2394 ուսուցիչ: Ինչ վերաբերում է հաջորդ ժամանակահատվածում իրանացված վերապատրաստումներին, ապա նախարարության կողմից վերաբերելի տեղեկատվություն չի տրամադրվել:

Այսպիսով, թեև սույն գործողության շրջանակներում բոլոր պատասխանատու մարմինների կողմից տրամադրվել է տեղեկատվություն, այնուամենայնիվ այն չի ներառում Ծրագրով սահմանված ողջ ժամանակահատվածը: Բացի այդ, որևէ պատասխանատու մարմնի կողմից տեղեկատվություն չի տրամադրվել իրականացված դասընթացների ազդեցության գնահատման վերաբերյալ:

Ելնելով վերոշարադրյալից, սույն գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված։

11. Գործողություն՝ (43) Խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ իրավապահ մարմինների աշխատակիցների, զինծառայողների, ինչպես նաև համապատասխան բուժանձնակազմի շրջանում պարբերական դասընթացների կազմակերպում
Ակնկալվող արդյունքը՝ պարբերական դասընթացների իրականացում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ԱԱԾ, ՊՆ, Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)

Նախորդ գործողության տրամաբանությամբ սույն գործողության կատարումը կրում է պարբերական բնույթ։

Ըստ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2014թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունում կազմակերպվել և անցկացվել են մի շարք սեմինարներ և դասընթացներ, որոնց մասնակցել են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր, Երևան քաղաքի, մարզային, իրավաբանական և հասարակական կարգի ապահովման, բժշկական վարչությունների իրավասու ծառայողներ, որոնց ընթացքում ներկայացվել, քննարկվել և մեկնաբանվել են ոլոտին վերաբերող հիմնահարցեր, տրամադրվել են մեթոդական ուղեցույցներ, որոնցում հակիրճ ներկայացված են ոլորտը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերը, այդ թվում ՄԱԿ-ի խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեմ կոնվեցիայի դրույթները: Նշված ծառայողների կողմից ուսումնասիրվել է նաև ՀՀ ոստիկանության շտաբի կողմից մշակված և ՀՀ ոստիկանության պետի կողմից հաստատված՝ «Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի իրավական չափանիշների կիրառումն ապահովելու մասին» ցուցում-հանձնարարականը, որը պարունակում է իրավակարգավորումներ ոստիկանության ծառայողների կողմից անձանց բերման ենթարկելու, ձերբակալելու կամ հարկադրանքի այլ միջոցներ գործադրելիս, ԽԿԿ չափանիշներին համապատասխան վարքագիծ ապահովելու, խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի, ինչպես նաև նման դեպքերի մասին ներկայացված բողոքների պատշաճ գրանցման, դրանց ընթացք տալու վերաբերյալ: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատում, հեռակա ֆակուլտետում, մագիստրատուրայում, կրթահամալիրի քոլեջում, ինչպես նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և որակավորման ֆակուլտետում

համապատասխանաբար «Մարդու իրավունքները և ոստիկանությունը» դասընթացի, «Մարդու իրավունքները և ոստիկանությունը» մոդուլի, «Մարդու իրավունքների տեսության հիմնախնդիրներ» դասընթացի շրջանակներում ևս ուսուցանվում են տվյալ թեմաները: Ըստ ՀՀ ոստիկանության կողմից նշված թեմաները նախապատրաստելիս հաշվի են առնվել ինչպես խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կատարման եվրոպական կոմիտեի իրավական չափանիշները, այնպես էլ մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հիմնախնդրի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները: Խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ իրավական ակտերը և ուսումնական նյութերը ընդգրկված են նաև ՀՀ ոստիկանության բոլոր ստորաբաժանումներում ամեն շաբաթ անցկացվող ծառայողական-ուսումնական պարապմունքների պլաններում: Ինչ վերաբերում է հաջորդ ժամանակահատվածներում իրականացված վերապատրաստումներին, ապա ՀՀ ոստիակնությունը որևէ տեղեկատվություն չի տրամադրել՝ գործողության կատարման ժամկետը ավարտված լինելու պատճառաբանությամբ:

Ազգային անվտանգության ծառայությունը 2014թ. և 2015թ. իրականացված վերապատրաստումների վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրել՝ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու հիմնավորմամբ[49]: Ինչ վերաբերում է 2016թ. իրականացված վերապատրաստումներին, ապա ԱԱԾ-ն հայտնել է, որ 2016թ. երրորդ և չորրորդ եռամսյակներում խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում պարբերաբար կազմակերպվել և իրականացվել են դասընթացներ ՀՀ ԱԱԾ ծառայողների համար: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ԱԱԾ կողմից իրականացված դասընթացների ժամանակի, քանակի, ընդհանուր առմամբ մասնակցած ծառայողների քանակի վերաբերյալ որևէ տեղեկատվություն ևս չի տրամադրվել՝ հղում անելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետին: Մինչդեռ դասընթացների քանակը, ժամանակացույցը, մասնակիցների ընդհանուր քանակը որևէ կերպ չի կարող բացահայտել ծառայողական գաղտնիք:

ՀՀ պաշտպանության նախարարության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ թիվ 35-րդ գործողության նկարագրության մեջ:

ՀՀ արդարադատության ակադեմիան՝ որպես համաձայնության պայմանով համակատարող մարմին, հայտնել է, որ դատավորների և արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների

[49] ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2015 թ. հունիսի 3-ին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Հայցադիմումի պատասխանի մեջ ՀՀ ԿԱ ԱԱԾ-ն սույն տեղեկատվության տրամադրման մասով պահանջը չի ընդունել:

ցուցակում ընդգրկված անձանց, դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրերում ներառված «Քրեական իրավունքի արդի հարցերը», «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը» և «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով» դասընթացների շրջանակներում նախատեսվել է խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ իրավական հարցերի քննարկում:

Այպիսով, արձանագրում ենք, որ սույն գործողության կատարմանն ուղղված միջոցառումները չեն կրել պարբերական բնույթ, իսկ պատասխանատու մարմինների կողմից տրամադրված տեղեկատվությունը բավարար չէ սույն գործողության կատարումը ամբողջությամբ իրականացված համարելու համար: Ինչ վերաբերում է իրականացված վերապատրաստումների ազդեցության գնահատմանը, ապա որևէ մարմին տեղեկատվություն չի տրամադրել, իսկ Արդարադատության ակադեմիան հայտնել է, որ գնահատում չի անցկացվում օրենսդրությամբ նման պարտականության բացակայության պատճառով:

Ելնելով վերոշարադրյալից, սույն գործողությունը գնահատվում է մեծամասամբ չիրականացված:

12. Գործողություն՝ (44) Բացառել ժամկետային զինծառայողների ծառայությունը զինվորական դատախազությունում անցկացնելը
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ թեև «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ գործող օրենքի 25-րդ հոդվածով սահմանվում է, որ զինծառայողը կարող է տեղափոխվել հետագա ծառայության պետական այլ լիազոր մարմնում, այնուամենայնիվ ՀՀ զինվորական դատախազությունում պարտադիր ժամկետային զինծառայողների հաստիքներ չկան, այսինքն՝ այնտեղ պարտադիր զինվորական ծառայության կազմակերպումը գործնականում բացառվում է:

ՀՀ պաշտպանության նախարարությունը նաև նշում է, որ «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով իր հերթին սահմանվում է, որ միայն պայմանագրային զինծառայողը է կարող տեղափոխվել այլ պետական մարմին ծառայությունը շարունակելու համար: Եվ, թեև ըստ ՀՀ ՊՆ՝ ժամկետային զինծառայողների ծառայությունը զինվորական դատախազությունում անցնելը գործնականում անհնար է, այնուամենայնիվ օրենսդրորեն այն կարգավորված չէ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ նախարարության պնդմամբ վկայակոչվող նախագիծը հանվել է շրջանառությունից, քանի որ ՊՆ 2017թ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսվում է 2017թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակում ՀՀ կառավարություն ներկայացնել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն ընդգրկելու է ներկայումս գործող «Զինապարտության մասին», «Զինվորական ծառայության անցնելու մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքների կարգավորումը:

Այսպիսով, սույն գործողության իրականացման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից համապատասխան լուծումներ էին տրվել «Զինապարտության և զինվորական ծառայության» մասին ՀՀ օրենքի նախագծով, որը հանվելու է շրջանառությունից, իսկ նոր նախագծի հանրային քննարկման աշխատանքները մեկնարկելու են հունիս ամսից՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրելով:

Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից, սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

13. Գործողություն՝ (45) Միջազգային չափանիշներին համապատասխան սահմանել ՔԿՀ-ներում հացադուլ իրականացնող անձանց իրավունքները և պարտականությունները
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է միասնական իրավական ակտ, որն ամբողջական և համակարգային կարգավորում է նախատեսում կալանավորված և դատապարտված անձանց կողմից սննդի ընդունումից հրաժարվելու դեպքերի և դրանց արդյունքում վրա հասնող հետևանքների մասին:[50]

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ արհեստական սնուցման ձևով բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում է միմիայն բժշկի պատճառաբանված գրավոր եզրակացության հիման վրա, որը պետք է իրականացվի մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում՝ առանց հացադուլը դադարեցնելու նպատակի:

[50] https://www.e-draft.am/projects/102

Այպիսով, ըստ նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, Նախագիծն ուղարկվել է շահագրգիռ մարմինների կարծիք ստանալու նպատակով և ներկա պահին գտնվում է կարծիքների ամփոփման և լրամշակման փուլում:

Սույն գործողության կատարման վերջնաժամկետը 2016 թ. չորրորդ եռամսյակն էր: Նախագիծնը հանրային քննարկման է ներկայացվել 2017 թ. մարտի 6-ին, ինչը հիմք է տալիս պնդելու, որ սույն գործողության իրականացումը իրականացվել է Ծրագրով սահմանված ժամկետների խախտմամբ:

Այսպիսով, ելնելով այն հանգամանքից, որ հանրային քննարկումը ավարտվել է 2017 թ. մարտի 21-ին, և հայտնի չէ նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելու ժամկետը, գործողությունը գնահատվում է չիրականացված:

Այսպիսով, Խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքի ոլորտում ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել 13 գործողություն, որից 6 գործողություն գնահատվել է ամբողջությամբ իրականացված, 1 գործողություն՝ կիսով չափ իրականացված, 4 գործողություն՝չիրականացված ևս երկուսը՝մեծամասամբ չիրականացված:

IX. Երեխայի իրավունքներ (15)

1. Գործողություն՝ (46) ՀՀ կառավարություն ներկայացնել շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններն այլընտրանքային ծառայությունների վերակազմակերպման վերաբերյալ առաջարկություններ
Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրված պատասխանի համաձայն՝ «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն չներկայացվեց՝ պայմանավորված 2014-2016թթ. Երեխաների իրավունքների պաշտպանության սոցիալական ոլորտում իրականացվող

բարեփոխումների գործընթացով: Մասնավորապես, 2014թ. նոյեմբերի 13-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1273-Ն որոշումը, որի համաձայն նախատեսվում է երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված մեծ հաստատությունների (մանկատներ ու երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ) բեռնաթափում՝ որդեգրման մեխանիզմների հստակեցում, խնամատար ընտանիքների ներդրման գործընթացի արդյունավետության բարձրացում, հատուկ կարիքներ ունեցող, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների բավարարմանն ուղղված համայնքային ծառայությունների համակարգի զարգացում: ՀՀ ԱՍԻՆ և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում ձևավորված փորձագիտական խմբի կողմից մշակվել է «ՀՀ երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված մեծ հաստատություններում հայտնվելու գործընթացին վաղ միջամտության» հայեցակարգ:

Թեև սույն ծրագրերը բովանդակային լրացուցիչ գնահատման կարիք ունեն, այնուամենայնիվ գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

2. Գործողություն՝ (47) Համայնքներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հարցերով զբաղվող մասնագետների ներդրման մոդելի մշակում, գործառնական ծախսերի վերլուծում և դրանց արդյունքներով ընտրված համայնքներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հարցերով զբաղվող մասնագետներով ապահովում
Ակնկալվող արդյունքը՝ Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային առնվազն մեկ ծառայողի ընդգրկում, որի պաշտոնի անձնագրում ամրագրվելու են երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված գործառույթներ Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրված պատասխանի համաձայն՝ Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայող չի ներդրվել, քանի որ համայնքներում սոցիալական աշխատանքի զարգացման մեխանիզմների մշակումը նպատակահարմար էր իրականացնել

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո: Այնուամենայնիվ, ըստ ՀՀ ՏԿԶՆ կողմից տրամադրված տեղեկատվության, Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմում ընդգրկված համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում ամրագրվել են երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված գործառույթներ:

Այսպիսով, թեև նշված գործողության ուղղությամբ որևէ քայլեր չեն իրականացվել, այնուամենայնիվ հարկ է նշել, որ ՀՀ ՏԿԶՆ կողմից երեխաների պաշտպանությանն ուղղված գործառույթներ են սահմանվել նաև Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմում ընդգրկված համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում:

Այնուամենայնիվ, գերատեսչությունների կողմից տրված պատասխաններից պարզ չէ, թե արդյոք նրանք գտնում են սույն գործողության իրականացումը ոչ նպատակահարմար, և եթե այո, ապա ինչ պատճառաբանությամբ, իսկ եթե ոչ, ապա երբ են պատրաստվում իրականացնել գործողությունը: Բացի այդ, սույն գործողութունը չի համապատասխանում ակնկալվող արդյունքների բովադակությանը՝ այն ձևակերպված է շատ առավել լայն, քան արդյունքը:

Այսպիսով սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

3. Գործողություն՝ (48) Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդրի լուծմանն ուղղված աշխատանքների ակտիվացում
Ակնկալվող արդյունքը՝ Մուրացիկ երեխաների հարցերով զբաղվող միջգերատեսչական աշխատանքային խմբի գործարկում, խնդրի կարգավորման համար առաջարկների և անչափահաս մուրացիկների թվի նվազեցմանն ուղղված ռազմավարության մշակում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)

Ըստ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ ոստիկանության պետի 2013թ. նոյեմբերի 7-ի թիվ 3837-Ա հրամանով մուրացիկ ու թափառաշրջիկ երեխաների (անչափահասների), ինչպես և նրանց ընտանիքների հետ կապված խնդիրների լուծման նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի ղեկավար է հանդիսանում ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ն.Դուրյանը, իսկ աշխատանքային խմբի քարտուղար՝ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության անչափահասների գործերով և

ընտանեկան բռնության դեմ պայքարի բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Լ. Ջանազյանը: Աշխատանքային խմբում ընդգրկված են ՀՀ ԱՍԻՆ, ՀՀ ԿԳՆ ու ԱՌՆ, Երևանի քաղաքապետարանի ու մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշպանության բաժինների պետերը, ՄԱԿ-ի ՅՈՒՆԻՍԵՖ-ի Մանկական հիմնադրամի երեխաների պաշտպանության ծրագրի պատասխանատուն (համաձայնությամբ): Որոշ մարզերում նաև ստեղծվել են մարզային աշխատանքային խմբեր:

2014 թ. աշխատանքային խմբի կողմից անց է կացվել 3 նիստ, Երևանում իրականացվել են ստուգայց-շրջայցեր, միջոցներ են ձեռնարկվել հայտնաբերված թափառաշրջիկ երեխաների տեղավորման հարցը լուծելու ուղղությամբ:

Հարցմանը պատասխանած բոլոր 10 մարզերի և Երևան քաղաքի կողմից ևս տեղեկատվություն է տրամադրվել սույն միջգերատեսչական աշխատանքային խմբի շրջանակներում իրականացված հանդիպումների և միջոցառումների մասին:

Նշված աշխատանքային խմբի մասին հայտնել են նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և ՀՀ ԱՍԻՆ-ն:

Սույն գործողության շրջանակներում ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման ռազմավարությունը և դրանից բխող 2015-2016 թթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը 2015 թ. օգոստոսի 6-ին ընդունվել է թիվ 37 արձանագրային որոշմամբ:[51]

Ելնելով վերոշարադրյալից, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

4. Գործողություն՝ (49) Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում երեխաների թվը թույլատրելի քանակին համապատասխանեցնելու նպատակով ներկայացնել միջոցառումների ծրագիր
Ակնկալվող արդյունքը՝ միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նապարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ «Նախադպրոցական կրթության զարգացման 2016-2025թթ

[51] Տե՛ս ՀՀ կառավարության 2015 թ. օգոստոսի 6-ի թիվ 37 արձանագրային որոշումը https://www.e-gov.am/protocols/item/536/

ռազմավարական ծրագրի նախագծի հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ենթածրագրում նախատեսված է մշակել և ներկայացնել հաստատման «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը նոր շարադրությամբ խմբագրելու մասին օրենքի նախագիծը, որտեղ ներառվելու է տվյալ հարցը: «Նախադպրոցական կրթության զարգացման 2016-2025թթ ռազմավարական ծրագրի նախագծի հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ուղարկվել է ՀՀ կառավարության քննարկմանը և ընդունվելու դեպքում կիրականացվի 2016-2019թթ ընթացքում:

Սույն գործողության համակատարող հանդիսացող ՀՀ ԱՍԻՆ կողմից որևէ տեղեկատվություն չի տրամադրվել: Երևանի քաղաքապետարանը, որը սույն գործողության համակատարող է հանդիսանում համաձայնության պայմանով, գտնում է, որ քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող մանկապարտեզներում գործող խմբերում երեխաների թիվը չի գերազանցում թույլատրելի քանակի սահմանը: Այս կապակցությամբ հարց է առաջանում սույն գործողության սահմանման նպատակահարմարության վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, գործողությունը գնահատվում է չիրականացված:

5. Գործողություն՝ (50) Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով օրենսդրորեն նախատեսել գաղտնիության պահպանման լրացուցիչ երաշխիքներ
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ ԱՆ կողմից մշակվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ կառավարություն, ապա նաև ՀՀ ԱԺ: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը[52]՝ ներկայումս ՀՀ ՍԺ գլխադասային պետական-իրավական հարցերի հանձնաժողովի դրական եզրակացությամբ ընդգրկվել է ՀՀ ԱԺ լիագումար նիստերի օրակարգ:

Հաշվի առնելով վերոգրյալը, պետք է նշել, որ նախարարության կողմից տրամադրվել է տեղեկատվություն միայն մշակված օրինագծի վերաբերյալ և բովանդակային

[52] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշյալ նախագիծը՝ http://www.parliament.am/draft_docs5/K-084lrlr.pdf

տեսանկյունից հղում չի արվել անչափահասի վերաբերյալ քրեական գործերով գաղտնիության պահպանման կոնկրետ դրույթների, մինչդեռ, քննարկվող նախագիծը պարունակում է գաղտնիության պահպանման ընդհանուր դրույթներ (գլուխ 22)։

Ելնելով վերոգրյալից, գործողությունը գնահատվել է կիսով չափ իրականացված։

6. Գործողություն՝ (51) Քրեական դատավարության օրենսգրքով սահմանել անչափահասի մասնակցությամբ առերեսման և այլ քննչական գործողությունների հատուկ կարգ, մասնավորապես անչափահասին հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը բացառելու համար (double victimization)
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Ի կատարումն սույն գործողության ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ ԱՆ կողմից մշակել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը: Նախագծով առաջարկվող փոփոխությունները միտում ունեն լրացնելու ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման առանձնահատկություններին վերաբերող բացերը՝ վերջիններիս հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը նվազեցնելու կամ բացառելու նպատակով: ՀՀ ԱՆ կողմից մշակվել են համապատասխան օրենսդրական փոփոխությունները և 2016թ. փետրվարի 26-ին ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ։

Հարկ է նշել, որ նախարարության կողմից նշված նախագիծը պարունակում է փոփոխություններ և լրացումներ նախնական քննության ընդհանուր պայմանների (ՀՀ քր.դատ.օր 188[1]-րդ հոդված), անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության (ՀՀ քր.դատ.օր 207-րդ հոդված), անչափահաս վկայի հարցաքննության (ՀՀ քր.դատ.օր 341-րդ հոդված) և անչափահաս տուժողի հարցաքննության (ՀՀ քր.դատ.օր.-ը առաջարկվում է լրացնել 343[1]-րդ հոդվածով՝ անչափահաս տուժողի հարցաքննությունը) վերաբերյալ: Նշված լրացուցիչ կարգավորումների նախատեսումը անշուշտ դրական միտում է: Սակայն Ծրագրով սահմանված գործողությունը հստակ պարունակում է հատուկ կարգի սահմանում ինչպես այլ քննչական գործողությունների, այնպես էլ առերեսման դեպքում: Թեև նախագծում սահմանված է, որ անչափահասի մասնակցությամբ ցանկացած քննչական գործողության կատարմանը ներգրավվում է

հոգեբան, այնուամենանայնիվ նախագծով առերեսման, որպես քննչական գործողության, համար նման կարգավորում չի սահմանվել:

Ելնելով վերոգրյալից, գործողությունը գնահատվել է կիսով չափ իրականացված:

7. Գործողություն՝ (52) Երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի բոլոր մակարդակների միջև համագործակցության մեխանիզմների զարգացում
Ակնկալվող արդյունքը՝ երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի բոլոր մակարդակների միջև համագործակցության մեխանիզմների ստեղծում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն

ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ սույն գործողության կատարման շրջանակներում աշխատանքներ են տարվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգի արդիականացման և հզորացման ուղղությամբ: Ինչպես նաև 2014 թ. ներդրված մոնիթորինգային ցուցանիշների տեղեկատվական համակարգ մուտքագրման վերաբերյալ:

ՀՀ ՏԿԶՆ-ը և ՀՀ ոստիկանությունը տեղեկատվություն չեն տրամադրել սույն գործողության ուղղությամբ 2014 թ. իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Այսպիսով, ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրվել է տեղեկատվություն «Մանուկ» տեղեկատվական համակարգի գործարկման շրջանակներում եռաստիճան համակարգի համակարգերի միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ, տեղեկատվության մուտքագրման, փոփոխությունների իրականացման և այլնի վերաբերյալ: Սակայն պարզ չէ, թե արդյոք «Մանուկ» համակարգի գործարկման շրջանակներում ձևավորված համագործակցությունը բավարար է սույն գործողության իրականացման և երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը իրականացնելու համար: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ գործողությունը ձևակերպված է ոչ հստակ, որը դժվարացնում է վերջինիս գնահատումը:

Այսպիսով, ՀՀ ԱՍԻՆ մասով սույն գործողությունը կարելի է գնահատել կիսով չափ իրականացված, ՀՀ ՏԿԶՆ-ի և ՀՀ ոստիկանության մասով՝ չիրականացված: Ընդհանուր գործողությունը գնահատվում է մեծամասամբ չիրականացված:

8. Գործողություն՝ (53) Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգի և միջոցառումների ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն, որով կսահմանվեն երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի ձևերը
Ակնկալվող արդյունքը՝ հայեցակարգի և միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կառավարության կայքէջ

ՀՀ կառավարության կողմից 2014 թ. դեկտեմբերի 4-ին թիվ N-51 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը:[53]

Թեև Հայեցակարգը կարիք ունի լրացուցիչ վերլուծության և գնահատման, այնուամենայնիվ որպես ծրագրային գործողություն այն գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

9. Գործողություն՝ (54) Իրականացնել երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի մասնագետների մասնագիտական վերապատրաստում
Ակնկալվող արդյունքը՝ պարբերական վերապատրաստումների և սեմինարների կազմակերպում՝ նշված աշխատողների համար Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն

Ի կատարումն սույն գործողության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից «Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով 2014 թ իրականացվել է 167 ունկնդրի (մեթոդիստներ, սոցիալական մանկավարժներ, բժիշկներ, գրադարանավարներ), 2015 թ.՝ համակարգի

[53]Հավանության է արժանացել Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակրագը
https://www.e-gov.am/protocols/item/443/

հաստատությունների 380 մասնագետ, 2016 թ. առաջին և երկրորդ եռամսյակում՝ 285 ունկնդիր (նախարարության ենթակայության մանկատների, այդ թվում՝ ոչ պետական, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների և երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների տնօրենների և փոխտնօրեններ)։

Սույն գործողության համակատարող հանդիսացող ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանությունը հայտնել է, որ 2014 թ. դեկտեմբերի 15-16-ը ն հոկտեմբերի 6-9-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում «Երեխաների իրավունքների պաշտպանության քրեաիրավական և քրեադատավարական երաշխիքները» թեմայով անցկացվել է որակավորման բարձրացման դասընթացներ, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության թվով 20 ծառայողներ: Իսկ ինչ վերաբերում է 2015 և 2016 թթ իրականացման ենթակա վերապատրաստումներին, ապա ՀՀ ոստիկանությունը տեղեկատվություն չի տրամադրել, պատճառաբանելով, որ սույն գործողության կատարման ժամկետը ավարտվել է 2014 թ.: Մինչդեռ սույն գործողության կատարման ժամկետը ձևակերպված է «2014 թ.-պարբերաբար»: Այն, որ տվյալ գործողության կատարման ժամկետը չի ավարտվել, վկայում է նաև ՀՀ ԱՍԻՆ կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածի համար տրամադրված տեղեկատվությունը։

Այսպիսով, հիմնվելով վերոգրյալի վրա, սույն գործողությունը գնահատվել է կիսով չափ իրականացված։

10. Գործողություն՝ (55) Հանրակրթական դպրոցներում, նախադպրոցական հաստատություններում, երեխաների խնամքի կենտրոններում իրականացնել բռնության բոլոր ձևերի մասին իրազեկվածության բարձրացում, երեխաների հետ իրականացնել զրույցներ՝ իրենց նկատմամբ հնարավոր բռնության դեպքերը բացահայտելու ուղղությամբ՝ ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սեռական, բռնությունն ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսման վայրում և փողոցում
Ակնկալվող արդյունքը՝ պարբերական միջոցառումների կազմակերպում՝ ուղղված իրազեկվածության բարձրացմանը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ ԱՍԻՆ, ՄԻՊ (համաձայնությամբ)

Սույն գործողության իրականացման շրջանակներում ՀՀ կրթության և գիտության

նախարարությունը հայտնել է, որ պարբերաբար հանձնարարականներ են տրվել հատուկ դպրոցների տնօրեններին, կազմակերպվել են քննարկում-խորհրդակցություններ՝ երեխաների նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը բացառելու համար: 2016 թ. ընթացքում ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից իրականացվել է հանրակրթական, դպրոցների մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալների (թվով 67 մասնակից) և սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչների (թվով 53 մասնակից) մասնագիտական զարգացման դասընթացներ: Դասընթացների ծրագրերում և մոդուլներում ներառված են թեմաներ՝ երեխաների իրավունքների վերաբերյալ օրենսդրական փաստաթղթերի և դպրոցում իրականացվելիք համապատասխան աշխատանքների ու միջոցառումների վերաբերյալ:

Սույն գործողության համակատարող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարության կողմից որևէ տեղեկատվություն չի տրամադրել, պատճառաբանելով, որ սույն գործողությունը դուրս է նախարարության իրավասություններից:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը հայտնել է, որ 2014թ. ընթացքում մարզպետարանների աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի և ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքների ու անչափահասների գործերով խմբերի մասնագետների, ՏԻՄ-երի մասնակցությամբ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների և սպասարկող անձնակազմի հետ իրականացվել են քննարկումներ բռնության տեսակների, դրանց բացահայտման և կանխարգելման վերաբերյալ: Ինչպես նաև համայնքներում և մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում, համաձայն նախապես կազմված միջոցառումների ծրագրերի, անցկացվել են երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի մասին իրազեկման և դրանցից պաշտպանվելուն ուղղված բաց դասեր, սեմինարներ, համատեղ քննարկումներ, թեմատիկ բեմականացումներ, ինչպես նաև ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրության լուսաբանում: Ինչ վերաբերում է 2015թ. և 2016թ. իրականացման ենթակա միջոցառումներին, ապա որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, որը սույն գործողության համակատարող է համաձայնության պայմանով, հայտնել է, որ Պաշտպանի՝ երեխաների իրավունքների հարցերով խորհրդականի, ինչպես նաև աշխատակազմի մյուս ներկայացուցիչների կողմից պարբերաբար կազմակերպվում են երեխաների հետ սեմինարներ, դասընթացներ, ճանաչողական այցեր Պաշտպանի աշխատակազմ և այլ միջոցառումներ, որոնք ուղղված են երեխաներին իրազեկելու իրենց իրավունքների, հատկապես բռնության բոլոր ձևերի, իրավական և այլ պաշտպանություն ստանալու մեխանիզմների վերաբերյալ, ինչպես նաև բացահայտելու հնարավոր բռնությունների դեպքերը: Պաշտպանի խորհրդականը և մյուս աշխատակիցները 2015թ. առաջին կիսամյակում՝ մի շարք հանրակրթական դպրոցներ կատարած այցերի և Պաշտպանի

աշխատակազմում իրականացված միջոցառումների ժամանակ հանդիպումներ են ունեցել տարբեր հանրակրթական դպրոցների մոտ 100-ից ավելի աշակերտների հետ: 2015թ. ընթացքում Պաշտպանի աշխատակազմի, այդ թվում՝ մարզային գրասենյակների աշխատակիցների կողմից այցեր են իրականացվել Երևան քաղաքի, ինչպես նաև Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի մի շարք դպրոցներ, այդ թվում, ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների խնդիրներին: 2016թ. Պաշտպանի աշխատակազմում Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ստեղծման արդյունքում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի իրավասություններն էլ ավելի ամրապնդվեցին: 2016թ. առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում սույն գործողության շրջանակներում 3 հանդիպում է անցկացվել ընդհանուր թվով 50 երեխաների մասնակցությամբ, իսկ 2016թ. երրորդ և չորրորդ եռամսյակներում Մարդու իրավունքների պաշտպանը հանդիպումներ է ունեցել մի քանի խումբ դպրոցականների հետ, որոնց ընթացքում քննարկվել են երեխաների իրավունքներին նվիրված բազմաթիվ հարցեր, այդ թվում' երեխաների նկատմամբ բռնության խնդիրները: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմում հանդիպումներ են եղել հաշմանդամություն ունեցող երեխաների, ինչպես նաև Կապանի և Սիսիանի դպրոցների աշակերտների հետ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ ԿԳՆ-ն և ՀՀ ՄԻՊ-ը իրականացված իրազեկման միջոցառումների ազդեցության գնահատման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չեն տրամադրել:

Այսպիսով, հիմնվելով վերոգրյալի վրա, սույն գործողությունը գնահատվել է կիսով չափ իրականացված:

11. Գործողություն՝ (56) Երաշխավորել, որպեսզի դեռահասների հարցերով արդարադատության համակարգում ներգրավված բոլոր մասնագետների ուսուցումն անցկացվի միջազգային չափանիշներին համապատասխան՝ ներառյալ հանցագործության մանկահասակ զոհերի և վկաների մասնակցությամբ արդարադատությանն առնչվող ՄԱԿ-ի ուղեցույցը
Ակնկալվող արդյունքը՝ դատավորների, քննիչների, ինչպես նաև անչափահասների գործերով քննություն իրականացնող աշխատողների պարբերաբար վերապատրաստում Տեղեկատվության աղբյուր՝ Փաստաբանական դպրոց (համաձայնությամբ), ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)

Սույն գործողության հիմնական կատարողն է հանդիսանում ՀՀ ոստիկանությունը, իսկ ՀՀ փաստաբանականա դպրոցը և Արդարադատության ակադեմիան սույն գործողության համար պատասխանատու մարմիններ են համաձայնության պայմանով:

Ըստ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության, 2014 թ. մարտ ամսին «Համայնքային կապեր և նախաձեռնություններ ի նպաստ սոցիալականացման» ծրագրի շրջանակներում վերապատրաստումներ են անց կացվել 37 անչափահասների գործերով ոստիկանների համար: Ինչպես նաև մշակվել և տպագրվում են «Անչափահասների արդարադատությունը ՀՀ-ում» վերնագրով մոդուլները, որոնցով կանցկացվեն նախատեսվող վերապատրաստման մոդուլները: Ինչ վերաբերում է հաջորդ ժամանակահատվածներում իրականացված վերապատրաստումներին, ապա ՀՀ ոստիկանության կողմից կրկին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

ՀՀ արդարադատության ակադեմիան հայտնել է, որ հատուկ անչափահասների (դեռահասների) հարցերով զբաղվող դատավորներ և դատախազներ ՀՀ-ում նախատեսված չեն, սակայն «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը» և «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը» թեմաներով դասընթացների շրջանակներում քննարկվում են անչափահասներին առնչվող քրեաիրավական (օրինակ՝ պատժողական քաղաքականության առումով) և քրեադատավարական (օրինակ՝ անչափահասների գործերով վարույթները առանձնացնելու առումով) առանձին հարցեր: Իսկ 2016 թ. դատավորների և արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, դատախազների տարեկան վերապատրաստման ծրագրերում ներառվել է նոր դասընթաց՝ «Անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները, որի շրջանակներում 2016թ. երրորդ և չորրոդ եռամսյակների ընթացքում վերապատրաստվել է 20 դատավոր, 53 դատախազ:

ՀՀ փաստաբանական դպրոցը հայտնել է, որ հատուկ դեռահասների հարցերով զբաղվող փաստաբանների համար *(այդպիսի փաստաբանների խմբի մասին, թերևս, ՀՀ փաստաբանական դպրոցը տեղեկություն չունի)* դաս չի անցկացվել: Անչափահասների արդարադատության վերաբերյալ իրավական հարցերը քննարկվել են տարբեր' քրեաիրավական, քրեադատավարական, քաղաքացիաիրավական, քաղաքացիադատավարական կոնկրետ մոդուլներում այնքանով, որքանով այդ միջազգային փաստաթղթերը կամ դրանց կարգավորումները վերաբերելի են եղել: ՀՀ փաստաբանական դպրոցում ունկնդիրների ուսուցման ընթացքում մատնանշված ՄԱԿ-ի ուղեցույցը չի դասավանդվել, քանի որ նման առանձին առարկա չի նախատեսվել ուսումնական պլանում: Ուղեցույցը որպես վերաբերելի նյութ կիրառվում է այլ մոդուլների դասավանդման ժամանակ այնքանով, որքանով քննարկվում են անչափահասների մասնակցության դեպքերը: Ինչ վերաբերում է փաստաբանների վերապատրաստումներին,

ապա այս դեպքում ևս հատուկ Ուղեցույցի դրույթների քննարկման համար վերապատրաստում չի կազմակերպվել, քանի որ կարիքների գնահատման ընթացքում նմանատիպ պահանջ չի ներկայացվել փաստաբանների կողմից։

Այսպիսով, հիմնվելով վերոգրյալի վրա, սույն գործողությունը գնահատվել է կիսով չափ իրականացված։

12. Գործողություն՝ (57) Զարգացնել անչափահաս իրավախախտների վարքագծի և շտկմանն ու սոցիալական վերաինտեգրմանն ուղղված մասնագիտացված կառույցների ինստիտուտը
Ակնկալվող արդյունքը՝ համայքային վերականգնողական խորհուրդների թվի ու աշխատանքի արդյունավետության աճ Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ԱՍՀՆ

Համաձայն ՀՀ ոստիկանության կողմից տրամադրած տեղեկատվության՝ շեղվող վարքագիծ դրսևորող անչափահասների համար ՀՀ ոստիկանության նախաձեռնությամբ՝ «Project Harmony» միջազգային հասարակական կազմակերպության աջակցությամբ 2006 թվականից ի վեր՝ Երևան (2 կենտրոն), Վանաձոր, Գյումրի, Ալավերդի, Իջևան, Թալին, Կապան, Աբովյան, Արտաշատ, Վաղարշապատ և Մեծամոր քաղաքներում գործում են վերականգնողական կենտրոններ: Հիշյալ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի ժամկետի ավարտի կապակցությամբ կենտրոնների ֆինանսավորումը դադարեցվեց: Սակայն վերականգնողական կենտրոնները շարունակում են իրենց գործունեությունը և ցանցը ընդլայնելու նպատակով ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության նախաձեռնությամբ, վերջինիս և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատուների միջև քննարկումների արդյունքում համայնքային վերականգնողական կենտրոններ են գործում նաև Կապան և Ճամբարակ քաղաքներում, իսկ 2015թ. հունվար ամսին վերաբացվեց նաև Աբովյան քաղաքում նախկին գործող վերականգնողական կենտրոնը:

ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի N 847-Ն որոշմամբ, վերանվանվելով որպես ՀՀ արդարադատության նախարարության «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ, կենտրոնը սույն որոշմամբ և ՀՀ արդարադատության նախարարի 2014թ. նոյեմբերի 5-ի N 381-Ա հրամանով ստանձնել է հետևյալ գործառույթները՝ սոցիալական

վերականգնողական ծրագրերի իրականացումը քրեակատարողական հիմնարկներում պահվող կամ ազատությունից զրկման հետ չկապված պատիժ կրող, ինչպես նաև պատժից ազատված անչափահասների համար և իրավախախտում կատարած անչափահասների արտադպրոցական դաստիարակության կազմակերպման, իրավագիտակցության բարձրացման, պատժից ազատված անչափահասների սոցիալական վերաինտեգրման միջոցառումների կազմակերպումը: Կենտրոնը իրականացնում է դատապարտյալ և կալանավորված անչափահասների վերականգնողական, մշակութային և կրթական ծրագրեր ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում և սոցիալական վերաինտեգրման ծառայություններ պատժից ազատված անչափահասների համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանդիսանում է գործողության համակատարող, որի կողմից որևէ տեղեկատվություն չի տրամադրվել: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ գործողության արդյունքն էր կազմում համայքային վերականգնողական խորհուրդների աշխատանքի արդյունավետության աճը, որի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել :

Այսպիսով, հիմնվելով վերոգրյալի վրա, սույն գործողությունը գնահատվել է կիսով չափ իրականացված:

13. Գործողություն՝ (58) Միջոցներ ձեռնարկել հատուկ դպրոցներում սովորող՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների թվի նվազեցման ուղղությամբ
Ակնկալվող արդյունքը՝ հատուկ դպրոցներից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների տեղափոխում հանրակրթական դպրոցներ Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ ԿԳՆ-ն հայտնել է, որ ըստ համապատասխան հանձնարարականի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող 18 սովորողներ տեղափոխվել են հանրակրթական ուսումնական հաստատություններ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող, սակայն հատուկ դպրոցներում սովորող երեխաների խնդիրը բացահայտվել է 2013 թ. դեկտեմբեր ամսին: Կարևոր է նաև, որ ՀՀ ԿԳՆ-ն հայտնել է այս գործընթացի հետ մեկտեղ հանրակրթության համակարգում համընդհանուր ներառական կրթության անցում կատարելուն ուղղված գործընթացների վերաբերյալ:

ՀՀ ԱՍԻՆ հայտնել է, որ տվյալ հարցադրումը դուրս է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասությունից:

ՀՀ ՏԿԶՆ հայտնել է, որ Արմավիրի թիվ 1 հատուկ դպրոցում սովորող 14 երեխայի վերաբերյալ իրականացված փորձաքննությունը արձանագրել է, որ իրենք չունեն կրթության առարձնահատուկ պայմանների կարիք և ուսումը կարող են շարունակել հանրակրթական դպրոցներում: Այս երեխաների հանրակրթական դպրոց տեղափոխման վերաբերյալ նախարարության կողմից տեղեկատվություն չի տրամադրվել:

Այսպիսով, ՀՀ ԿԳՆ կողմից սույն գործողությունը իրականացվել է հիմնված 2013 թ. կատարված հետազոտության արդյունքների վրա: ՀՀ ՏԿԶՆ կողմից տրամադրված տեղեկատվությունից պարզ չէ, թե արդյոք երեխաները տեղափոխվել են հանրակրթական դպրոց: Հաշվի առնելով, որ ՀՀ ԱՍԻՆ ենթակայության ներքո առանձին կերպով չեն գործում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դպրոցներ, անհրաժեշտ էր գործողության պատասխանատուների ցանկից հանել ՀՀ ԱՍԻՆ:

Այսպիսով, այս գործողությունը կարելի է գնահատել մեծամասամբ չիրականացված:

14. Գործողություն՝ (59) Պետական բյուջում համապատասխան վերաբաշխումներ կատարել և ավելացնել խնամատար ընտանիքների թիվը՝ հաշվի առնելով միջազգային փորձը
Ակնկալվող արդյունքը՝ համապատասխան վերաբաշխումների կատարում, խնամատար ընտանիքների թվի ավելացում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2012, 2013, 2014 և 2015 թվականներին բյուջետային հատկացումներ են կատարվել 23 ընտանիքների համար, սակայն փաստացի ֆինանսավորվել են 2012թ.՝ 21, 2013թ.՝ 18 և 2014թ.՝ 16 ընտանիքներ: Ներկայումս խնամատար ընտանիքներում խնամվում է 17 երեխա: ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնում է, որ 2015թ. ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի 1-ին հավելվածի բյուջետային ծախսերի գործնական դասակարգման 10 բաժնի 04 խմբի 01 դասի «Խնամատար ընտանիքներում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» ծրագրի գծով հատկացումների չափը կազմում է 38 մլն 144.3 հազ. դրամ՝ 23 խնամատար ընտանիքների համար: 2015 թվականի ընթացքում «Խնամատար

ընտանիքներում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» ծրագրով վերաբաշխումներ չեն կատարվել, քանի որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից համապատասխան հայտ չի ներկայացվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, կարելի է արձանագրել, որ թեև բյուջետային հատկացումները կատարվել են 23 ընտանիքի համար, սակայն ֆինասավորվել են ընդամենը 18-ը: Այսինքն, ի տարբերություն նախորդ տարիների, 2015թ. խնամատար ընտանիքների թիվը չի ավելացել: Միևնույն ժամանակ, ինչպես հայտնել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված խնամատար ընտանիքի ինստիտուտի կայացմանը:

Այսպիսով, հիմնվելով վերոգրյալի վրա սույն գործողությունը գնահատվել է մեծամասամբ չիրականացված:

15. Գործողություն՝ (60) Անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար նախատեսված հատուկ սենյակների ստեղծում
Ակնկալվող արդյունքը՝ հատուկ սենյակների ստեղծում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ), ՀՀ ԱԱԾ, ՀՀ ոստիկանություն

Սույն գործողության համար պատասխանատու մարմիններ են ՀՀ ոստիկանությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնության պայմանով: 2014 թ. հուլիսին իրականացված օրենսդրական փոփոխությունների և ՀՀ քննչական կոմիտեի ստեղծմամբ ՀՀ ոստիկանության և ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում դադարել են գործել նախաքննության մարմիններ: [54] Միևնույն ժամանակ, քննչական մարմին է գործում ՀՀ ֆինանսների նախարարության ենթակայության ներքո: ՀՀ ֆինանսների նախարարության մարմինները ներառված չեն որպես սույն գործողության պատասխանատու:

ՀՀ ոստիկանության կողից սույն գործողության կատարման ուղղությամբ որևէ աշխատանք չի կատարվել և առաջարկվում է դիմել ՀՀ քննչական կոմիտեին:

Գործողության կատարումը կրում է պարբերական բնույթ, ուստի տեղեկատվությունը հավաքագրվել է մի քանի փուլով: ՀՀ քննչական կոմիտեն հայտնել է, որ միջազգային

[54] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ 60-րդ կետի 5-րդ պունակը «ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն» բառերից առաջ լրացվել է«ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)» բառերով, իսկ «ՀՀ պաշտպանության նախարարություն» բառերը հանվել է, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

լավագույն փորձի հաշվառմամբ ուսումնասիրություններ են կատարվել անչափահասների հարցաքննությունների սենյակներ առանձնացնելու և կահավորելու նպատակահարմարության վերաբերյալ: 2015 թ.-ից ՀՀ քննչական կոմտեի Կոտայքի մարզի, Արագածոտնի մարզի, Վայոց Ձորի մարզի քննչական վարության վարչական շենքերում առկա են անչափահաս տուժողների և վկաների հարցաքննության համար նախատեսված հատուկ սենյակներ, իսկ 2016 թվականից շահագործման են հանձնվել նաև Շենգավիթի և Քանաքեռ-Զեյթունի քննչական բաժինների նոր վարչական շենքերը, Սյունիքի մարզի քննչական վարչության նոր վարչական շենքը, Գեղարքունիքի մարզի Վարդենիսի քննչական բաժնի նոր վարչական շենքը, որտեղ ևս նախատեսված են անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար հատուկ սենյակներ: 2016 թ. դրությամբ ՀՀ քնչրական կոմիտեի կենտրոնական մարմնում և Երևան քաղաքի քննչական վարչության նոր վարչական շենքում առանձնացվել են անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար հատուկ սենյակներ, որոնք կահավորված են մասամբ:

ՀՀ ԱԱԾ-ն հայտնել է, որ 2016 թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ԱԱԾ կենտրոնական վարչական շենքում ստեղծվել է անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար նախատեսված հատուկ կահավորված սենյակ:

Այսպիսով, վերլուծելով տրամադրված տեղեկատվությունը, ակնհայտ է, որ գործողությունը մեծամասամբ իրականացվել է միայն ՀՀ քննչական կոմիտեի կողմից: Ինչ վերաբերում է ՀՀ ոստիկանությանը պատասխանատու մարմինների շարքից հանելու վերաբերյալ Կազմակերպության հարցադրմանը, ապա ՀՀ ոստիկանությունը հայտնել է, որ նման անհրաժեշտություն չի տեսնում՝ չբացառելով կետի կատարման համար պատասխանատու պետական այլ մարմինների հետ հնարավոր համագործակցությունը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ ոստիկանության կողմից սույն կետի իրագործման ուղղությամբ կատարված համագործակցության մասին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Պետք է նշել, որ սույն գործողության պատասխանատու մարմինների շարքում պետք է ընդգրկվեր նաև ՀՀ պետական կոմիտեն, քանի որ վերջինիս կազմի մեջ են երեք քննչկան վարչություններ, որոնք իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնում են նախաքննություն:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված:

Այսպիսով, Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել 15 գործողություն, որից երեք գործողություն գնահատվել է ամբողջությամբ իրականացված, յոթ գործողություն գնահատվել է կիսով չափ իրականացված, երեք գործողություն՝ մեծամասամբ չիրականացված և ևս երկու գործողություն՝չիրականացված։

X. Տարեց մարդկանց իրավունքներ (4)

1. Գործողություն՝ (61) Անօթևան տարեցների սոցիալական աջակցության ծրագրերի մշակում
Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ կառավարության կողմից սոցիալական աջակցության ծրագրի հաստատում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրված տեղեկատվության հանաձայն՝ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից նախարարության պատվերով իրականացվել է հետազոտություն անօթևան անձանց շրջանում: Հետազոտության նպատակն է եղել պարզել մարդկանց անօթևանության պատճառները, նրանց սեռատարիքային կազմը, գնահատել նրանց կարիքները և ծրագրերի գնահատված կարիքներին համարժեք ծրագրեր իրականացնել: Նախարարության կողմից նաև մշակվել է «Անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանի տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Այսպիսով, սույն գործողության շրջանակներում կարելի է կրկին անգամ արձանագրել, որ գործողությունը բավարար չափով հստակ սահմանված չէ: Քանզի պարզ չէ, թե հստակորեն ինչ նպատակների և խնդիրների լուծմանը պետք է ուղղված լինեն անօթևան տարեցների համար սոցիալական աջակցության ծրագրերը: Միևնույն ժամանակ, ՀՀ ԱՍԻՆ տեղեկատվություն չի տրամադրել մշակված ծրագրերի վերաբերյալ: Տեղեկատվությունը տրամադրել է միայն իրականացված հետազոտության, մշակված կարգի նախագծի վերաբերյալ: Թեև նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ կարգի նախագիծը հնարավոր է գտնել ՀՀ ԱՍԻՆ կայքէջում, սակայն նախագիծը այնտեղ գտնել հնարավոր չեղավ:

Այսպիսով, հիմնվելով վերոգրյալի վրա սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

2. Գործողություն՝ (62) Տուն-ինտերնատ քաղաքացիների ընդունելության կարգի հստակեցում
Ակնկալվող արդյունքը՝ Ընդունելության կարգի հստակեցում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Ըստ ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2014թ. նոյեմբերի 13-ի թիվ 1264-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 7-ի «Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 1874-Ն որոշման մեջ, որով հստակեցվել են տուն-ինտերնատ քաղաքացիների ուղեգրման և ուղեգրումը հետաձգելու ժամկետները: Մինչ այդ՝ ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 13-ի թիվ 1035-Ն որոշմամբ փոփոխություններ էր կատարվել վերը նշված որոշման մեջ, որով հստակեցվել էր տուն-ինտերնատ ընդունելիության կարգը և հանվել որոշ սահմանափակումներ, մասնավորապես՝ միայնակ լինելու պարտադիր պայմանը:

Խնդրահարույց է գործողության անորոշ սահմանումը, քանզի կրկին պարզ չէ, թե ինչ խնդիր է նախատեսվում լուծել տուն-ինտերնատ քաղաքացիների ընդունելությունը հստակեցնելու միջոցով: Ուստի նաև դժվար է գնահատել գործողության արդյունքը:

Ամեն դեպքում սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

3. Գործողություն՝ (63) Տարեցներին որակյալ սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընձեռնմանն ուղղված իրավական ակտերի ընդունում
Ակնկալվող արդյունքը՝ Իրավական ակտերի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Ըստ ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրած տեղեկատվության՝ 2014 թ. սեպտեմբերի 18-ի ՀՀ կառավարության թիվ 39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «ՀՀ-ում տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու հայեցակարգը», որի

նպատակն է ՀՀ-ում ներդնել տարեցներին նոր, ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ:

Այսպիսով, սույն գործողության իրականացման ուղղությամբ թեև հստակ քայլեր չեն իրականացվել, սակայն ընդունվել է հայեցակարգը, որի բովանդակությունը և իրականացման ընթացքը ունի առանձին վերլուծության կարիք:

Ուստի սույն գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված:

4. Գործողություն՝ (64) Միջոցներ ձեռնարկել ծերանոցների, ծերերի համար նախատեսված տուն–ինտերնատների մշտադիտարկման հնարավորության ստեղծման ուղղությամբ
Ակնկալվող արդյունքը՝ մշտադիտարկումների համակարգի գործարկում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման միասնական համակարգի ներդրման գործընթացի շրջանակներում մշակվել են և ՀՀ ԱՍԻՆ 2013թ. հոկտեմբերի 3-ի թիվ 133-Ա/1 հրամանով հաստատվել է ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և արդյունավետության գնահատման համակարգի ներդրման հայեցակարգը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով իրականացվող ծրագրերի (բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների) մոնիթորինգի և գնահատման կարգը և գնահատման մեթոդաբանությունը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013թ. դեկտեմբերի 22-ի թիվ 172-Ա/1 հրամանով հաստատված «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով իրականացվող ծրագրերի (բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների) մոնիթորինգի և գնահատման 2014թ. տարեկան ծրագրով» նախատեսվել և իրականացվում է «Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայությունների տրամադրում տուն-ինտերնատներում» ծրագրի մոնիտորինգ և գնահատում:

Այսպիսով, ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրվել է տեղեկատվություն միայն նախարարության կողմից իրականացվող ծրագրերի մոնիթորինգի վերաբերյալ, ինչը ենթադրում է կոնկրետ գործողությունների հատվածային մշտադիտարկում: Չի տրամադրվել տեղեկատվություն անմիջականորեն տուն-ինտերնատների գործունեության մշտադիտարման մեխանիզմների մշակման ուղղությամբ իրականացված ծրագրերի մասին:

Այսպիսով, սույն գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված:

Այսպիսով, Տարեց մարդկանց իրավունքների պաշտպանության շրջանակներում ընդհանուր թվով 4 գործողություն, որից երկուսը գնահատվել է կիսով չափ իրականացված, մեկ գործողություն՝ ամբողջությամբ իրականացված և ևս մեկ գործողություն գնահատվել է որպես չիրականացված: Պետք է նշել, որ գործողությունների մեծ մասը հստակորեն չեն սահմանված, ինչի հետևանքով պարզ չէ, թե կոնկրետ ինչ է նախատեսվում իրականացնել տվյալ գործողության շրջանակներում, որը դժվարեցնում է նաև գնահատումը:

XI. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ (13)

1. Գործողություն՝ (65) Ներկայացնել հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների և ԲՈՒՀ-երի շենքերը հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնելու միջոցառումների ծրագիր
Ակնկալվող արդյունքը՝ համապատասխան ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 1-ի N 44 որոշմամբ հաստատվել է Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը, որի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց սոցիալական ներառման համար կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ստեղծումը ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկված է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչը: Հանձնաժողովը ուսումնասիրելու է բարձրագույն ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման նպատակով ստեղծված պայմանները: Պետք է նշել, որ ՀՀ բուհերում արդեն սկսվել են քննարկումներ հաշմանդամություն ունեցող անձանց

համար շենքային պայմանների, ուսումնական ծրագրերի, անհրաժեշտ գրականության ապահովման ուղղությամբ, որի արդյունքում պետք է ներկայացվեն առաջարկություններ վերը նշված խնդիրների կարգավորման նպատակով: Մասնագիտական կրթության բնագավառում ընտրվել և ՀՀ քաղաքաշինության նախարարություն է ներկայացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար անհրաժեշտ հարմարություններով համալրման համար ուսումնական հաստատությունների ցանկը (Երևանի թիվ 10 և Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարաններ) և հաշվարկ-հիմնավորումը: Հարմարեցման աշխատանքներն (սանդուղքներ, թեքահարթակներ, բազրիքներ, վերելակներ) ավարտվել են: Աշխատանքներն իրականացրել է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը: Միաժամանակ, մշակվել և «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդի» 2014 թ. դեկտեմբերի 23-ի նիստով հաստատվել է «Ուսումնական հաստատությունների հարմարեցում սահմանափակ ֆիզիկական կարողություններ ունեցող ուսանողների համար» ուղեցույցը:

Հարկ է նշել, որ սույն գործողության համակատարողն է նաև ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, իսկ Երևանի քաղաքապետարանը պատասխանատու մարմին է համաձայնության պայմանով: ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն հայտել է, որ 2015թ. հունիսի 11-ին ՀՀ կառավարություն է ներկայացվել հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարվա կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկը: Նույնաբովանդակ տեղեկատվություն է տրամադրել նաև Երևանի քաղաքապետարանը:

Ելնելով վերոգրյալից գործողությունը գնահատվում է մեծամասամբ իրականացված:

2. Գործողություն՝ (66) Կազմակերպել ներառական կրթություն իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունների մասնագետների և աշխատողների վերապատրաստում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ առավել արդյունավետ աշխատելու նպատակով
Ակնկալվող արդյունքը՝ ներառական կրթություն իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունների մասնագետների և աշխատողների վերապատրաստում և արդյունավետ աշխատելու կարողությունների զարգացում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Սույն գործողության կատարման ուղղությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը տրամադրել է տեղեկատվություն կազմակերպված դասընթացների մասին: Մասնավորապես՝ 2015 թ-ի հունիսի 1-ից մինչև հուլիսի 17-ը «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի շրջանակում Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի շենքում /Գլինկա, 2/ կազմակերպվել և իրականացվել է վերապատրաստման դասընթացներ: Դասընթացին մասնակցել է նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող 44 ուսումնական հաստատության 158 աշխատակից, որից 138-ը՝ կին, 20-ը՝ տղամարդ: 2016 թ. Կրթության ազգային ինստիտուտի և նրա մասնաճյուղերի կողմից իրականացվել են ներառական դպրոցի կարգավիճակ հայցող Երևանի, Շիրակի, Լոռու, Վայոց Ձորի, Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Արագածոտնի մարզերի թվով 77 դպրոցների 2191 մանկավարժական աշխատողների 30 ժամյա վերապատրաստման դասընթացներ:

Նախնառաջ պետք է նշել, որ սույն գործողության արդյունքը ձևակերպված է շատ ընդհանրական և այն չափելի չէ: Նախարարությունը տեղեկատվություն է տրամադրել կազմակերպված դասընթացների մասին, առանց նշելու, թե կոնկրետ ինչ թեմա է քննարկվել, և որ հաստատությունների մասնագետներ են մասնակցել: Որևէ տեղեկատվություն չի տրամադրվել իրականացված վերապատրաստումների ազդեցության գնահատման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից գործողությունը գնահատվում է մեծամասամբ իրականացված:

3. Գործողություն՝ (67) Մշակել գործուն մեխանիզմներ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունն ապահովելու նպատակով՝ պարտադիր ապահովման նորմատիվների /քվոտաների/ ներդրում
Ակնկալվող արդյունքը՝ Իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Ըստ ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրված տեղեկատվության՝ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-152-Ն) 20-րդ հոդվածով կազմակերպությունների համար, անկախ սեփականության ձևից, սահմանված է հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձի աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (քվոտա), և «Քվոտայի

պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանում կատարելու և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2014 թ. նոյեմբերի 19-ին, ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 1-ից:

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2013 թ. դեկտեմբերի 11-ին: Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ հարյուր և ավելի աշխատողներ ունեցող պետական կազմակերպությունների համար քվոտայի պահանջն առաջանում է կազմակերպության աշխատողների ընդհանուր քանակի առնվազն 3 տոկոսի չափով: Հարյուր և ավելի աշխատողներ ունեցող ոչ պետական կազմակերպությունների համար քվոտայի պահանջն առաջանում է կազմակերպության աշխատողների ընդհանուր քանակի առնվազն 1 տոկոսի չափով:

Սահմանված քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպությունը կատարում է մասհանում՝ մինչև քվոտայի պահանջն առաջանալու տարվան հաջորդող տարվա հունվարի 30-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ըստ «Քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանում կատարելու և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2014 թ. նոյեմբերի 19-ի թիվ 1308-Ն որոշման 7-րդ մասի՝ մասհանումը կատարվում է քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղի համար՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Այսպիսով, այս գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

4. Գործողություն՝ (68) Ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական անարգել միջավայրի ստեղծման նպատակով՝ քաղաքաշինության բնագավառի օրենսդրական դաշտը կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան
Ակնկալվող արդյունքը՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կառուցապատման օբյեկտներում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի և անարգել քաղաքաշինական միջավայրի ապահովում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ՏԿԶՆ, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե, տեղական ինքնակառավարման մարմիններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տեղեկատվություն է տրամադրվել մի շարք իրավական ակտերի մշակման վերաբերյալ: Այսպես, մշակել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ ամրագրված են դրույթներ հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական անարգել միջավայր ստեղծելու վերաբերյալ: Նախագիծը 2016թ. դեկտեմբերի 13-ին ընդգրկվել է ԱԺ նստաշրջանի օրակարգ, իսկ 2017թ. մարտի 1-ին ընդունվել է երկրորդ ընթեցմամբ: Բացի այդ, նախարարությունը հայտել է, որ 2017թ. հունվարի 12-ին հավանության է արժանացել «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 1 արձանագրային որոշումը: Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովելու տեսանկյունից կարևորելով քաղաքաշինական անարգել միջավայրի ստեղծումը՝ որոշմամբ ամրագրվել են համապատասխան ուղղություններ, ինչպես նաև ընդգրկվել են հստակ միջոցառումներ (քաղաքաշինական նորմերի վերանայում, շենքերի և շինությունների մատչելիության գնահատում, համապատասխան հարմարեցման ծրագրերի իրականացում և այլն):

ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն հայտնել է, որ ՀՀ 2017-2019թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրով (ՄԺԾԾ) «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում» ծրագրի համար հաստատվել են համապատասխան չափաքանակներ և ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով այդ նպատակի համար միջոցներ հատկացնելու նպատակով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում) ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը՝ ներառելով «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուի» մշակումը (տեղայնացումը), որն հաստատվել է ՀՀ կառավարության 2017թ. փետրվարի 23-ի N 8 արձանագրային որոշմամբ:

Սույն գործողության համակատարողներ են նաև ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց կողմից տեղեկատվություն է տրամադրվել միայն համայնքներում գործող հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի օբյեկտների մասին: Որևէ համայնքի կողմից տեղեկատվություն չի տրամադրվել սույն կետի իրականացմանն շրջանակներում ձեռնարկված գործողությունների մասին: Որևէ տեղեկատվություն չի տրամադրվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից:

Թեև պատասխանատու մարմինների կողմից տեղեկատվություն է տրամադրվել ձեռնարկված միջոցառումների մասին, այնուամենայնիվ դրանք ապագային միտված միջոցառումներ են, որոնց իրականացման մասին դեռ վաղ է խոսել: Ուշագրավ է, որ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն Հայաստանի կողմից Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել մատչելության բացակայության, մատչելիության առկա նորմերի պահպանման, և ազգային օրենսդրությունում ստանդարտների բացակայությամբ, որոնք պետք է վերացնեն արգելքները և խոչընդոտները քաղաքաշինության, շինարարության և հանրային ծառայությունների, ինչպես տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության ոլորտներում: Մատչելիության ապահովման նպատակով Կոմիտեն Հայաստանի Հանրապետությանը կոչ է արել ձեռնարկել բոլոր միջոցները՝ ապահովելու բորոր ոլորտներում մատչլեիության իրավական երաշխիքների իրականացումը, վերանայել «Վարչական իրավախախտումների մասին« ՀՀ օրենսգիրքը՝ ներառելու անհրաժեշտ պատժամիջոցներ մատչելիության նորմերի և ստանդարտների խախտման համար և ստեղծել մոնիթորինգի մեխանիզմ՝ հիմնված պետական մակարդակում զեկուցման համար, որը կապահովի այդպիսի նորմերի և ստանդարտների արդյունավետ իրականացումը, ընդունել մատչելիության հստակ ժամկետներով ռազմավարություն և գործողությունների պլան, ապահովել դրա իրականացումը և մոնիթորինգը հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների հետ սերտ խորհրդակցությունների միջոցով: [55]

Հաշվի առնելով տրամադրված տեղեկատվությունը, սույն գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված:

5. Գործողություն՝ (69) ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել «Հաշմանդամություն ունեցող անձանց մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին
Ակնկալվող արդյունքը՝ անհրաժեշտ նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Ի կատարումն սույն գործողության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տեղեկատվություն է տրամադրվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի

[55] Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի երզափակիչ դիտարկումները http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=21502&LangID=E
Տե՛ս նաև՝ http://hcav.am/events/20-04-2017-07/

նախագծի մշակման, վերաբերյալ, որն ինչպես նշվեց, ընդունվել է երկրորդ ընթեցմամբ:[56] Բացի այդ, նախարարությունը հայտնել է, որ համաձայն 2014 թ հունվարի 9-ին հավանության արժանացած «Անձի բազմակողմանի գնահատման՝ ԱՀԿ ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգի և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» թիվ 1 արձանագրային որոշման, շարունակվում են աշխատանքները հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրման ուղղությամբ: 2015 թվականի օգոստոս ամսից իրականացվել է պրոսպեկտիվ փորձաքննություն՝ թվով 198 անձանց հետ: Պատահականության սկզբունքով պրոսպեկտիվ փորձաքննության խմբում ընգրկվել են անձինք /մինչև 18 տարեկան երեխաներ/, ովքեր դիմել են փորձաքննության կամ վերափորձաքննության: ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 12-ի N1318-Ն որոշմամբ հաստատվել է «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը», որի նպատակն է փորձաքննվող անձի համաձայնության կամ ցանկության դեպքում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը բժշկասոցիալական փորձաքննության գործընթացին որպես դիտորդ՝ ապահովելով այդ գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունը: ՀՀ կառավարություն է ներկայացվել «Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննություն անցնող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: 2015թ. նոյեմբերին ՀՀ կառավարություն է ներկայացվել և 2015թ. դեկտմբերի 24-ին հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրի կազմման և իրականացման կարգը»: Բացի այդ, 2015 թ. հոկտեմբերին ՀՀ կառավարույթուն է ներկայացվել «Շուրջօրյա խնամքի տներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը 2015թ. դեկտեմբերի 17-ին հաստատվել է:

Թեև նախարարության կողմից տեղեկավություն է տրամադրվել «Հաշմանդամություն ունեցող անձանց մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ ներդաշնակեցման նպատակով մշակված իրավական ակտերի մասին, այնուամենայնիվ դժվար է պնդել, որ այդ իրավական ակտերը ամբողջությամբ արտացոլում են Կոնվեցիայի ոգին: Այսպես,

[56] Տե՛ս 58-րդ կետի նկարագրությունը:

Հաշմանդամություն ունեցող անձաց հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում արձանագրել է այն փաստը, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը չի համապատասխանում Կոնվեցիային և Կոմիտեի ընդհանուր մեկնաբանություններին և կոչ է արել Հայաստանի Հանրապետությանը վերանայել այն։[57]

Ելնելով վերոգրյալից գործողությունը գնահատվում է որպես կիսով չափ իրականացված։

6. Գործողություն՝ (70) Հստակեցնել հոգեկան առողջության և/կամ մտավոր խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու հիմքերը և մշակել անգործունակության գնահատման տարբերակված չափանիշներ
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ ի կատարումն սույն գործողության ՀՀ 2016թ. հուլիսի 21-ին ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագիծը, որի 29-րդ գլուխը իրավական կարգավորումներ է նախատեսում քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու ինստիտուտի վերաբերյալ։

Վկայակոչվող նախագծի 29-րդ գլխում զետեղված իրավակարգավորումները որևէ կերպ չեն կարող մեկնաբանվել որպես սույն գործողության բովանդակությունից բխող միջոցառումներ՝ ելնելով այն հանգամանքից, որ այն ամբողջությամբ արտացոլում է ներկա գործող իրավակարգավորումները։ Կասկածից վեր է, որ հոգեկան և/կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց անգործունակ ճանաչելու հիմքերը նախևառաջ պետք է հստակեցվեն նյութական իրավունքի նորմերով, այսինքն՝ պետք է սահմանվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, իսկ դրանց կենսագործման դատավարական մեխանիզմները պետք է արտացոլվեն քաղաքացիական դատավարության օրենսգրքում։

Դեռևս 2015թ. ապրիլի 7-ի թիվ ՍԴՈ-1197 որոշմամբ Սահմանադրական դատարանը դիրքորոշում էր հայտնել, որ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքում

[57] Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի երզափակիչ դիտարկումները http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=21502&LangID=E

առկա է իրավակարգավորման բաց, որը համակարգային լուծում է պահանջում և կարող է հաղթահարվել միայն օրենսդրական համարժեք փոփոխությունների միջոցով:

Կոնվենցիայի՝ օրենքի առջև հավասարության իրավունքի համատեքստում Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել ՀՀ Սահմանադրության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք խտրական դրույթների վերաբերյալ և, վկայակոչելով օրենքի առաջ հավասարության մասին ընդհանուր մեկնաբանություն 1-ը (2014), առաջարկել Հայաստանի Հանրապետությունը ուժը կորցրած ճանաչել Սահմանադրության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի խտրական դրույթները և վերականգնել հաշմանդամություն ունեցող անձանց համար լիարժեք իրավունակությունը և ներկայացնել որոշումների կայացման աջակցության համակարգը: [58]

Ելնելով վերոգրյալից գործողությունը գնահատվում է չիրականացված:

7. Գործողություն՝ (71) Ընդհանուր կրթական հաստատություններում հատուկ կարիքներ ունեցող անձանց համար ուսուցչի օգնականի, ընթերցողի, ուղեկցողի, ժեստերի լեզվի թարգմանչի ծառայությունների մատուցում, ինչպես նաև ուսուցման գործընթացում հատուկ կարիքներ ունեցող անձանց համապատասխան սարքավորումներով ապահովում
Ակնկալվող արդյունքը՝ հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքին ներգրավելու, ինչպես նաև համայնքային ծառայություններ տրամադրելու մեխանիզմների համապատասխան իրավական ակտերի համար մշակում և ընդունում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ ԿԳՆ կողմից տրամադրվել է տեղեկատվություն համընդհանուր ներառական կրթության անցում կատարելու նպատակով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ: Տրամադրվել է տեղեկատվություն նաև այն մասին, որ համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-Ն որոշման՝ հանրակրթական դպրոցներում սովորող, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման

[58] Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի երզափակիչ դիտարկումները http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=21502&LangID=E

համար հատկացվում են անհրաժեշտ այլ մանկավարժների (հատուկ մանկավարժ, դաստիարակ, հոգեբան և այլն) հաստիքներ:

Ինչ վերաբերում է ընդհանուր կրթական հաստատություններում հատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաստիքների լրացմանը, ապա նախարարությունը տեղեկատվություն չի տրամադրել, միայն հավելել է, որ ֆինանսավորումը կատարվում է բարձրացված չափաքանակով և ֆինասավորման բարձրացված չափաքանակը տրամադրվում է հատուկ մանկավարժների, հոգեբանի, դաստիարակի հաստիքներին, իսկ դրանց թիվը կախված է հաստատությունների համար նախատեսված կարգով՝ ըստ տիպերի սահմանված խմբերի խտության՝ հավասար թվով երեխաների առկայության դեպքում: Չի տրամադրվել նաև տեղեկատվություն հատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հատկացված սարքավորումների մասին:

ՀՀ ԱՍԻՆ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, սույն հարցերը դուրս են նախարարության իրավասությունից:

Այսպիսով, որպես սույն գործողության իրականացման պատասխանատու սահմանված՝ ՀՀ ԱՍԻՆ չի հանդիսանում այս գործողության իրականացման համար լիազորություն ունեցող մարմին: Ուստի, անհրաժեշտ է ՀՀ ԱՍԻՆ հանել պատասխանատու մարմինների ցանկից:

Գործողությունը գնահատվում է մեծամասամբ չիրականացված:

8. Գործողություն՝ (72) Հաշմանդամություն ունեցող անձանց համայնքի կյանքին ներգրավելու համար համապատասխան օրենսդրական կարգավորումների մշակում և ընդունում, մասնավորապես ապահովելով հավասար հնարավորություններ կրթության, աշխատանքի, ժամանցի և այլ ոլորտներում
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահությանն նախարարություն

Ըստ ՀՀ ԿԳՆ տրամադրված տեղեկատվության, սույն գործողության ուղղությամբ ՀՀ ԿԳ նախարարի 2014 թ. հունիսի 23-ի թիվ 678-Ա/Ք հրամանի համաձայն՝ 22-ով ավելացել է ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը և ներկայումս ՀՀ-ում գործում է 139 ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություն: ՀՀ ԱԺ-ն առաջին ընթերցմամբ ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ

օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով երեխայի կրթական կարիքների արձանագրման եռաստիճան համակարգ:

«ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում» Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից արձանագրվել է, որ Հայաստանում գործում է ոչ թե ներառական կրթության, այլ ինտեգրված կրթության մոդելը, իսկ կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում՝ սկսած անհատական ուսուցման պլանից մինչ «ներառականների համար» միջոցառումների կազմակերպումը: [59]

ՀՀ առողջապահության նախարարությունը առաջարկել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող գործողությունների վերաբերյալ տեղեկատվության համար դիմել ՀՀ ԱՍԻՆ-ին՝ որպես հիմնական կատարողին: Ուշագրավ է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ սույն հարցադրումը դուրս է նախարարության իրավասությունից:

Այսպիսով, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից այս գործողությունը կարելի է գնահատել մեծամասամբ իրականացված: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ առողջապահության նախարարության կողմից սույն գործողությունը կարելի է գնահատել չիրականացված: Գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված:

9. Գործողություն՝ (73) «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում
Ակնկալվող արդյունքը՝ որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ առողջապահությանն նախարարություն

ՀՀ կառավարության 2014 թ. ապրիլի 17-ի թիվ 15-1 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019թթ. ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Կազմակերպության կողմից իրականացվում է նշված ռազմավարական ծրագրից բխող

[59] Զեկույց «ՀՀ-ում ներառակն կրթության իրականացման գնահատում»
http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf

միջոցառումների իրականացման ուսումնասիրություն և 2015 թ. նոյեմբերին հրապարակվել է Տեղեկանք:[60]

Ելնելով վերոշարադրյալից, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

10. Գործողություն՝ (74) Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ոլորտում իրավասու մարմինների կողմից գնահատողական հայեցողության հնարավորինս կրճատման, հաշմանդամության որոշման չափորոշիչների առավելագույն հստակեցման, ԲՍՓՀ-ների գործունեության թափանցիկության ապահովման ուղղությամբ
Ակնկալվող արդյունքը՝ բժշկասոցիալական փորձաքննության մարմինների հայեցողության շրջանակները սահմանափակող, փորձաքննության թափանցիկությունն ապահովող և հաշմանդամության որոշման չափանիշները հստակեցնող իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահությանն նախարարություն

Ի կատարումն սույն գործողության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 12-ի N 1318-Ն որոշմամբ հաստատվել է «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը», որի նպատակն է փորձաքննվող անձի համաձայնության կամ ցանկության դեպքում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը բժշկասոցիալական փորձաքննության գործընթացին որպես դիտորդ՝ ապահովելով այդ գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Բացի այդ, բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի, դրա արդյունքում կայացրած որոշումների օբյեկտիվությունը և որոշման նկատմամբ վստահությունը բարձրացնելու նպատակով ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 24-ի «Բժշկասոցիալական փորձաքննական

[60] Տե՛ս Տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների իրականացման վերաբերյալ (2014 թ. ապրիլ – 2015 թ. սեպտեմբեր ժամանակահատված) http://hcav.am/publications/24-11-2015-02/

հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննություն անցնող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու կարգը հաստատելու մասին» N 1527-Ն ՀՀ կառավարության որոշումը: Ինչ վերաբերում է հաշմանդամության որոշման չափանիշների հստակեցմանը, ապա նախարարությունը հայտնել է, որ 2014թ. դեկտեմբերի 25-ին հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի «Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման հիման վրա հաշմանդամության սահմանման չափորոշիչները և դրանց կիրառման ուղեցույցը հաստատելու և փորձարկելու մասին» N 143-Ա/1 հրամանը: Հաշմանդամության սահմանման չափորոշիչները գնահատելու, մշակված գործիքները վերանայելու, խրոնոմետրաժ կատարելու, վերլուծություններ անելու նպատակով իրականացվել են ռետրոսպեկտիվ, պրոսպեկտիվ և պիլոտ փորձաքննություններ: Փորձաքննություններին նախորդել են վերապատրաստումներ գործընթացում ներգրավված ԲՍՓՀ բժիշկ-փորձագետների և սոցիալական աշխատողների համար: Իրականացվել է նաև միջազգային փորձի ուսումնասիրություն, կազմակերպվել է միջազգային գիտաժողով: Պիլոտ ծրագրի ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը մուտքագրվել է այդ նպատակով ստեղծված էլեկտրոնային ձևաչափերի մեջ, վերլուծվել և ներկայացվել են առաջարկություններ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների հիման վրա հաշմանդամության սահմանման նոր մոդելի փուլերով ներդրման վերաբերյալ:

Սույն գործողության համակատարող ՀՀ առողջապահության նախարարության կողմից տեղեկատվություն է տրամադրվել անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման չափորոշիչների մշակման նպատակով սեմինարներին, աշխատանքային խմբի քննարկումներին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության քարաքականության վարչության գլխավոր մասնագետի մասնակցության վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

11. Գործողություն՝ (75) Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման կազմակերպում
Ակնկալվող արդյունքը՝ հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման տրամադրում

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահությանն նախարարություն

Սույն գործողության կատարումը կրում է պարբերական բնույթ: Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրած տեղեկատվության, հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման կազմակերպումը հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարության ընթացիկ գործունեությունը, որն իրականացվում է ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմանը համապատասխան՝ պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում: Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչներին համապատասխան, կազմակերպվել է հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային, այդ թվում վերականգնողական բժշկական օգնությունն ու սպասարկումը՝ ըստ բժշկական ցուցումների, ստոմատոլոգիական բժշկական օգնությունն ու սպասարկումը, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները: Այսպես, 2014թ. 9 ամիսների դրությամբ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում են ստացել թվով 45665 հաշմանդամություն ունեցող անձինք, որի դիմաց ֆինանսավորումը կազմել է մոտ 4,8 մլրդ դրամ, իսկ 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում՝ 32245 հաշմանդամություն ունեցող անձինք, որոնցից 888-ը «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցողներ են:

Հաշվի առնելով տրամադրված տեղեկատվությունը, պարզ չէ, թե ինչ նպատակ ունի ՀՀ առողջապահության նախարարության ընթացիկ գործունեությունը սահմանել որպես ծրագրային գործունեություն, քանի որ այն, Ծրագրում սահմանված չլինելու դեպքում էլ այն իրականացվելու էր: Բացի այդ, որպես գործողություն այն ձևակերպված է շատ ընդհանրական: Միևնույն ժամանակ, չի տրամադրվել տեղեկատվություն ուսումնասիրվող ամբողջ ժամանակահատվածում սպասարկված հաշմանդամություն ունեցող անձանց թվի վերաբերյալ:

Այպիսով, նշված գործողության կատարումը չի բխում ՄԻ պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից:

12. Գործողություն՝ (76) Հայաստանի Հանրապետությունում հոգեկան հիվանդություններից հաշմանդամություն ունեցող անձանց համայնքային ծառայությունների տրամադրման մեխանիզմների իրավական ակտերի նախագծում և համապատասխան վերապատրաստումների իրականացում
Ակնկալվող արդյունքը՝ համայնքային խնամքի և հասարակական աջակցության ապահովման նպատակով անհրաժեշտ ուսումնասիրության իրականացում համապատասխան իրավական ակտերի հաստատում համապատասխան մասնագետների վերապատրաստում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահությանն նախարարություն

Սույն գործողության կատարման պատասխանատու մարմիններ են հանդիսանում ՀՀ առողջապահության նախարարությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: ՀՀ առողջապահության նախարարությունը ի պատասխան սույն գործողության կատարման վերաբերյալ Կազմակերպության հարցադրմանը, առաջարկել է դիմել ՀՀ արդարադատության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին: Պետք է նշել, որ եթե Առողջապահության նախարարությունը իրեն չի համարում սույն գործողության հասցեատեր, ապա պետք է համապատասխան առաջարկություն ներկայացներ ՀՀ կառավարությանը՝ սույն գործողության մասով իրեն պատասխանատու մարմինների ցանկից հանելու վերաբերյալ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից գործողության կատարման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրել, ինչը միգուցե վրիպակի կամ անհետևողականության արդյունք է:

Այսպես, 2013 թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ կառավարության կողմից N13 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017թթ. ծրագիրը»:[61] 2014 թ. ապրիլի 17-ին ՀՀ կառավարությունը հաստատել է «ՀՀ-ում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը»: [62] Նշված երկու ռազմավարական

[61] Տե՛ս ՀՀ կառավարության 2013 թ. սեպտեմբերի 13-ի N13 արձանագրային որոշումը https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2013/09/MAR36-4.pdf

[62] Տե՛ս ՀՀ կառավարության 2014 թ. ապրիլի 17-ի N15 արձանագրային որոշումը https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/04/15-1ardz.pdf

փաստաթղթերը նախատեսում են հանրապետությունում համայնքահեն ծառայությունների ներդրման միջոցով խնամքի մեծ հաստատությունների բեռնաթափում:

2014-2015թթ ընթացքում պետք է ստեղծվեին և գործարկվեին երկու համայնքահեն շուրջօրյա խնամքի տներ: Հիշյալ Ծրագրերի շրջանակներում ստեղծվել է միայն մեկ համայնքահեն ծառայություն՝ Սպիտակի խնամքի տունը՝ նախատեսված մինչև 16 անձի բնակության համար: Խնամքի տան ֆինասավորումն ապահովել է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպությունը:[63]Ներկայումս Սպիտակի խնամքի տան ֆինանսավորման շարունակականությունը վտանգված է, քանի որ բացակայում է պետական աջակցությունը և կամքը: Միևնույն ժամանակ, պետք է ընդգծել, որ «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017թթ. ծրագրով նախատեսված էր նաև համայնքահեն այլ տիպի ծառայությունների (ցերեկային կենտրոններ, այդ թվում երեխաների, դեռահասների, տարեց անձանց համար նախատեսված, տարեց անձանց շուրջօրյա խնամքի տներ, սատարող բնակարաններ) ներդրում, որոնք փաստացի չեն ներդրվել:

Կասկածից վեր է, որ նշված ռազմավարական փաստաթղթերի ընդունումն ուղղված էր ապահովելու «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածի լույսի ներքո ստանձնած պարտավորությունների կատարումը: Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել ապաինստիտուցիոնալացման դանդաղ առաջընթացի, շատ սահմանափակ աջակցության և հաշմանդամություն ունեցող երեխաների, չափահասների մեծ թվի վերաբերյալ, որոնք ապրում են բնակելի հաստատություններում: Կոմիտեն Հայաստանի Հանրապետությանը առաջարկել է արագացնել ապաինստիտուցիոնալացման գործընթացը և առանց հետաձգման իրականացնել դրա գործողությունների պլանը, ներառյալ՝ բոլոր հաստատությունների փակման ժամանակացույցը: Կոմիտեն նաև առաջարկում է անդամ պետությանը ձեռնարկել իրավական միջոցառումներ և հատկացնել բավարար ռեսուրսներ աջակցության ծառայությունների զարգացման համար (այդ թվում՝ անձնական աջակցողի ծառայության, որը կհեշտացնի հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքը համայնքում): Կոմիտեն առաջարկում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք, իրենց կազմակերպությունների միջոցով, ներգրավվեն ապաինստիտուցիոնալացման բոլոր փուլերում (պլանավորում, իրականացում, գնահատում և մոնիթորինգ):[64]

---

[63] Տե՛ս ՀՔԱՎ Տեղեկանքը «Սպիտակի խնամքի տուն. Ինստիտուցիոնալ համակարգից անցում համայնքային ծառայության» http://hcav.am/publications/27-04-2017-9887/

[64] Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի երզափակիչ դիտարկումները http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=21502&LangID=E

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է մեծամասամբ չիրականացված:

13. Գործողություն՝ (77) Հոգեկան հիվանդություններից հաշմանդամություն ունեցող անձանց համար կարողությունների զարգացմանն ու ինքնուրույնության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում հասարակական կյանքում նրանց լիարժեքորեն ներգրավման նպատակով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անձի անհատական կարիքները
Ակնկալվող արդյունքը՝ համապատասխան ծրագրերի՝ իրավական ակտով հաստատում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության աջակցությամբ մշակվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և ծառայությունների տրամադրման մեթոդաբանություն՝ ըստ նրանց ախտորոշումների, ախտաբանական վիճակների և հիվանդության աստիճանի:

Սույն գործողության իրականացման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն է պարունակում նաև Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թթ. ծրագրի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեղեկանքում:[65]

Սույն գործողության շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով տե՛ս Գործողություն 76-ի կատարման նկարագրությունը:

Այսպիսով այս գործողությունը կարելի է գնահատել չիրականացված:

Այսպիսով, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոլորտում ընդհանուր թվով նախատեսված էր իրականացնել 13 գործողություն, որից երեք գործողություն գնահատվել է ամբողջությամբ իրականացված, երկու գործողություն՝ մեծամասամբ իրականացված, երեք գործողություն՝ կիսով չափ իրականացված, երկուական գործողություն գնահատվել է մեծամասաբ չիրականացված և չիրականացված և ևս մեկ

[65] http://hcav.am/publications/05-14-2015-001/

գործողության կատարումը չի բխում ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից։

XII. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքներ (2)

1. Գործողություն՝ (78) Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզուները դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի բարելավում
Ակնկալվող արդյունքը՝ ուսումնական նյութերի տպագրում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Ի կատարումն սույն գործողության ՀՀ ԿԳՆ-ն հայտել է, որ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2015թ. վերահրատարակվել են «Եզդիերեն» «Այբբենարան», «Եզդիերեն» 2, «Եզդիերեն» 8, «Եզդիերեն» 12 և «Եզդիերեն» 1-12 ծրագրերը, «Քրդերեն» 8, «Քրդերեն» 9 և «Քրդերեն քերականություն» 5-9 դասագրքերը: Հունիսին ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտում իրականացվել են ասորերենի 20 ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Այսպիսով, ՀՀ ԿԳՆ-ի կողմից տեղեկատվություն է տրամադրվել եզդիներենի և քրդերենի դասագրքերի վերահրատարակման վերաբերյալ, սակայն որևէ տեղեկատվություն չի տրամադրվել նշված կամ այլ ազգային փոքրամասնությունների լեզուները դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի բարելավման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

2. Գործողություն՝ (79) Ազգային և էթնիկ փոքրամասնությունների լեզուներով ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ապահովման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում
Ակնկալվող արդյունքը՝ ազգային փոքրամասնությունների մասին ռադիո-և հեռուստահաղորդումների հեռարձակում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով

Սույն գործողության համար որպես պատասխանատու մարմին է նշված ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը համաձայնության պայմանով։
ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից տրամադրված տեղեկատվությունը վերաբերում է«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին։
Այսպես, Հանձնաժողովը հայտնել է, որ նշված օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «դ» ենթակետով հանրային հեռուստաընկերությունը պարտավոր է եթերային ժամանակ տրամադրել ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար։ Այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը։ Այս պարտականությունների իրականացման շրջանակներում, հանրային հեռուստատեսության և ռադիոյի եթերում պարբերաբար հեռարձակում են հաղորդումներ Հայաստանի ազգային փոքրամասնությունների մասին՝ նվիրված ինչպես նրանց լեզվին, մշակույթին և պատմությանը, այնպես էլ ազգային փոքրամասնությունների խնդիրներին։ Ավելին, հանրային ռադիոընկերությունը իր գերկարճ ռադիոալիքով, օրվա ընթացքում եթեր է հեռարձակում հաղորդումներ ազգային փոքրամասնությունների 5 լեզուներով՝ քրդերեն, եզդիերեն, ասորերեն, ռուսերեն և հունարեն, որոնց ընդհանուր քանակը գերազանցում է օրական մեկ ժամ տևողությունը։ Յուրաքանչյուր առանձին լեզվով հաղորդումները անում են օրական մինչև մեկ ժամ։ Հանրային հեռուստաընկերության եթերով հեռարձակվում են նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով ֆիլմեր, որոնք ուղեկցվում են հայերեն լուսագրով։ Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնաությունների վերաբերյալ հեռարձակված հեռուստառադիոհաղորդումներին, ապա Հանձնաժողովի կողմից տեղեկատվություն չի տրամադրվել քանի որ նման տեղեկատատվություն հեռուստաընկերությունները չեն ներկայացնում։ Հանձնաժողովի կողմից հեռուստաընկերությունների նկատմամաբ վերահսկողություն իրականացվում է մշտադիտարկման և Հանձնաժողովին ներկայացված հաշվառման մատյանների տվյաների համադրության միջոցով։

Այսպիսով, սույն գործողությունը չունի հիմնական պատասխանատու մարմին, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը պատասխանատու է համաձայնության պայմանով։ Տրամադրված տեղեկատվությունը վերաբերում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքին, որի պահանջները կատարելը կախվածության մեջ չէ որևէ ռազմավարական փաստաթղթից և հանդիսանում է ոլորտի սուբյեկտների պարտականությունը։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տրամադրված տեղեկատվությունը վերաբերում է հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ընթացիկ գործունեությանը,

սույն գործողության կատարումը չի բխում ՄԻ պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից:

Այսպիսով, Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքի ոլորտում նախատեսված էր իրականացնել ընդհանուր առմամբ 2 գործողություն: Գործողություններից առաջինը գնահատվել է չիրականացված, իսկ մյուս գործողության իրականացումը չի բխում ՄԻ պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով:

XIII. Փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքներ (11)

1. Գործողություն՝ (80) Ձեռնարկել միջոցառումներ՝ Փախստականի կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը «Փախստականի կարգավիճակի մասին» 1951 թ. կոնվենցիայի, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության պահանջներին համապատասխանեցնելու և կիրառելիությունն ապահովելու ուղղությամբ
Ակնկալվող արդյունքը՝ փաստաթղթի համապատասխանեցում Փախստականի կարգավիճակի մասին կոնվենցիայի, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության պահանջներին Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ոստիկանություն

Ի կատարումն սույն գործողության ՀՀ ոստիկանությունը հայտնել է, որ 2015թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է «Փախստականի և ապաստանի մասին» ՀՀ օրենքը (փաթեթում ներառված է նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը), որով «Փախստականի կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի 1951 թ. Կոնվենցիայի 27-րդ և 28-րդ հոդվածների համաձայն՝ փախստականին պետության տարածքում տրամադրվում է ինքնության վկայական, իսկ տարածքից դուրս ճամփորդելու համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ:[66]

Գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

[66] «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=33954

2. Գործողություն՝ (81) Քաղաքացիություն չունեցող անձանց ինքնությունը հավաստող փաստաթղթերի տրամադրում՝ 1954 թվականի Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին համապատասխան

Ակնկալվող արդյունքը՝ համապատասխան իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ոստիկանություն [67], ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Սույն գործողության համար պատասխանատու մարմիններից ՀՀ ոստիկանությունը հայտնել է, որ մշակվել է «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը: Փաթեթի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից, ինչպես նաև ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի կենտրոնական գրասենյակից ստացված առաջարկությունները ամփոփվել են ՀՀ ոստիկանությունում, որից հետո 2016թ. հունիսի 30-ին ուղարկվել է ՀՀ կառավարություն:

Ինչ վերաբերում է սույն գործողության համակատարողներ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ապա վերջիններս առաջարկել են դիմել գործողության հիմնական կատարողին՝ ՀՀ ոստիկանություն:

Քննարկվող նախագիծը դեռևս հանրային քննարկման չի դրվել, ուստի, ունի ուսումնասիրության կարիք:

Հաշվի առնելով, որ գործողության արդյունքն է կազմում իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

3. Գործողություն՝ (82) Ապաստան հայցողների և փախստականների իրավունքների ապահովման վերաբերյալ ազգային օրենսդրության ներդաշնակեցում միջազգային չափանիշներին

Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը

[67] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ 81-րդ կետում 5-րդ սյունակը «ՀՀ արտաքին գործերի նախարարություն» բառերից առաջ լրացնել «ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն» բառերով: http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի պետական ծառայություն, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի պետական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 5-ի նիստի օրակարգում ընդգրկվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Սույն նախագծերի նպատակն է ներդաշնակեցնել ՀՀ-ում ապաստան հայցողների և փախստականների իրավունքների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը եվրոպական չափանիշներին:

Այսպիսով, թեև փաստաթուղթը կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրության և վերլուծության, այնուամենայիվ կարելի է արձանագրել, որ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիայի պետական ծառայության կողմից իրականացվել են անհրաժեշտ միջոցառումներ սույն գործողության իրականացման ուղղությամբ:

Կազմակերպության կողմից լրացուցիչ ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 2015 թ. ապրիլի 7-ին ընդգրկվել է ՀՀ Ազգային Ժողովի նիստի օրակարգ, իսկ 2015 թ. դեկտեմբերի 16 ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ[68]: Միևնույն ժամանակ, հաշվի անելով, թե որքան է տևում օրենսդրական նախագծերի մշակման գործընթացը ՀՀ-ում, այստեղ ևս կարելի է արձանագրել, որ 2014թ. փետրվարի 27-ին հաստատված ՄԻՈ բխող միջոցառումների ծրագրում ներառվել է մի գործողություն, որը արդեն իսկ իրականացման փուլում է եղել, և նույնիսկ իրականացվել է մինչ միջոցառումների ծրագրի հաստատումը: Բացի այդ, իրավական ակտի նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի թիվ 1593 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ գործողությունների ծրագրից:[69]

Այսպիսով, սույն գործողության կատարումը չի բխում ՄԻ պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից:

[68] «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=36759

[69] Տե՛ս առաջին ընթերցման ներկայացված նախագծին կից հիմանվորումը http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=7369&Reading=0

4. Գործողություն՝ (83) Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց Հայաստանի Հանրապետությունում լիարժեք ինտեգրման համար նպաստավոր պայմանների ստեղծում

Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի ընդունում, որը նախադրյալներ կստեղծի ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության մշակման և ծրագրերի իրականացման համար

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Ի սկզբանե սույն գործողության կատարման ժամկետն էր սահմանված 2015թ. առաջին եռամսյակը, սակայն ՀՀ կառավարության 2015թ. ապրիլի 9-ի 371-Ն որոշմամբ այն երկարաձգվեց մինչև 2016 թ. երրորդ եռամսյակ: [70]

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը հայտնել է, որ մշակվել է «ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց, ինչպես նաև Երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի նախագիծ, որին հավանություն է տրվել ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 21-ի թիվ 28 արձանագրային որոշմամբ: Բացի այդ, մշակվել է նշված հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագրի նախագիծ, որին հավանություն է տրվել ՀՀ կառավարության 2017 թ. փետրվարի 23-ի թիվ 8 արձանագրային որոշմամբ: [71]

Ինչ վերաբերում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ինչպես նաև ՀՀ ոստիկանությանը, որոնք հանդիսանում են սույն գործողության համակատարողներ, ապա որևէ տեղեկատվություն չի տրամադրվել: ՀՀ ոստիկանությունը նշում է, որ սույն գործողության կատարման ժամկետը ավարտվել է 2014թ., ինչը ևս փաստում է Ծրագրի նկատմամբ վերջինիս անհետևողականության մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

[70] ՀՀ կառավարության 2015թ. ապրիլի 9-ի թիվ 371-Ն որոշմամբ հավելվածի 83-րդ կետի 4-րդ սյունակում «2015 թ. առաջին եռամսյակ» բառերը փոխարինվել են «2016 թ. երրորդ եռամսյակ» բառերով:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=97160

[71] ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 21-ի թիվ 28 արձանագրային որոշում
https://www.e-gov.am/protocols/item/653/
ՀՀ կառավարության 2017 թ. փետրվարի 23-ի թիվ 8 արձանագրային որոշում
https://www.e-gov.am/protocols/item/721/

5. Գործողություն՝ (84) Ապաստան հայցողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին ամբողջական տեղեկատվության ապահովում

Ակնկալվող արդյունքը՝ իրավունքները մանրամասնող նյութերի տպագրում

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի պետական ծառայություն

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2014թ. ծառայության կողմից լրամշակվել է 2011թ. մշակված և հրատարակված «Ապաստան հայցողների և փախստականների համար տեղեկատվական գրքույկը»: Ծառայության խնդրանքով ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ) 2014թ. կազմակերպել է լրամշակված ձեռնարկի հրատարակումը 4 լեզուներով՝ 1900 տպաքանակով (հայերեն՝ 500, անգլերեն 450, ֆրանսերեն 450, պարսկերեն 500): Միևնույն ժամանակ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից հրատարակվել է «Տեղեկատվական թերթիկ փախստականների, ապաստան հայցողների և տեղահանված այլ անձանց համար»՝ 7 լեզուներով, 6.000 տպաքանակով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, թուրքերեն, պարսկերեն), ինչպես նաև «Հաճախ տրվող իրավական հարցերի պատասխաններ Սիրիայից Հայաստան տեղահանված անձանց համար» տեղեկատվական ձեռնարկը՝ 3 լեզուներով, 4.200 տպաքանակով (հայերեն, անգլերեն և արաբերեն):

Այսպիսով սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

6. Գործողություն՝ (85) Իրականացնել տեղեկատվական արշավ Ադրբեջանից բռնագաղթած հայ փախստականների իրավունքների վերաբերյալ, ներառյալ՝ պարզեցված նատուրալիզացման սխեմայի վերաբերյալ

Ակնկալվող արդյունքը՝ սեմինարների, պարբերական քննարկումների, հանրամատչելի նյութերի տպագրման միջոցով իրազեկվածության բարձրացում

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի պետական ծառայություն

Ի կատարումն սույն գործողության ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությունը հայտնել է, որ իրազեկման նպատակով ծառայության աշխատակիցների կողմից հանդիպումներ են կազմակերպվել 2015թ. հուլիս և հոկտեմբեր ամիսներին Երևանի Մոլդովական 29/1 և Շիրակի 2ա հանրակացարաններում բնակվող փախստականների հետ: ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությունը ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության պետական գործակալության Նոր Նորքի տարածքային կենտրոնի, Հայկական կարմիր խաչ ընկերության, Սեյվ դե չիլդրեն կազմակերպության, Առաքելություն Հայաստան կազմակերպության ներկայացուցիչները պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից փախստականների համար 2015 թ.-ին իրականացվող ծրագրերի և դրանց շրջանակներում մատուցվող ծառայությունների մասին իրազեկելու նպատակով այցելել են նաև Նոր Նորքի Մոլդովական 29/1 հասցեում գտնվող հանրակացարան: Տեղեկատվություն է տրամադրվել նաև իրականացված սեմինարների, քննարկումների վերաբերյալ, մասնավորապես, 2015 թվականի հուլիսի 1-ին փախստականների հիմնախնդիրներով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների համար ՀՀ ՏԿԱԻՆ միգրացիոն պետական ծառայությունում կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ փախստականների և ապաստանի վերաբերյալ օրենսդրական զարգացումների մասին նրանց իրազեկելու նպատակով: Ինչ վերաբերում է հանրամատչելի նյութերի միջոցով իրազեկվածության բարձրացմանը, ապա ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությունը հայտնել է, որ 2014 թվականին մշակվել է «Ապաստան հայցողների և փախստականների համար տեղեկատվական գրքույկ»-ը: Ծառայության խնդրանքով ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ) 2014 թվականին կազմակերպել է ձեռնարկի հրատարակումը 4 լեզուներով՝ 1900 տպաքանակով (հայերեն 500, անգլերեն 450, ֆրանսերեն 450, պարսկերեն 500): Միևնույն ժամանակ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից հրատարակվել է «Տեղեկատվական թերթոն փախստականների, ապաստան հայցողների և տեղահանված այլ անձանց համար»՝ 7 լեզուներով, 6.000 տպաքանակով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, թուրքերեն, պարսկերեն), ինչպես նաև «Հաճախ տրվող իրավական հարցերի պատասխաններ Սիրիայից Հայաստան տեղահանված անձանց համար» տեղեկատվական ձեռնարկը՝ 3 լեզուներով, 4.200 տպաքանակով (հայերեն, անգլերեն և արաբերեն):

Այպիսով, ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվությունը պարունակում է սույն գործողությունը կազմող բոլոր բաղադրիչների վերաբերյալ տեղեկատվություն:

Հաշվի առնելով վերոգրյալը գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

7. Գործողություն՝ (86) Բացառել ապաստան հայցողների՝ երկիր ապօրինի մուտք գործելու հիմքով պատասխանատվության ենթարկելը

Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի պետական ծառայության կողմից ներկայացված «ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015թթ. միջոցառումների» իրականացման ընթացքի վերաբերյալ Միգրացիոն պետական ծառայության կողմից ներկայացված զեկույց[72]

Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիայի պետական ծառայության կողմից ներկայացված «ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015թթ. միջոցառումների» իրականացման ընթացքի վերաբերյալ Միգրացիոն պետական ծառայության կողմից ներկայացված զեկույցի մեջ նշված տեղեկատվության՝ ՀՀ-ում ապաստան հայցողներին՝ երկիր ապօրինի մուտք գործելու հիմքով պատասխանատվության ենթարկելը բացառելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Այպես, Կազմակերպության կողմից լրացուցիչ ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված Նախագիծն արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը և 2014 թ. հունիսի 21-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Քննարկվող իրավական ակտով ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասում (պետական սահմանն աօրինի հատելը) կատարվել է փոփոխություն, որով հոդվածի գործողությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ վերապահված ապաստանի իրավունքից օգտվելու համար օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն:[73]

Այսպիսով այս գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

[72] http://www.smsmta.am/upload/RA-EU14_report2.pdf

[73] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասը http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112492

8. Գործողություն՝ (87) Ստեղծել անհրաժեշտ պայմաններ ՀՀ պետական սահմանի անցակետերում օտարերկրացիների համար նախատեսված հատուկ կացարաններում հասարակական կազմակերպությունների կողմից մշտադիտարկում իրականացնելու նպատակով

Ակնկալվող արդյունքը՝ ձեռնարկված քայլերի մասին հաշվետվողականությունը և առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն

ՀՀ ԿԱ ԱԱԾ կողմից տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ օտարերկրացիներին պահելու հատուկ կացարան գործում է միայն «Զվարթնոց» օդանավակայանում և համաձայն ՀՀ-ում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցչի և հայկական Կարմիր խաչի ընկերության գլխավոր քարտուղարի՝ նախօրոք ներկայացված 2014թ. այցելությունների ժամանակացույցի՝ «Հայ օգնության միություն», «Հույս և օգնություն», «Մարդը դժբախտության մեջ» հասարակական կազմակերպությունների և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներկայացուցիչների կողմից իրականացվում են մոնիթորինգային այցեր: Իսկ հայ-վրացական սահմանի նոր անցակետերում («Բագրատաշեն», «Բավրա», «Գոգավան») նախատեսվում են միջազգային չափանիշներին համապատասխան օտարերկրացիներին պահելու հատուկ կացարանների կառուցում:

Այսպիսով, ԱԱԾ-ի կողմից տեղեկատվություն է տրամադրվել իրականացված մոնիթորինգային այցերի վերաբերյալ և չի տրամադրվել տեղեկատվություն այն միջոցառումների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են մշտադիտարկում իրականացնելու համար: Իրականացված այցելությունների հաճախականության, մշտադիտարկման արդյունքների, ինչպես նաև վերհանված խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը ևս բացակայում է: Սույն գործողության արդյունքն է կազմում ձեռնարկված քայլերի մասին հաշվետվողականությունը և առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը, որի մասին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ելնելով վերոգրյալից սույն գործողությունը գնահատվում է մեծամասամբ չիրականացված:

9. Գործողություն՝ (88) «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների մշակում, մասնավորապես, «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թ. կոնվենցիային համապատասխանեցնելու նպատակով

Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը
Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ոստիկանության կայքէջ

ՀՀ ԿԱ ոստիկանության կայքէջում հանրային քննարկման է դրվել «ՀՀ քաղաքացիություն մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը մշակվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից՝Միավորված Ազգերի Փախստականների գծով Գերագույն Հանձնակատարի Հայաստանյան Գրասենյակի առաջարկությունների հիման վրա: Օրենքում կատարված որոշակի փոփոխությունների արդյունքում նախատեսվում է նպաստել «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թ. կոնվենցիայի պահանջների ներառմանը ՀՀ օրենսդրության մեջ ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց թվաքանակի կրճատման:

Կազմակերպության կողմից լրացուցիչ ուսումնասիրությամբ պարզվել է, որ Նախագիծը 2014թ. մայիսի 19-ին ուղարկվել է ՀՀ կառավարություն, իսկ 2015թ. մայիսի 7-ին ԱԺ կողմից ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:[74]

Թեև կատարված փոփոխություններն ունեն ուսումնասիրության կարիք, այնուամենայնիվ սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

10. Գործողություն՝ (89) Քննարկել «Քաղաքացիության մասին» 1997թ. եվրոպական կոնվենցիային և «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիությունից խուսափելու մասին» Եվրոպայի խորհրդի 2006թ. կոնվենցիայի վավերացման նպատակահարմարության հարցը

Ակնկալվող արդյունքը՝ համապատասխան առաջարկությունը ՀՀ կառավարություն ներկայացնելը
Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արտաքին գործերի նախարություն, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Քաղաքացիության մասին» 1997թ. եվրոպական կոնվեցիայի վավերացումը ՀՀ-ի կողմից գնահատվել է ոչ նպատակահարմար: «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիությունից խուսափելու մասին» Եվրոպայի խորհրդի 2006թ. կոնվենցիայի վավերացումը գտնվել է ոչ արդիական, հաշվի առնելով, որ Կոնվենցիան

[74] Տե՛ս «ՀՀ քաղաքացիություն մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=33944

անդրադառնում է ապաքաղաքացիությունից խուսափելուն միայն այն դեպքում, երբ առկա է պետությունների իրավահաջորդության խնդիր:

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչությունը հայտնել է, այն մասին, որ այս կոնվենցիայի վավերացման վերաբերյալ իրենց դիրքորոշումը ՀՀ ոստիկանության կողմից 25.02.2014թ. թիվ 2/5-2-3411 գրությամբ ուղարկվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ ոստիկանությունը իր հերթին «Քաղաքացիության մասին» 1997թ. կոնվենցիայի վավերացումը համարում է նպատակահարմար, իսկ «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիությունից խուսափելու մասին» ԵԽ 2006թ. կոնվենցիային՝ Հայաստանի Հանրապետության համար ոչ արդիական:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ Քաղաքացիության մասին» 1997թ. Եվրոպական կոնվենցիայի և «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիությունից խուսափելու մասին» Եվրոպայի Խորհրդի 2006թ. կոնվենցիայի վավերացման նպատակահարմարության հարցի վերաբերյալ ՀՀ կառավարության միասնական դիրքորոշման հարցը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

Թեև սույն գործողության ուղղությամբ պատասխանատու գերատեսչությունների կողմից իրականացվել են գործողություններ, այնուամենայնիվ ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված պատասխանի համաձայն խնդիրը գտնվում է քննարկման փուլում:

Սույն գործողությունը գնահատվում է մեծամասամբ չիրականացված:

11. Գործողություն՝ (90) Քայլեր ձեռնարկել փախստականներին կացարանով ապահովելու վերաբերյալ իրավական ակտերում կիրառվող կացարան/ հանրակացարան եզրույթների հստակ տարանջատման ուղղությամբ
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե

ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից մշակվել է «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի նպատակն է փախստականների բնակապահովման հարցերը կարգավորող իրավական ակտերում կիրառվող

կացարան/հանրակացարան եզրույթների հստակեցումը: Կառավարության որոշումը ընդունվել է 2014 թվականի հոկտեմբերի 16-ին:[75]

Այսպիսով սույն կետը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

Այսպիսով, Փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների ոլորտում ընդհանուր թվով 11, որից 8 գործողություն գնահատվել է ամբողջությամբ իրականացված, 2 գործողություն գնահատվել է որպես մեծամասամբ չիրականացված, և ևս մեկ գործողության կատարումը չի բխում ՄԻ պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրից:

XIV. Մշակութային իրավունքներ (5)

1. Գործողություն՝ (91) Թանգարանների և գրադարանների հավաքածուների պահպանման, համալրման և հանրայնացման ծրագերի իրականացում

Ակնկալվող արդյունքը՝ մշակութային ժառանգության թվանշայնացում
Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀՀ մշակույթի նախարարությունը հայտնել է, որ սույն գործողության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն է տեղադրված ՀՀ մշակույթի նախարարության պաշտոնական կայքէջում :

Կազմակերպության կոցմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ՀՀ մշակույթի նախարարության կայքէջում հրապարակված է ընդհանուր բնույթի տեղեկատվություն ՀՀ կառավարության տարեկան գործունեության ծրագերի շրաջանակներում Մշակույթի նախարարության գործունեության վերաբերյալ, և ՄԻ Ծրագրից բխող միջոցառումների (այդ թվում՝ սույն կետի) իրականացման վերաբերյալ կայքէջում որևէ տեղեկատվություն/հաշվետվություն տեղադրված չէ:[76]

Պետք է նաև նշել, որ սույն գործողության կատարման արդյունքը չի համապատասխանում գործողության բովանդակությանը, վեջինս ավելի լայն է: Իսկ նախարարության կայքէջում հրապարակված հաշվետվությունները չեն կարող մեկնաբանվել որպես սույն ռազմավարական ծրագրի կատարողական: Ուստի, նախարարության կողմից չի տրամադրվել տեղեկատվություն թանգարանների և

[75] http://www.arlis.am/documentview.aspx?docid=93425

[76] Տե՛ս http://mincult.am/reports.html

գրադարանների հավաքածուների պահպանման, համալրման և հանրայնացման ծրագրերի իրականացումն վերաբերյալ:

Այսպիսով, սույն գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

2. Գործողություն՝ (92) Մշակութային ժառանգության թվայնացում, տեղեկատվական շտեմարանների ստեղծում
Ակնկալվող արդյունքը՝ տեղեկատվական շտեմարանների գործարկում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ մշակույթի նախարարություն

Համաձայն ՀՀ մշակույթի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծման ուղղությամբ ՀՀ կառավարության 2014թ սեպտեմբերի 11-ի N 1058-Ն որոշմամբ հաստատվել է «Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծման կարգը և շտեմարանին տեղեկատվություն տրամադրող կազմակերպությունների ցանկը», որի նպատակն է Հայաստանի և արտերկրի տարածքում գտնվող ազգային մշակութային արժեքների, թանգարանների և պահոցների հավաքածուների վերաբերյալ տեղեկույթի միասնական ձևաչափով մեկ համակարգում հավաքագրումը, համակարգումը և հանրահռչակումը: Այս ուղղությամբ թանգարանների համապատասխան մասնագետների միջոցով կազմվել և շտեմարանի ծրագիրն ստեղծող կազմակերպություն է ներկայացվել առարկաների թեմատիկ դասակարգման ենթաթեմաներում ընդգրկվելիք առարկաների տիպային կամ տեսակային անվանումների, ինչպես նաև դրանց յուրաքանչյուրի չափման միավորների ցանկը, կազմվել է շտեմարանին տեղեկույթ տրամադրող կազմակերպությունների համապատասխան մասնագետներին վերապատրաստելու դասընթացի թեմատիկ ծրագիրը, մասնակիցների ցուցակն ու նրանց տրամադրվելիք վերապատրաստման վկայականի ձևը, աշխատանքներ են տարվել դասընթացի մասնակիցներին տրամադրվելիք դիդակտիկ նյութերի նախապատրաստման ուղղությամբ, իրականացվել է վերապատրաստման դասընթացներ, շտեմարանին տեղեկույթ տրամադրող կազմակերպությունների հետ աշխատանքներ են տարվել իրենց հավաքածուների թվայնացման գործընթացը պահանջվող ձևաչափին համապատասխանեցնելու ուղղությամբ՝ նրանց տրամադրելով ձևաչափը, լրացման պահանջներն ու օժանդակ այլ նյութեր, ստեղծվել է շտեմարանի համակարգչային ծրագիրը, համապատասխան տարածքում տեղակայված է շտեմարանի սերվերը, որը միացված է ինտերնետ ցանցին, և մշակութային արժեքների տվյալներ շտեմարան ներբեռնող կազմակերպությունները 2016 թվականից սկսած՝ կարող են սկսել

աշխատանքները, մեկնարկել է «Հայ լուսանկարչության շտեմարանի ստեղծման» ծրագիրը:

Բացի այդ, տրամադրվել է տեղեկատվություն Հայաստանի ազգային գրադարանում «Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանի ծրագրի շարունակման, «Հայ գիրք» համահավաք շտեմարանի ձևավորման աշխատանքների վերաբերյալ:

Այսպիսով, ՀՀ մշակույթի նախարարության կողմից սույն գործողության շրջանակներում տրամադրվել է ամբողջական տեղեկատվություն:

Ելնելով վերոգրյալից սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

3. Գործողություն՝ (93) Հասարակության անապահովության և խոցելի խմբերի համար վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու զեղչերի համակարգի ներդրում

Ակնկալվող արդյունքը՝ զեղչերի համակարգի ներդրում
Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ մշակույթի նախարարություն

Մշակույթի նախարարությունը հայտնել է, որ թանգարաններում շարունակվել են դպրոցական տարիքի երեխաների, ուսանողների և թոշակառուների համար սահմանված մշտական այցելության տոմսի արժեքի (ոչ ավելի, քան 300 դրամ) արտոնության կիրառումը, բոլոր այցելուների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը սահմանված անվճար այցելության արտոնության կիրառումը (հիմք՝ ՀՀ մշակույթի նախարարի 2009 թ. օգոստոսի 3-ի «Թանգարանի մշտական ցուցադրության այցելության և բացատրության (էքսկուրսիայի) տոմսերի գների և արտոնությունների մասին» N 458-Ա հրամանի 2-րդ, 3-րդ կետեր): Նախարարության կողմից տրամադրվել է նաև տեղեկատվություն գրադարաններում, թատրոններում, համերգասրահներում, մի շարք մշակութային օջախներում իրականացված միջոցառումների մասին:

Հարկ է նշել, որ գործողության արդյունքը իրենից ներկայացնում է զեղչերի համակարգի ներդրումը, որի վերաբերյալ Մշակույթի նախարարությունը որևէ տեղեկատվություն չի տրամադրել: Ինչ վերաբերում է ՀՀ ԱՍԻՆ-ը, որը հանդիսանում է սույն գործողության համակատարող,ապա որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ելնելով վերոգրյալից սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

4. Գործողություն՝ (94) Ելնելով մշակութային հաստատությունների շենքերի տեխնիկական պայմաններից՝ հնարավորության սահմաններում միջոցներ ձեռնարկել՝ շենքերը հարմարեցնելու հաշմանդամություն ունեցող անձանց ելքի ու մուտքի համար
Ակնկալվող արդյունքը՝ պայմանների ապահովում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ մշակույթի նախարարություն

ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի և ՀՀ մշակույթի նախարարության կողմից տեղեկատվություն է տրամադրվել մշակութային օբյեկտների շենքերը հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի հարմարեցնելու նպատակով համապատասխան պայմանների ապահովման վերաբերյալ: Մասնավորապես, տրամադրվել է տեղեկատվություն «Մարտիրոս Սարյանի տուն թանգարան» ՊՈԱԿ-ի վերակառուցման վերաբերյալ՝ կառուցվել է թեքահարթակ, հարմարեցվել է սանհանյգույցը, վերելակը: «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ին ամրացված տարածքում, «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնի հիմնակմախքի, գ. Քուչակի մշակույթի տան ավարտման գ. Գավառի թատրոնի շենքի կառուցման ուղղությամբ իրականացվող շինարարական աշխատանքներն ավարտման փուլում են: Ամբողջությամբ (ազատ տեղաշարժ և սանհանգույցներ) լուծված է նորակառույց կամ վերանորոգված Հայոց ցեղասպանության և Կոմիտասի թանգարան-ինստիտուտներում, Մ.Սարյանի տուն-թանգարանում, ինչպես նաև 32 կազմակերպությունում, որոնցից՝ 9-ը գտնվում է առաջին հարկում և թեքահարթակների անհրաժեշտություն չկա (Հ.Թումանյանի անվան տիկնիկային թատրոն, Կամերային երաժշտության ազգային կենտրոն, Վ.Պետրոսյանի անվան Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու, Արմավիրի մարզային, երաժշտագիտական գրադարաններ, Փայտարվեստիթանգարան, Ստեփանավանի մշակութի և ժամանցի կենտրոն): Կազմակերպություններից 15-ը տեղում ստեղծում է բոլոր հնարավորությունները՝ Ա.Սպենդարյանի անվան օպրեայի և բալետի (առաջին կարգից մասամբ հանվել են նստատեղեր և ստեղծվել պայմաններ), Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոններ (մուտքը անվասայլակի օգնությամբ տեղաշարժվող անձանց համար իրականացվում է թատրոնի բակի կողմից), Երևանի Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց, Հայաստանի ազգային պատկերասրահ, Ե.Չքարենցի անվան գրականության և արվեստի, Ռուսական արվեստի, Երվանդ Քոչարի, Հ.Թումանյանի թանգարաններ (ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ անվասայլակի օգնությամբ տեղարաշվող անձանց համար), Կ.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական (տոմսարկղի մուտքից ստեղծվել են անհրաշեժտ պայմաններ

անվասայլակի օգնությամբ տեղաշարժվող անձանց համար), Արտաշատի, Ա.Խարազյանի անվան պետական դրամատիկական, Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական, Երևանի խամաճիկների պետական թատրոններ (մուտքն իրականացվում է այլ հարմարանքների տեղադրման օգնությամբ, դահլիճում ստեղծված են անհրաժեշտ պայմաններ (նստատեղեր անվասայլակի օգնությամբ տեղաշարժվող անձանց համար), Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարան (առաջին հարկի մուտքի մոտ կա թեքահարթակ, որի միջոցով էլ անվասայլակի օգնությամբ տեղաշարժվող անձինք մուտք են գործում գրադարան, իսկ ներսում տեղաշարժումն իրականացվում է վերելակի օգնությամբ, ընթերցասրահներում կան հատուկ բազմոցներ նրանց ընթերցանությունը կազմակերպելու համար), Կոտայքի մարզային գրադարան (առաջին հարկի մուտքի մոտ կա թեքահարթակ, որի միջոցով էլ անվասայլակի օգնությամբ տեղաշարժվող անձինք մուտք են գործում գրադարան)։ Կազմակերպություններից 8-ը ունի թեքահարթակներ (Հայաստանի պետական ֆիլարմոնիկ նվագախումբ, Վանաձորի Ա.Աբելյանի անվան, Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական, Պետական կամերային երաժշտական թատրոններ, Օրբելի եղբայրների տուն-թանգարան, «Պատմամշակութային արգելոց-«Զվարթնոց» մասնաճյուղ, Շիրակի մարզային գրադարան, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան)։

Գործողության կատարման ուղղությամբ թեև պատասխանատու մարմինների կողմից ձեռնարկվել են միջոցառումներ, այնուամենայնիվ դրանք բավարար չեն ոլորտում առկա խնդիրները լուծված համարելու համար։ Պատահական չէ, որ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն Հայաստանի կողմից Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել մատչելության բացակայության, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների (հատկապես գյուղական վայրերում ապրող) սպորտի և մշակութային գործունեության և միջոցառումների մատչելիության, նրանց մասնակցության սահմանափակ լինելով և առաջարկել է Հայաստանի Հանրապետությանը ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան ակտիվորեն մասնակցելու մշակութային և սպորտային գործունեությանը, ունենան հավասար մուտք շենքեր և ծառայություններ (այդ թվում՝ գրադարաններ, սպորտային և մշակութային միջոցառումներ և շենքեր)։[77]

Ելնելով վերոգրյալից սույն գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված։

[77] Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի երզափակիչ դիտարկումները http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=21502&LangID=E

5. Գործողություն՝ (95) Մշակույթի տարբեր ոլորտներում քաղաքականության իրականացման աշխատանքներին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկում և մասնակցություն
Ակնկալվող արդյունքը՝ ծրագրերի իրականացում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ մշակույթի նախարարություն

Համաձայն ՀՀ մշակույթի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ մշակույթի տարբեր ոլորտներում ընդգրկման և մասնակցության նպատակով կազմակերպվում են նրանց ազգագրությունն ու ժամանակակից արվեստը ներկայացնող ցուցահանդեսներ, համերգներ, փառատոններ: Այսպես, աջակցություն է ցուցաբերվել՝ «Եզդիների ազգային միություն» ՀԿ-ին՝ ՀՀ մարզերում եզդիական, մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումների, «Միջէթնիկ և միջմշակութային հանցագործությունների կենտրոն» մարդասիրական ՀԿ-ին՝ «Նարեկացի» արվեստի միությունում եզդիների ցեղասպանության դատապարտմանը նվիրված լուսանկարչական ցուցահանդեսի կազմակերպմանը, «Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» ՀԿ-ին՝ հույների ցեղասպանության մասին «Արգոնավորդների հետքերով» վավերագրական ֆիլմի հայերեն թարգմանությանը, Հայաստանում «Մինորա» հրեական մշակութային կենտրոն ՀԿ-ին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Վիլլի Վայների 60-րդ տարեդարձին նվիրված հոբելյանական երեկոյի կազմակերպմանը, «Սինջար» եզդիների ազգային միավորում» ՀԿ-ին՝ «Մատիտով» մանկապատանեկան նկարչական ցուցահանդեսին, Հունաստանի Հանրապետությունում «Grape festival «The harvest by the centuries, Stimaga» միջազգային ժողովրդական պարի փառատոնին «Իսարիտոնի» հունական համույթի մասնակցությանը, «Մենորա» հրեական մշակութային կենտրոնին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, երաժիշտ-կոմպոզիտոր Վիլյամ Վայների երգչախմբային ստեղծագործությունների «Willy Weiner & Friends» ձայնասկավառակի ձայնագրմանն ու հրատարակմանը:

Ազգային փոքրամասնությունների էթնիկ մշակույթի ներկայացման համար լրացուցիչ պայմանների ապահովման նպատակով՝ քննարկվել է Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Զ.Սարկավագի 68 հասցեում գտնվող ռուս ուղղափառ եկեղեցու համալիրում ընգրկված մկրտարանի կառուցման էսքիզային նախագիծը, որի վերաբերյալ նախարարությունը տվել է իր համաձայնությունը, և այժմ այդ նախագծով իրականացվում են շինարարական աշխատանքներ: Վերին Դվինի և Արզնիի ասորական ուղղափառ եկեղեցիների նախագծանախահաշվային փաստաթղթերը համաձայնեցվել են լիազոր մարմնի հետ, և ներկայում վերականգնողական աշխատանքների իրականացումը

նախապատրաստական փուլում է: Աջակցություն է ցուցաբերվում ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող մամուլին՝ 13 անուն թերթ և մեկ ամսագիր:

Հարկ է նշել, որ սույն գործողությունն իրենից ենթադրում է Նախարարության կողմից համապատասխան ծրագրերի մշակում և իրականացում, ինչպես նաև այդ ծրագրերում ազգային փոքրամանսնությունների ներկայացուցիչների ներգրավվման ապահովում: Նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը վերաբերում է համապատասխան հասարակական կազմակերպություններին ցուցաբերված օժանդակությանը, այլ ոչ թե իր կողմից մշակված ծրագրերին: Այնուամենայիվ, եթե ի սկզբանե գործողության շրջանակներում նախատեսված է եղել ՀՀ մշակույթի նախարարության միայն աջակցությունը, ապա սույն գործողության արդյունքը պետք է վերաձևակերպվեր:

Ելնելով վերոգրյալից սույն գործողությունը գնահատվում է մեծամասամբ չիրականացված:

Այսպիսով, Մշակութային իրավունքի ոլորտում ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել 5 գործողություն, որից մեկ գործողություն գնահատվել է ամբողջությամբ իրականացված, մեկական գործողություն՝ կիսով չափ իրականացված և մեծամասամբ չիրականացված և ևս երկու գործողություն գնահատվել է որպես չիրականացված:

XV. Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք (5/4[78])

1. Գործողություն՝ (96) Բնապահպանական տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցություն, հասարակայնության արդարադատության մատչելիության ապահովման և բնապահպանական այլ հիմնարար իրավունքների իրականացման գործնական մեխանիզմների իրավական կարգավորման նպատակով ՀՀ օրենսդրության վերլուծություն՝ բացերն ու հակասությունները վերհանելու նպատակով, զարգացած երկրների առաջավոր փորձի ուսումնասիրություն և իրավական կարգավորումների, առաջարկությունների փաթեթի պատրաստում
Ակնկալվող արդյունքը՝ շրջակա միջավայրի ոլորտի վերլուծության իրականացում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ բնապահպանության նախարարություն

[78] ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 20-ի 1071-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 97-րդ կետը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=108960

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվել են բնապահպանական տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության, բնապահպանական այլ հիմնարար իրավունքների իրականացման գործնական մեխանիզմների իրավական կարգավորման նպատակով ՀՀ օրենսդրության վերլուծության աշխատանքներ, ուսումնասիրվել է միջազգային փորձը:

Այնուամենայնիվ, բովանդակային տեղեկատվություն չի տրամադրվել իրականացված վերլուծությունների արդյունքների վերաբերյալ նր չեն տրամադրվել շրջակա միջավայրի ոլորտի վերլուծությունների օրինակները:

Հաշվի առնելով վերոգրյալը, սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

2. Գործողություն՝ (97) Ներկայացնել «Էկոքաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ բնապահպանության նախարարություն

Սույն գործողության կատարման սկզբնական ժամկետը 2015թ. երկրորդ եռամսյակն էր, սակայն ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ կատարման ժամկետը երկարաձգվեց մինչև 2016 թ. երրորդ եռամսյակ:[79] Իսկ ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 20-ի 1071-Ն որոշմամբ՝ սույն կետն ուժը կորցրած է ճանաչվել: [80] Բնապահպանության նախարարությունը, որպես հիմնավորում, նշում է, որ Ծրագրով սահմանված ժամկետում սույն կետի իրականացումը դարձել է անհնար, քանի որ «Էկոքաղաքականության մասին» օրենքի նախագծի համապարփակ իրավական կարգավորումն ապահովելու նպատակով անհրաժեշտ էր միջազգային փորձագետների ներգրավում, շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների ու մասնագետների հետ համատեղ քննարկումների իրականացում և արդյունքում օրենքի նախագծի ամբողջական փաթեթի մշակում: Նշված գործընթացին աջակցություն ցուցաբերելու խնդրանքով 2015 թ. նախարարությունը դիմել է Գերմանիայի Դաշնության բնապահպանության ոլորտի համապատասխան նախարարությանը, սակայն նրանց կողմից աջակցության

[79] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ 97-րդ կետի 4-րդ սյունակում «2015 թ. երկրորդ եռամսյակ» բառերը փոխարինվել է «2016 թ. երրորդ եռամսյակ» բառերով http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

[80] ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 20-ի 1071-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 97-րդ կետը
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=108960

տրամադրումը հնարավոր եղավ ստանալ միայն 2016 թվականին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի նախագծի փաթեթի մշակման գործընթացը կավարտվի 2017թ. առաջին եռամսյակում, անհրաժեշտություն է առաջացել ուժը կորցրած ճանաչել:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

3. Գործողություն՝ (98) Սահմանել մեթոդաբանություն՝ տնտեսական գործունեության նպատակահարմարության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում ապահովելու շրջակա միջավայրին և մարդու առողջությանը հասցվող վնասների հաշվարկը
Ակնկալվող արդյունքը՝ մեթոդաբանության մշակում և ընդունում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ մշակման վերջնական փուլում է գտնվում «Տնտեսական գործունեության նպատակահարմարության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում շրջակա միջավայրին հասցվող վնասի հաշվարկման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրամանի նախագիծը:

Կազմակերպության կողմից լրացուցիչ ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2015թ. մայիսի 27-ին ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 764-Ն որոշումը:[81]

ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է ՀՀ առողջապահության նախարարի 2014 թ. դեկտեմբեի 18-ի N 2995-Ա հրամանով հաստատված «Տնտեսական գործունեության նպատակահարմարության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում մարդու առողջությանը հասցվող վնասների հաշվարկի մեթոդաբանության» վերաբերյալ:

Պարզ չէ սույն հրամանների նախագծերի մշակման և ընդունման գործընթացում հանրային մասնակցության ապահովման մակարդակը, իսկ հրամանները ունեն նաև բովանդակային գնահատման կարիք:

Այնուամենայնիվ, սույն գործողությունը գնահատվում է որպես ամբողջությամբ իրականացված:

[81] https://www.e-gov.am/gov-decrees/item/26026/

4. Գործողություն՝ (99) Մշակել արդյունավետ գործող մեխանիզմներ շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող (մասնավորապես, հանքավայրերին հարող) տարածքներում մշտադիտարկման համար
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն,

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել է «Շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող տարածքներում (մասնավորապես՝ հանքավայրերին հարող) մշտադիտարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացված է այլ նախարարություններին՝ կարծիք ստանալու նպատակով:

Նշված նախագիծը չի եղել հասանելի և չի դրվել հանրային քննարկման: Այնուամենայնիվ, Կազմակերպության լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 2015 թ. հուլիսի 8-ին ՀՀ կառավարությունը թիվ 762-Ն որոշմամբ հաստատել է ՀՀ շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող (մասնավորապես՝ հանքավայրերին հարող) տարածքներում մշտադիտարկման կարգը:[82]

Հաշվի առնելով վերոգրյալը գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

5. Գործողություն՝ (100) Ուսումնասիրել արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման նպատակով հասարակության համապատասխան ներկայացուցիչների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, գործողությունների և անգործության համապատասխան իրավական ընթացակարգերի միջոցով վիճարկելու հնարավորության ապահովման հարցը՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագծման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը

[82] Տե՛ս ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 8-ի թիվ 762-Ն որոշումը https://www.e-gov.am/gov-decrees/item/25994/

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվել է ուսումնասիրություն՝ արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման նպատակով հասարակության համապատասխան ներկայացուցիչների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, գործողությունների, անգործության համապատասխան իրավական ընթացակարգերի միջոցով վիճարկելու հնարավորության ապահովման հարցը՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Որպես Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ կատարված քայլ պետք է նշել նաև ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում (ընդունված՝ 2016 թ. դեկտեմբերի 16-ին) հասարակական կազմակերպությունների կողմից իր շահառուների օրինական շահերը միայն շրջակա միջավայրի ոլորտում դատարանում ներկայացնելու իրավունքը, որն թեև դրական փոփոխություն է, սակայն սահմանափակում է հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտությունը:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ուսումնասիրվել են արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման նպատակով հասարակության համապատասխան ներկայացուցիչների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, գործողությունների և անգործության համապատասխան իրավական ընթացակարգերի միջոցով վիճարկելու հնարավորության ապահովման հարցը և ներկայացվել են առաջարկություններ: Նախարարության կողմից չեն տրամադրվել իրականացված ուսումնասիրությունների օրինակները:

Սույն գործողությամբ ակնկալվող արդյունքը պատշաճ չէ ձևակերպված, պարզ չէ, թե ինչ է ենթադրվում՝ «իրավական ակտի նախագծման վերաբերյալ առաջարկություններ» արտահայտության տակ:

Այսպիսով, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

Այսպիսով, Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքի որոլտում նախատեսված էր ընդհանուր առմամբ 5 գործողություն, որից երկու գործողություն գնահատվել է չիրականացված, երեք գործողություն՝ամբողջությամբ իրականացված:

XVI. Տնտեսական իրավունքներ, սեփականության իրավունք (4)

1. Գործողություն՝ (101) Քննարկել ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի լրացուցիչ արձանագրության վավերացման նպատակահարմարությունը և ներկայացնել առաջարկություն

Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Սույն գործողության կատարման ժամկետն ի սկզբանե 2014 թ. երրորդ եռամսյակն էր, սակայն ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 12 թիվ 1302-Ն որոշմամբ այն երկարաձգվեց մինչև 2016 թ. երկրորդ կիսամյակ:[83]

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հայտնել է, որ ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի լրացուցիչ արձանագրության վավերացման հարցը քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ ԱԳՆ-ի միջև 2015թ. առաջին կիսամյակում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ նպատակահարմար է հարցին անդրադառնալ ավելի ուշ՝ հաշվի առնելով, որ սոցիալական ոլորտում իրականացվում են լայնածավալ բարեփոխումներ՝ ուղղված ՀՀ միջազգային պարտավորությունների կատարմանը:

Սույն գործողության վերջնաժամկետը 2016 թ. երկրորդ եռամսյակն էր, իսկ գործողության արդյունքն է կազմում ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը: Թեև պատասխանատու մարմինների կողմից նախկինում քննարկվել է Լրացուցիչ արձանագրության վավերացման հարցը, այնուամենայիվ դեռևս չկա վերջնական դիրքորոշում և դրան համապատասխան ՀՀ կառավարություն ներկայացված առաջարկություն: Միևնույն ժամանակ, ինչպես հայտնում է նախարարությունը, Լրացուցիչ արձանագրության վավերացման նպատակահարմարության հարցի քննարկումը նախատեսվում է 2016թ. երկրորդ կիսամյակում, որի վերաբերյալ 2017թ. հուլիս ամսվա դրությամբ ոչինչ հայտնի չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը սույն գործողությունը գնահատվել է մեծամասամբ չիրականացված:

[83] ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշմամբ 101-րդ կետի 4-րդ սյունակում «2014 թ. երրորդ եռամսյակ» բառերը փոխարինվել է «2016 թ. երկրորդ կիսամյակ» բառերով. http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

2. Գործողություն՝ (102) Կատարել ուսումնասիրություններ՝«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով հանրային շահի բացառիկության որոշման չափանիշները սահմանելու հնարավորությունը պարզելու և հանրային շահի բացառիկության որոշմանն ուղղված ընթացակարգերը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու համար
Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ իրականացվել է միջազգային փորձի համապարփակ ուսումնասիրություն, որի արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքը՝ Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկության և փոխհատուցման սկզբունքների և համարժեք փոխհատուցման հաշվարկի հստակ չափանիշներ և մեթոդաբանություն մշակելու վերաբերյալ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Կազմակերպությանը տրամադրվել է իրականացված ուսումնասիրությունների օրինակը: Այն պարունակում է տեղեկատվություն հանրային գերակա շահի որոշման սկզբունքների վերաբերյալ միջազգային փորձի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվություն: Որպես գործող օրենսդրության բացթողում ներկայացված է գերակա հանրային շահի նպատակի լայն ձևակերպումը, որը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին: Ներկայացված է նաև հասարակության և պետության կարիքների համար սեփականության փոխհատուցման սկզբունքները, մասնավորապես արտասահմանյան երկրների մեծ մասում փոխահտուցումը իրականացվում է հիմք ընդունելով օտարվող գույքի շուկայական գինը:

Ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է վերանայել և լրամշակել հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման սկզբունքները, ինչպես նաև հստակեցնել այն նպատակները, որոնք կարող են հետապնդել հասարակական շահ: Որպես լավագույն միջազգային փորձ, առաջարկվել է կիրառել օտարվող գույքի դիմաց փոխհատուցման Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության փորձը, ըստ որի փոխհատուցումը պետք է լինի այնպիսի չափով, որ հնարավորություն ընձեռնի սեփականատիրոջը ձեռք բերել նույնպիսի տեսակի և որակի գույք, ինչպես նաև ներառի սեփականատիրոջ բոլոր հավելյալ ծախսերը, որոնք նա կատարել է միանման այլ գույք ձեռք բերելիս: Որպես հաջողված կարգավորում վկայակոչվում է նաև Էստոնիայի փորձը, որի դեպքում անշարժ

գույքի օտարման համար վճարը պետք է ծածկի անշարժ գույքի, գույքի հետ օտարված պիտանելիքների և մասերի արժեքը, ինչպես նաև սեփականատիրոջը օտարման արդյունքում պատճառված վնասները։

Թեև իրականացվել է քննարկման առարկա հարցի ուսումնասիրություն, և այն ներկայացվել է Կառավարություն, այնուամենայնիվ ՀՀ կառավարության կողմից որոշման ընդունման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Հաշվի առնելով վերոգրյալը սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված։

3. Գործողություն՝ (103) Ուսումնասիրել որպես բացառիկ գերակա հանրային շահ սեփականության օտարման դեպքերում համարժեք փոխհատուցման հաշվարկի հստակ չափանիշներ և մեթոդաբանություն մշակելու և սահմանելու հնարավորության հարցը
Ակնկալվող արդյունքը՝ ուսումնասիրությունների արդյունքում կազմված առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ԿԱ կադաստրի պետական կոմիտե

ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ կատարվել է հետազոտություն, որի շրջանակներում ուսումնասիրվել է ընթացիկ վիճակը, միջազգային փորձը։ Ուսումնասիիրության արդյունքում որպես հաջողված փորձ առաջարկվել է կիրառել Գերմանիայի և Էստոնիայի փորձը։ Այսպես, Գերմանիայում օտարվող գույքի դիմաց փոխհատուցումը պետք է լինի այնպիսի չափով, որ հնարավորություն ընձեռնի սեփականատիրոջը ձեռք բերել նույնպիսի տեսակի և որակի գույք, ինչպես նաև ներառի սեփականատիրոջ բոլոր հավելյալ ծախսերը, որոնք նա կատարել է միանման այլ գույք ձեռք բերելիս։ Էստոնիայում անշարժ գույքի օտարման համար վճարը պետք է ծածկի անշարժ գույքի, գույքի հետ օտարված պիտանելիքների և մասերի արժեքը, ինչպես նաև սեփականատիրոջը օտարման արդյունքում պատճառված վնասները։ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված առաջարկությունները ՀՀ կառավարություն են ներկայացվել 2015 թ. օգոստոսի 27-ին։

Ինչ վերաբերում է ՀՀ ԿԱ կադաստրի պետական կոմիտեին, որը հանդիսանում է սույն գործողության համակատարող, ապա Կոմիտեն գտնում է, որ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված սեփականության օտարման դեպքերում համարժեք փոխհատուցման

հաշվարկի հստակ չափանիշներ և մեթոդաբանություն գործող իրավական ակտերով արդեն իսկ սահմանված են:

Սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

4. Գործողություն՝ (104) «Հասարակության և պետության կարիքների համար» սեփականության օտարման մասին ՀՀ օրենքի բարեփոխում՝ ուղղված բացառիկ գերակա հանրային շահի արդյունքում սեփականության օտարման վերաբերյալ որոշումների բողոքարկման ողջամիտ ժամկետների սահմանմանը
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի բարեփոխման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ԿԱ կադաստրի պետական կոմիտե

Ինչպես նշվեց վերը, ՀՀ արդադատության նախարարության կողմից իրականացվել է Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկության և փոխհատուցման սկզբունքների և համարժեք փոխհատուցման հաշվարկի հստակ չափանիշներ և մեթոդաբանություն մշակելու վերաբերյալ ուսումնասիրություն:[84]

Ուսումնասիրությունը պարունակում է տեղեկատվություն նաև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու կամ սեփականության նախնական ուսումնասիրության մասին Կառավարության որոշման բողոքարկման ժամկետների վերաբերյալ: Որպես միջազգային փորձ ներկացված է Լեհաստանում, Լիտվայում և Գերմանիայում օտարվող գույքի վիճարկման ընթացակարգերը: Այսպես, Լեհաստանում սեփականության օտարման մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական վարույթի ընդհանուր կանոններին համապատասխան: Գերմանիայում սեփականության օտարման վերաբերյալ համապատասխան վարչական մարմնի որոշումը կարող է բողոքարկվել այդ ակտի հրապարակումից հետո 6 շաբաթվա ընթացքում:

Ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է սեփականության իրավունքի դատական պաշտպանության արդյունավետ իրականացումն ապահովելու համար բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման բողոքարկման համար նախատեսել սեփականությունն ուսումնասիրելու մասին

[84] Տե՛ս 102-րդ գործողության նկարագրությունը:

կառավարության որոշման համա Օրենքով նախատեսված ժամկետը, այն է՝ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում։

Ուշագրավ է նաև այն, որ գործողության համակատարող է նաև ՀՀ ԿԱ կադաստրի պետական կոմիտեն, որը սակայն իրականացված միջոցառումների վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն չի տրամադրել, ավելին՝ ի պատասխան սույն գործողության կատարման վերաբերյալ Կազմակերպության հարցմանը, իր դիտարկումներն է հայտնել 103-րդ գործողության վերաբերյալ առ այն, որ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված սեփականության օտարման դեպքերում համարժեք փոխհատուցման հաշվարկի հստակ չափանիշներ և մեթոդաբանություն գործող իրավական ակտերով արդեն իսկ սահմանված է։ Դժվար չէ արձանագրել, որ ՀՀ ԿԱ կադաստրի պետական կոմիտեն ոչ միայն անտեղյակ է, այլև որևէ գործողություն չի իրականացրել սույն գործողության կատարման ուղղությամբ։

Հաշվի առնելով այն, որ գործողության արդյունքը առաջարկությունների ներկայացումն է ՀՀ կառավարություն, և միևնույն ժամանակ կարևորելով այդ առաջարկությունների արտացոլումը ներպետական իրավակարգավորումներում, կարելի է փաստել, որ այն ամբողջությամբ չի իրականացվել, քանի որ չի տրամադրվել տեղեկատվություն ՀՀ կառավարության կողմից որոշման ընդունման վերաբերյալ։ Միևնույն ժամանակ, որպես ծրագրային գործողություն այն հանգել է ակնկալվող արդյունքին։

Գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված։

Այսպիսով, Տնտեսական իրավունքների, սեփականության իրավունքի ոլորտում ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել 4 գործողություն, որոնցից երեքը գնահատվել է որպես ամբողջությամբ իրականացված և մեկ գործողություն գնահատվել է՝ մեծամասամբ չիրականացված։

XVII. Արդար դատաքննության իրավունք (3)

1. **Գործողություն՝ (105)** Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքների, ինչպես նաև դրանց՝ ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի վերաբերյալ դատավորների, իրավապահ մարմինների աշխատողների վերապատրաստում և ուսուցում

Ակնկալվող արդյունքը՝ դատավորների, դատախազների, իրավապահ մարմինների աշխատողների դասընթացների իրականացում, Արդարադատության ակադեմիայի առարկայական ցանկում համապատասխան փոփոխությունների կատարում, Փաստաբանների դպրոցում համապատասխան առարկայի ծրագրի մշակում և ներդնում

Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ) ՀՀ ԿԱ ոստիկանություն, Փաստաբանական դպրոց (համաձայնությամբ)

Սույն գործողության համար հիմնական պատասխանատու մարմին է հանդիսանում ՀՀ ոստիկանությունը, իսկ ՀՀ արդարադատության ակադեմիան և Փաստաբանական դպրոցը պատասխանատու մարմիններ են համաձայնության պայմանով: Գործողության կատարումը կրում է պարբերական բնույթ:

ՀՀ ոստիկանությունը հայտնել է, որ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողների և վերապատրաստվող ծառայողների՝ Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերին իրազեկված լինելու մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական ծրագրերում ներառված «Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր», «Մարդու իրավունքները և ոստիկանությունը» առարկաների շրջանակներում ի թիվս այլ միջազգային փաստաթղթերի պարբերաբար ուսումնասիրվում է «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը: Ինչ վերաբերում է սույն կետի շրաջանակներում կազմակերպված վերապատրաստումների ժամանակահատվածի, քանակի, վերապատրաստված ծառայողների թվին, ապա որևէ տեղեկատվություն չի տրամադրվել: Ոստիկանության կողմից տեղեկատվություն չի տրամադրվել նաև 2015-2016 թթ իրականացված վերապատրաստումների մասին՝ գործողության կատարման ժամկետը ավարտված լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ արդարադատության ակադեմիան և ՀՀ փաստաբանական դպրոցը հայտնել են, որ «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքների, ինչպես նաև դրանց՝ ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերը ներկայացվում են այլ առարկաների ուսուցման շրջանակներում (ՀՀ արդարադատության ակադեմիայում՝ «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը» և «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը» առարկաների շրջանակներում):

Նախնառաջ պետք է նշել, որ սույն գործողությունը դասվում է այն միջոցառումների թվին, որոնց կատարումը ենթադրում է պարբերական գործողությունների կատարում և հետևաբար, կատարման ժամկետը չէր կարող ավարտվել 2014 թվականին, ինչպես նշում է ՀՀ ոստիկանությունը: Բացի այդ, սույն գործողության արդյունքներն են համապատասխան ծրագրերի մշակումը և ներդրումը: Վերջինիս վերաբերյալ ՀՀ փաստաբանական դպրոցը

տեղեկատվություն չի տրամադրել, իսկ ՀՀ արդարադատության ակադեմիան հայտնել է, որ հատուկ այդ դաշնագրով պայմանավորված ուսումնական ծրագրերում փոփոխություններ չեն կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, գործողությունը գնահատվում է կիսով չափ իրականացված:

2. Գործողություն՝ (106) Բացառել հարկային իրավախախտումների համար ֆիզիկական և իրավաբանական անձանց միաժամանակ նույն իրավախախտման համար և՛ հարկային, և՛ վարչական պատասխանատվության ենթարկելը
Ակնկալվող արդյունքը՝ անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն, շահագրգիռ այլ գերատեսչություններ

Ըստ ՀՀ արդարադատության նախախարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ հարկային օրենսգրքի (ընդունված՝ 2016 թ. հոկտեմբերի 4-ին) 458-րդ հոդվածի համաձայն՝ «Օրենսգրքով սահմանված պահանջները խախտելու կամ չկատարելու համար Օրենսգրքի 18-րդ բաժնով սահմանված պատասխանատվության միջոցները գործում են մինչև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ դրանով Օրենսգրքով սահմանված պահանջները խախտելու կամ չկատարելու համար պատասխանատվության միջոցներ սահմանված լինելու դեպքում»: Այդ կապակցությամբ 2016 թ. ՀՀ արդարադատության նախարարությունը մշակվել և շրջանառության մեջ է դրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագիծը: Վերջինս նախատեսում է, որ հարկային իրավախախտումների համար ֆիզիկական և իրավաբանական անձանց միաժամանակ նույն իրավախախտման համար և՛ հարկային, և՛վարչական պատասխանատվության առկայության դեպքում, գործելու է միայն վարչական պատասխանատվությունը: Այսպիսով, կարելի է փաստել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նախագիծը, որը զուգորդվում է հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով՝ բացառում է հարկային իրավախախտումների համար ֆիզիկական և իրավաբանական անձանց միաժամանակ նույն իրավախախտման համար և՛ հարկային, և՛ վարչական պատասխանատվության ենթարկելը:

Հաշվի առնելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նախագիծը ներկայացված է եղել հանրային քննարկման, ուստի դրա ընդունման ընթացքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված նախագիծը 2017 թ. ապրիլի 27-ին արժանացել է Կառավարության հավանությանը: Թեև որպես ծրագրային գործողություն այն իրականացվել է Ծրագրով սահմանված ժամկետի խախտմամբ, այնուամենայնիվ այն գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

Հաշվի առնելով վերոգրյալը, գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

3. Գործողություն՝ (107) Իրավական նոր կարգավորումների ընդունման միջոցով բարձրացնել ՀՀ արդարադատության խորհրդի կողմից գործերի քննության հրապարակայնությունը՝ նախատեսելով միջազգային փորձում առկա չափորոշիչների սահմաններում ՀՀ արդարադատության խորհրդի նիստերի դռնբաց քննության մոդելը
Ակնկալվող արդյունքը՝ անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ), ՀՀ արդարադատության նախարարություն

Ի կատարումն սույն գործողության, ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ 21.06.2014 թ. ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-86-Ն օրենքը (Դատական օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մաս), որի համաձայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ Արդարադատության խորհրդի որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով: Նույնաբովանդակ տեղեկատվություն է տրամադրել նաև ՀՀ դատական դեպարտամենտը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

Այսպիսով, Արդար դատաքննության իրավունքի ոլորտում ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել 3 գործողություն, որից երկուսը գնահատվել է ամբողջությամբ իրականացված և մեկ գործողություն գնահատվել է կիսով չափ իրականացված։

XVIII. Զինծառայողների և զորակոչիկների իրավունքներ (4)

1. Գործողություն՝ (108) Զինծառայության ընթացքում մարդու իրավունքների խախտումների կանխարգելման, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածությանն ուղղված հստակ միջոցառումների իրականացում
Ակնկալվող արդյունքը՝ նախազորակոչային տարիքի դպրոցականների շրջանում զինծառայողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընդհանուր իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության, ՆԶՊ առարկայի շրջանակում զինծառայողների իրավունքների և պարտականությունների, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ թեմաների և դասավանդման մեթոդիկայի վերանայում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ ՄԻՊ (համաձայնությամբ)

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տեղեկատվություն է տրամադրվել զորամասերում, հանրակրթական դպրոցներում զինծառայողների իրավունքների և պարտականնությունների վերաբերյալ ընդհանուր իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ։

12 զորամասերում սոցիոլոգների, իրավաբանների և հոգեբանների փորձագիտական խմբի կողմից անցկացվել են թրեյնինգներ՝նորակոչիկների սոցիալ-հոգեբանական և իրավական հարմարման, ծառայության սթրեսածին գործոնների հաղթահարման և կոնֆլիտների կանխարգելման թեմայով: Կոնկրետ օրինակներով ներկայացվել են զինվորական ծառայություն անցնող նորակոչիկների հոգեվիճակի առանձնահատկությունները և տրվել են դրա արդյունքում ի հայտ եկող բացասական վարքագծի կանխման ընդհանուր բնույթի առաջարկություններ, բացատրվել են զինծառայողների իրավունքները և պարտականությունները, ներկայացվել են դրանց պաշտպանության մեխանիզմները։ Դասընթացներին մասնակցել են 778 զինծառայողներ (այդ թվում՝ մոտ 50 սպաներ)։

18 հանրակրթական դպրոցներում (Երևան, Գեղարքունիք, Լոռի, Վանաձոր, Շիրակ, Վայոց Ձոր, Կոտայք, Արագածոտն) նախազորակոչային տարիքի աշակերտների համար անցկացվել են զինվորական ծառայության հոգեբանական և սոցիալ-իրավական պատրաստության դասընթացներ: Ներկայացվել են հարմարման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, իրավունքները և պաշտպանության մեխանիզմները: Մասնակցել են մոտ 700 դպրոցականներ: Նորակոչիկների համար մշակվել է զինծառայողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գրպանի հանրամատչելի գրքույկ («Ձրույց զինվորի հետ»), որը զորամաս մեկնելուց առաջ ՀՀ ՊՆ ՌՈ կողմից տրամադրվում է նորակոչիկներին:

Բացի այդ, ժամկետային պարտադիր զինծառայողների կողմից ծառայության ընթացքում իրենց հասանելիք բավարարման նորմերին, իրավունքներին ու արտոնություններին տեղյակ լինելու նպատակով պարբերաբար անցկացվում են հարցումներ «Զինվորի հուշատետրում» ներառված «Մարդու իրավունքներ» բաժնի դրույթների իմացության աստիճանը ստուգելու համար, ըստ անհրաժեշտության՝ լրացուցիչ պարապմունքներ:

Լայնաշերտ համագործակցություն է իրականացվում զորամասերի, զինվորական իրավապահ մարմինների ու կցագրված բարձրագույն և հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև անցկացվում են հանդիպումներ հարցուպատասխանի ֆորմատով, ուսումնական պարապմունքներ, նախազորակոչային տարիքի պատանիների համար համատեղ կազմակերպվում են հավաքներ, որոնց ժամանակ սպորտային խաղերի և վարժանքների միջոցով նրանց մեջ սերմանվում է փոխօգնության հասնելու, թիմակցի, կոլեկտիվի հաջողությանը խթանելու գաղափարը:

Ինչ վերաբերում է ՆԶՊ առարկայի վերանայման հարցերին, ապա ՊՆ առաջարկում է դիմել ուսումնական ծրագրերի վերանայման համար պատասխանատու մարմնին՝ ՀՀ ԿԳՆ: Այնուամենայնիվ ՊՆ կողմից քայլեր են ձեռնարկվել ՆԶՊ առարկայի դասավանդման մեթոդիկայի հարցում ուսուցիչների կարողությունների զարգացման համար, որում հատուկ ուշադրություն է դարձվում նաև իրավունքների հարցերին: Մասնավորապես, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ մշակվել է «Նախազորակոչային սոցիալ-հոգեբանական պատրաստության ձեռնարկը», որը 2015թ. ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պաշտոնապես փոխանցվել է ՀՀ ԿԳ նախարարին, ՆԶՊ առարկայի շրջանակում որպես լրացուցիչ գրականություն ներառելու առաջարկով: Այդ նպատակով 2016թ. հաշվետու ժամանակահատվածում ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի կողմից ՆԶՊ ուսուցիչների 4 մարզային խմբերի հետ անցկացվել են կարողությունների զարգացման դասընթացներ (յուրաքանչյուր խմբում 20-25 զինղեկ), որը կրում է շարունակական բնույթ:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հայտնել է, որ նախազորակոչային տարիքի դպրոցականների շրջանում ամեն տարի ՀՀ պաշտպանության նախարարության,

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և «Օգնություն և իրավունք» ՀԿ հետ համատեղ կազմակերպվում և իրականացվում է ռազմահոգեբանական, սոցիալական և իրավական իրազեկության վերաբերյալ ամենամյա ծրագիր, որին մասնակցել են 30 դպրոց, որոնցից 5-ը Երևան քաղաքում, իսկ մնացածը՝ Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Վայոց Ձոր, Կոտայք և Արագածոտն մարզերում: Տեղեկատվություն է տրամադրվել նաև «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցչի համար մշակված 8-9 դասարանների համար մեթոդական ձեռնարկի մասին:

Ինչ վերաբերում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, որը գործողության համակատարող է համաձայնության պայմանով, ապա սույն կետով սահմանված իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ չեն իրականացվել: Տրամադրված տեղեկատվությունը վեևաբերում է ՄԻՊ աշխատակազմի Քրեադատավարական և զինծառայողների իրավունքների պաշտպանության վարչության գործունեությանը և ապագայում ձեռնարկվող միջոցառումներին, մասնավորապես ՄԻՊ-ը հայտնել է, որ 2016թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում միջազգային կազմակերպությունների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքում արդեն իսկ նախատեսվել է հատուկ ձևաչափով Հայաստանում առաջին անգամ իրականացնել հատուկ ծրագիր, որն ուղղված է ինչպես Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով նախատեսված, այնպես էլ այլ ոլորտներով զինծառայողների իրավունքների պաշտպանության ամրապնդմանը: Թե որ միջազգային կազմակերպությունների և ինչ հատուկ ծրագրի մասին է խոսքը, ՄԻՊ-ը չի մանրամասնել:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է մեծամասամբ իրականացված:

2. Գործողություն՝ (109) Ձեռնարկել միջոցներ՝ բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից զորակոչիկներին իրենց վերաբերող որոշումների, ինչպես նաև բժշկական հաստատությունների կողմից բժշկական զննության եզրակացության ակտի տրամադրման պարտադիր կարգը պահպանելու համար
Ակնկալվող արդյունքը՝ համապատասխան կարգի ընդունում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Սույն գործողության կատարման ժամկետն էր 2014 թ. չորրորդ եռամսյակը: ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկատվություն է տրամադրել «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով համապատասխան իրավակարգավորումներ սահմանելու վերաբերյալ, ըստ որի

զինապարտն իրավունք ունի ծանոթանալ իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալ դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնել առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

Հարկ է նշել, որ նշված նախագիծը հանվել է շրջանառությունից, և ինչպես նշում է Պաշտպանության նախարարությունը ի պատասխան Կազմակերպության մեկ այլ վերլուծության շրջանակներում արվող հարցադրումների՝ ՊՆ 2017 թ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսվում է 2017 թ. սեպտեմբերի առաջին տասնօրյակում ՀՀ կառավարություն ներկայացնել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն ընդգրկելու է ներկայումս գործող «Զինապարտության մասին», «Զինվորական ծառայության անցնելու մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքներով սահմանված հարաբերությունների կարգավորումը:

Ելնելով վերագրյալից սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

3. Գործողություն՝ (110) Օրենսդրորեն սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց պաշտպանական գերատեսչության կողմից փաստաթղթերի տրամադրման 7-օրյա ժամկետ
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Սույն գործողության կատարումը, ինչպես և նախորդը, նախատեսվում էր իրականացնել «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծում համապատասխան իրավակարգավորումներ սահմանելով, որը ինչպես նշվեց, հանվել է շրջանառությունից:[85]

Գործողությունը գնահատվում է որպես չիրականացված:

[85] Տե՛ս 110-րդ գործողության կատարման նկարագրությունը:

4. Գործողություն՝ (111) Ապահովել ժամկետի ավարտով զորացրվող զինծառայողների պարտադիր բուժզննության անցկացում՝ զինծառայողի գանգատի կամ դիմումի առկայության դեպքում
Ակնկալվող արդյունքը՝ Զինծառայողների բժշկական զննության համակարգի բարելավում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Սույն գործողության իրականացման վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ պարտադիր զինվորական ծառայության սահմանված ժամկետն ավարտվելու կապակցությամբ զինված ուժերից արձակվող զինծառայողների կողմից առողջական վիճակի վերաբերյալ գանգատի կամ դիմումի առկայության դեպքում պարտադիր բուժզննության ապահովման շրջանակներում համապատասխան կարգավորում է լրացվել ՀՀ պաշտպանության նախարարի 08.04.2013թ. N410-Ն հրամանով հաստատված զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգում՝ ՀՀ պաշտպանության նախարարի 2016 թ. մարտի 16-ի թիվ 5 հրամանով:[86]

Ուշագրավ է այն հանգամանքը, որ օրենսդրությունը նախատեսում է պարտադիր բուզննության անցկացումը՝ զորակոչիկի զինվորական ծառայությանը նրա պիտանիությունը որոշելու նպատակով, սակայն չի նախատեսում պարտադիր բուժզննության իրականացում զորացրվելուց առաջ: Վերոնշալ լրացումը անշուշտ դրական քայլ է, սակայն բավարար չէ: Անհրաժեշտ է ապահովել զինծառայողների պարտադիր բուժզննությունը զորացրումից առաջ՝ անկախ գանգատի առկայության փաստի, որը նաև հնարավորություն կտա վերահսկելու զինծառայողի մոտ առկա ցանկացած հիվանդության դինամիկան:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով գործողության բովանդակությունը և արդյունքը, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

Սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

Այսպիսով, Զինծառայողների և զորակոչիկների իրավունքների ոլորտում ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել չորս գործողություն, որից մեկը գնահատվել է մեծամասամբ իրականացված, մեկ գործողություն՝ ամբողջությամբ իրականացված և երկուական գործողություն գնահատվել է որպես չիրականացված:

[86] Տե՛ս ՀՀ ՊՆ 2016 թ. մարտի 16-ի թիվ 5 հրամանը՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=104639

XIX. Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք (1)

Գործողություն՝ (112) Ուսումնասիրել անձի ազատության սահմանափակման պահից անհապաղ ազատազրկման էլեկտրոնային արձանագրություն կազմելու միջազգային փորձը և ներկայացնել առաջարկություններ
Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ԱԱԾ, ոստիկանություն

Սույն գործողության կատարման համար, բացի ՀՀ արդարադատության նախարարությունից, պատասխանատու մարմիններ են նաև՝ ՀՀ ԱԱԾ-ն, ՀՀ ոստիկանությունը: ԱԱԾ-ն հայտել է, որ ՀՀ ոստիկանության հետ համատեղ իրականացրել են միջազգային փորձի ուսումնասիրություններ, ինչի արդյունքների հիման վրա ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել են առաջարկություններ ՀՀ կառավարություն: Ոստիկանությունը մասնավորապես նշել է, որ հարցումներ են ուղարկվել մի շարք օտարերկրյա պետությունների ներքին գործերի նախարարություններ՝ իրենց մոտ նման պրակտիկայի առկայության դեպքում դրա գործունեության մեխանիզմների, իրավական կարգավորումների և տեխնիկական նկարագրերի վերաբերյալ, ինչպես նաև համացանցի միջոցով ուսումնասիրվել է ՌԴ անձի ազատության սահմանափակման պահից անհապաղ ազատազրկման վերաբերյալ էլեկտրոնային արձանագրություն կազմելու ՊՄԴ «Радиус» համակարգը, որի ներդրումը նախատեսում է մեծ ֆինանսական միջոցներ/պարեկային մեքենաները զինվում են սերվերի միջոցով ընդհանուր համակարգչային ցանցին միացած նոութբուքերով, իսկ հետիոտն պարեկներին տրամադրվում են պլանշետներ և այլն/:

ՀՀ արդարադատության նախարարությունը ևս իրականացրել է քննարկման առարկա հարցի ուսումնասիրություն, և դիրքորոշում է արտահայտվել առ այն, որ մեր երկրում ձերբակալման պահից էլեկտրոնային արձանագրություն կազմելու համակարգի ներդրումն անձի իրավունքների ապահովման տեսանկյունից կարող է ունենալ կարևոր երաշխիքային նշանակություն և առաջարկել է շահագրգիռ մարմինների մասնակցությամբ քննարկման առարկա դարձնել այս իրավական ինստիտուտի օրենսդրական կարգավորման մեխանիզմները, քանի որ վերջինիս ներդրումը պահանջում է համակարգային լուծում, ինչպես նաև կապված է զգալի նյութական ռեսուրսների ներդրման հետ: Վերլուծության արդյունքների հիման վրա կազմված տեղեկանքը ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Թեև պատասխանատու մարմինների կողմից իրականացվել են ուսումնասիրություններ, սակայն դրանց արդյունքները Կազմակերպությանը այնուամենայնիվ չեն ներկայացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

Այսպիսով, Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի ոլորտում նախատեսված էր իրականացնել 1 գործողություն: Գործողությունը գնահատվել է որպես ամբողջությամբ իրականացված:

XX. Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում (7)

1. Գործողություն՝ (113) Ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 3 մարզային գրասենյակների գործունեության շարունակականությունը
Ակնկալվող արդյունքը՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների հզորացում և մարզերում անձանց իրավունքների պաշտպանության անընդմեջ բարելավում և իրազեկվածության բարձրացում Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՄԻՊ (համաձայնությամբ)

Սույն գործողության իրականացման համար պատասխանատու մարմին է հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարությունը, իսկ Մարդու իրավունքների պաշտպանը պատասխանատու մարմին է համաձայնության պայմանով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ինչպես 2015թ. պետական բյուջեով, այնպես էլ ՀՀ ԱԺ քննարկմանը ներկայացված «ՀՀ 2016թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ներկայացված են միջոցներ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 3 մարզային (Շիրակ, Սյունիք, Գեղարքունիք) գրասենյակների գործունեության շարունակությունն ապահովելու նպատակով:

ՄԻՊ-ը հայտնել է, որ յուրաքանչյուր տարի՝ օգոստոս ամսին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ կառավարությանն է ներկայացնում հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, որի հիման վրա իրականացվում է մարզային գրասենյակների շարունակական ֆինանսավորումը: Պաշտպանի աշխատակազմի մարզային 3 գրասենյակները շարունակել են իրենց գործունեությունը նաև 2015թ. ընթացքում (Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզեր): Ինչ վերաբերվում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների հզորացմանը, ապա ՀՀ ֆինանսների նախարարությունը նշում է, որ այն նախարարության իրավասություններից դուրս է, իսկ ՀՀ մարդու իրավունքների

պաշտպանը հայտնել է, որ որպես մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույց, համագործակցում է տարաբնույթ միջազգային կառույցների, այլ պետությունների օմբուդսմենի ինստիտուտների, Օմբուդսմենների եվրոպական ցանցի, Եվրոպական օմբուդսմենի ինստիտուտի հետ, իսկ աշխատակազմի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են միջազգային կազմակերպությունների կազմակերպած կարողությունների զարգացման վերապատրաստումներին:

Ամփոփելով ստացված տեղեկատվությունը, նախևառաջ պետք է նշել, որ ակնկալվող արդյունքը ենթադրում է ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների հզորացում, այլև որոշակի միջոցառումների իրականացում, ընդ որում պարբերական բնույթի, որոնք ուղղված կլինեն բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, ինչի վերաբերյալ, սակայն, ՄԻՊ-ը տեղեկատվություն չի տրամադրել:

Հաշվի առնելով վերոգրյալը, սույն գործողությունը գնահատվում է մեծամասամբ իրականացված:

2. Գործողություն՝ (114) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով սահմանել ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին տարեկան թեմատիկ զեկույցի հրապարակում մինչև ՀՀ ռազմական օմբուդսմենի հիմնադրումը՝ ըստ ԵԽԽՎ 1742 (2006) հանձնարարականի
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Սույն գործողության, ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի վերաբերյալ հաջորդ 116-րդ, 117-րդ, 118-րդ, 119-րդ գործողությունների կատարման ժամկետը 2014թ. երրորդ եռամսյակն էր (155-րդ գործողության դեպքում՝ 2014 թ. չորրորդ եռամսյակ), որը ՀՀ կառավարության 2015 թ. նոյեմբերի 12-ի թիվ 1302-Ն որոշմամբ երկարաձգվեց մինչև 2016 թ. առաջին եռամսյակ:[87]

Դեռևս Մարդու իրավունքների երրորդ պաշտպան Կ. Անդրեասյանի օրոք 2014 թ. մշակված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսվել էր կարգավորում,

[87] Տե՛ս ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015թ. թիվ 1302-Ն որոշումը http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581

որի համաձայն՝ Պաշտպանի տեղակալներից մեկը Պաշտպանի հանձնարարությամբ գործունեություն պետք է իրականացնի զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում, և յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում այդ տեղակալը Պաշտպանին պետք է ներկայացներ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին զեկույց: Նշենք, որ Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալներից մեկի մակարդակով զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում գործունեության իրականացումը չի համապատասխանում ԵԽԽՎ 1742 (2006) հանձնարարականի 9-րդ հոդվածի 9.2 կետին, համաձայն որի՝ Ռազմական օմբուդսմենը պետք է լինի անկախ մարմին: [88]

Ինչևէ, նշված նախագիծը Կ. Անդրեասյանի կողմից այդպես էլ ՀՀ Կառավարություն չներկայացվեց, քանի որ ինչպես նշվում է Կազմակերպությանն ուղղված գրության մեջ. «(…) առանձին դրույթներին տարաբնույթ մեկնաբանություններ տալու արդյունքում խոչընդոտներ են ստեղծվել Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության համար»:

2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում պարտադրվեցին ՀՀ Սահմանադրության փոփոխությունները: [89] Եվ որպես հետևանք, ՀՀ Նախագահի 2016թ. փետրվարի 10-ի ՆՀ-170-Ա հրամանագրով հաստատված Սահմանադրական փոփոխություններով անվանականորեն սահմանված և ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկում ներառվեց նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը (ընդունվել է 2016 թ. դեկտեմբերի 16-ին), որը ձևավորեց մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի մենաշնորհային դիրք:[90]

Ուշագրավ է, որ ի պատասխան Կազմակերպության 2016 թվականի օգոստոսի 6-ի թիվ 412 գրության՝ Ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ հարցադրումների, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հայտնեց, որ ռազմական օմբուդսմենի հիմնադրումը նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով տվյալ ոլորտում տարբեր պետությունների փորձը և միջազգային կազմակերպությունների դիրքորոշումներն այս հարցի վերաբերյալ: ՄԻՊ-ը հավելել է, որ 2016 թ. հունիսին Պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է Քրեադատավարական և զինծառայողների իրավունքների պաշտպանության վարչություն,

[88] Տե՛ս ՀՔԱՎ առաջարկությունների փաթեթը Անկախ ռազմական օմբուդսմենի ինստիտուտը որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմի վերաբերյալ http://hcav.am/wp-content/uploads/2015/07/%D5%8C%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%85%D5%B4%D5%A2%D5%B8%D6%82%D5%A4%D5%BD%D5%B4%D5%A5%D5%B6.docx.pdf

[89] Տե՛ս ՀՔԱՎ գնահատականը ՀՀ Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ http://hcav.am/publications/23-09-2015-05/

Տե՛ս նաև ՀՔԱՎ զեկույցը Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ http://hcav.am/wp-content/uploads/2016/01/Constitutional-Reform-2015.pdf

[90] Տե՛ս ՀՔԱՎ գնահատականը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի մասին http://hcav.am/events/05-12-2016-02/

որն իրականացնում է զինծառայողների, ինչպես նաև վերջիններիս ընտանիքների անդամների կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկում:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի նշված դիրքորոշումը ամբողջությամբ հակասում է թե՛ առանձին պետությունների փորձին (Գերմանիա,[91] Հոլանդիա,[92] Կանադա[93] և այլն), թե՛ միջազգային կազմակերպությունների դիրքորոշումներին՝ ԵԽԽՎ, Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոն:[94]

Այսպիսով, արձանագրում ենք, որ նախնառաջ սույն գործողության կատարումը ուղիղ կապի մեջ էր ԵԽԽՎ 1742 (2006) հանձնարարականի իմաստով անկախ Ռազմական օմբուդսմենի ստեղծման հետ, որը փաստացի չստեղծվեց և ինքնին անհնարին դարձրեց սույն կետի իրականացումը:

Ելնելով վերոշարադրյալից, սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

3. Գործողություն՝ (115) Ստեղծել Ռազմական օմբուդսմենի ինստիտուտ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումներին համապատասխան
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Տե՛ս 114-րդ կետի նկարագրությունը:[95]

Սույն գործողությունը գնահատվում է չիրականացված:

[91] Տե՛ս Parliamentary Commissioner for the Armed Forces http://www.bundestag.de/en/parliament/commissioner/commissioner/198744
[92] Տե՛ս The Inspector-General of the Netherlands Armed Forces http://www.mindef.nl/ministerie/igk/english/index
[93] Տե՛ս Ombudsman for National Defence and the Canadian Forces http://www.ombudsman.forces.gc.ca/
[94] Տես՝Զեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնար ազատությունների մասին http://www.osce.org/hy/odihr/88572
[95] Տե՛ս ՀՔԱՎ գնահատականը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի մասին http://hcav.am/events/05-12-2016-02/
Տե՛ս նաև՝ ՀՔԱՎ առաջարկությունների փաթեթը Անկախ ռազմական օմբուդսմենի ինստիտուտը որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմի վերաբերյալ http://hcav.am/wp-content/uploads/2015/07/%D5%8C%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%85%D5%B4%D5%A2%D5%B8%D6%82%D5%A4%D5%BD%D5%B4%D5%A5%D5%B6.docx.pdf

4. Գործողություն՝ (116) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում առկա հակասությունների վերացում և անարդյունավետ կարգավորումների շտկում՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրության իմաստով՝ փակ/կիսափակ հաստատությունների հստակեցում:
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Ինչպես արդեն նշվեց, 2016 թ. դեկտեմբերի 16-ին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը (հետայսու նաև՝ Օրենք):[96]

Օրենքի 28-րդ հոդվածի (Պաշտպանի լիազորությունները՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ) 4-րդ մասը սահմանում է Օրենքի իմաստով ազատությունից զրկման վայրերը.

1) ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերը.
2) քրեակատարողական հիմնարկները.
3) հոգեբուժական կազմակերպությունները.
4) կայազորային կարգապահական մեկուսարանները.
5)ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցները.
6) ցանկացած այլ վայր, որտեղ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի որոշմամբ, հրամանով կամ ցուցումով, նրա համաձայնությամբ կամ թույլտվությամբ անձը զրկվել է կամ կարող է զրկված լինել ազատությունից, ինչպես նաև ցանկացած այնպիսի վայր, որն անձը չի կարող ինքնակամ լքել առանց դատարանի, վարչական կամ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման կամ թույլտվության:

Սույն գործողության շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ Օրենքով սահմանված Պաշտպանի՝ որպես «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակին (հետայսու նաև՝ ԽԿԱՄ): ԽԿԱՄ շրջանակներում մասնագիտական աջակցություն

[96] Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96299

ստանալու նպատակով այդ մասին պաշտոնական կայքում կամ հրապարակային այլ աղբյուրներով արված հայտարարությամբ առաջադրված պահանջների հիման վրա Պաշտպանի կողմից ներգրավվում են անկախ մասնագետներ և (կամ) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք ձեռք են բերում կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի կարգավիճակ (Օրենքի 28-րդ հոդված և նույն հոդվածի 5-րդ մաս):

Մտահոգիչ է, որ Պաշտպանը միանձնյա է որոշում ՀԿ-ների ներկայացուցիչների, փորձագետների ներգրավման ձևաչափը և նրանց գործունության շրջանակները: Նման կարգավորման պարագայում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ԽԿԱՄ-ում չեն դիտարկվում որպես լիարժեք և հավասար գործընկեր և զրկվում են որոշումների կայացման հնարավորությունից: Մինչդեռ «Օմբուդսմեն-պլյուս» մոդելը նախատեսում է Մարդու իրավունքների պաշտպանի և հասարակական կազմակերպությունների որպես հավասար գործընկերների ներգրավմամբ խոշտանգումների ազգային կանխարգելման մեխանիզմի ձևավորում և գործարկում: Ընդ որում, այս կարգավորման անհրաժեշտության մասին նշել է ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման Ենթահանձաժողովը:[97]

Այսպիսով, թեև Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթները բավարարում են Կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի պահանջներին [98], այնուամենայնիվ հավի առնելով, որ իրենց բնույթով մարդու իրավունքների տեսանկյունից ռիսկային են հանդիսանում նաև խնամք մատուցող հաստատությունները, հատուկ կրթական հաստատությունները, զինված ուժերի կառույցները, այդ թվում՝ զորամասերը և ստորաբաժանումները, պետական սահմանի անցման կետերը և տարանցիկ գոտիները (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիներին, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց պահելու վայրերը), ճիշտ կլիներ այնուամենայնիվ լրացնել նշված ցանկը:

Սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

[97] Տե՛ս http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT/OP/12/5&Lang=en

[98] Տե՛ս «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրության 4-րդ հոդված http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31421

5. Գործողություն՝ (117) Պաշտպանի կողմից սահմանված ժամկետների խախտման համար պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների հստակեցում
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Սույն գործողության գնահատումը ևս իրականացվել է հաշվի առնելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի իրավակարգավորումները:

Այսպես, Օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվությունը Պաշտպանի գործունեությանը խոչընդոտելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները սույն օրենքին համապատասխան սահմանված ժամկետներում չտրամադրելն առաջացնում է վարչական պատասխանատվություն:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

6. Գործողություն՝ (118) Պաշտպանի աշխատակազմում որևէ պաշտոն զբաղեցնող անձանց համար լրացուցիչ երաշխիքի նախատեսում, որի համաձայն վերջիններս չեն կարող հարցաքննվել Պաշտպանի հանձնարարականի համաձայն իրենց պարտականությունները կատարելիս, որևէ գործողության, կարծիքի կամ ընդունած որոշման համար
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության երաշխիքները: Այսպես, նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները կարող են

բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դրանք այլ անձանց տրամադրել ծանոթացման՝ միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

7. Գործողություն՝ (119) Հանրությանը հայտնի դեպքերի հանգամանքների վերաբերյալ Պաշտպանի կողմից իրականացվող ուսումնասիրությունների հրապարակման մատչելիություն
Ակնկալվող արդյունքը՝ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը Տեղեկատվության աղբյուր՝ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածը սահմանում է Պաշտպանի տարեկան հաղորդումն ու զեկույցները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ նաև արտահերթ հրապարակային զեկույցներով կամ հաղորդումներով, որոնք կարող են պարունակել ոչ միայն իրավունքների խախտման մասին դեպքեր և փաստեր, այլև մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Որպես ընդհանուր պահանջ, նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է հաղորդումների և զեկույցների հրապարակայնությունն ապահովելու Պաշտպանի պարտականությունը:

Ելնելով վերոգրյալից, սույն գործողությունը գնահատվում է ամբողջությամբ իրականացված:

Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործման ոլորտում ընդհանուր առմամբ նախատեսված էր իրականացնել յոթ գործողություն, որից չորս գործողություն գնահատվել է որպես ամբողջությամբ իրականացված, երկու գործողություն՝ չիրականացված և մեկ գործողություն գնահատվել է որպես կիսով չափ իրականացված:

Ամփոփում

Արձանագրվել են հետևյալ խնդիրները.

1. Ծրագրով սահմանված պարբերական բնույթ կրող գործողությունների ժամկետները պատասխանատու մարմինների կողմից չեն պահպանվել (թիվ 14-րդ, 22-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ, 32-րդ, 42-րդ, 43-րդ, 54-56-րդ, 60-րդ, 66-րդ, 75-րդ, 105-րդ գործողությունները)։
2. Մի շարք գործողությունների համար սահմանված է միայն համաձայնության պայմանով կատարող մարմին և սահմանված չէ համակարգող մարմին (թիվ 15-րդ, 25-րդ, 28-րդ, 114-119-րդ գործողությունները)։ Պարզ չէ, թե ինչ նպատակ է հետապնդում սահմանել մի գործողություն, որի իրականացման համար պատասխանատու մարմին, որպես հիմնական կատարող, սահմանված չէ և գործողության կատարումը կախվածության մեջ է միայն համաձայնության պայմանով հանդես եկող մարմնի կամարտահայտությունից։
3. Մի շարք գործողություններ և գործողությունների արդյունքներ հստակ ու չափելի չեն ձևակերպված, ինչը կարող է խնդիրներ առաջացնել գործողության իրականացման փուլում, ինչպես նաև դժվարեցնում է գործողության իրականացման գնահատումը (թիվ 22-րդ, 66-րդ, 75-րդ գործողությունները)։
4. Մարդու իրավունքների ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի համաձայն՝ պատասխանատու հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին է հանձնարարվել նաև յուրաքանչյուր կիսամյակ ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ, ՀՀ կառավարության աշխատակազմ և ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ։ Այս հաշվետվությունների վերաբերյալ ՀՀ պետական համապատասխան մարմինների կողմից՝ թե ՀՀ ԱԱԽ-ի, թե ՀՀ Կառավարության, թե ՀՀ ԱՆ կողմից որևէ տեղեկատվություն չի հրապարակվել։
5. Ծրագրով և ծրագրի կատարման արդյունքներով ներկայացված չէ գործողությունների կատարման համար նախատեսված և ծախսված ֆինանսական միջոցների մասին տեղեկատվություն։
6. Ծրագրով սահմանված չէ Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողության ապահովմանն ուղղված միջոցառումներ, բացակայում է ծրագրի մոնիթորինգի և գնահատման մեխանիզմը։

Առաջարկություններ

1. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում ներառված յուրաքանչյուր միջոցառում/գործողություն և դրա կատարման արդյունքը ձևակերպել հստակ և չափելի:
2. Գործողության/միջոցառման կատարման ընթացքի վերահսկման նպատակով յուրաքանչյուր գործողության/միջոցառման կատարման ընդհանուր ժամկետը տրոհել կատարման միջանկյալ ժամկետների:
3. Սահմանել յուրաքանչյուր միջոցառման/գործողության իրականացման համար անհրաժեշտ ֆինասական միջոցների ներգրավման ծավալը, ինչպես նաև նշել դրանց ներգրավման անհրաժեշտության բացակայության մասին:
4. Ներդնել ռազմավարական ծրագրի մոնիթորինգի և գնահատման համակարգ, որը կներառի փաստացի արդյունքներ և դրանց ազեցության չափման ցուցանիշներ: Իրականացել ռազմավարական ծրագրի ինչպես ընթացիկ, այնպես էլ վերջնական մոնիթորինգ:
5. Ապահովել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, որպես լիիրավ անդամների, պետական մարմինների հետ հավասար մասնակցությունը մոնիթորինգի և գնահատման գործընթացին:
6. Ապահովել Ծրագրի մոնիթորինգի և գնահատման արդյունքների հասանելիությունը և մատչելիությունը:

Հավելվածներ

Հավելված 1

Աղյուսակ1
Ծրագրով սահմանված գործողությունների փոփոխության քանակական պատկերը

Իրավական հիմքը	Փոփոխության բնույթը		
	Գործողության կատարման ժամկետի փոփոխություն	Գործողությունը հանվել է Ծրագրից/ ուժը կորցրած է ճանաչվել	Լրացվել/փոխարինվել է գործողության կատարման համար պատասխանատու մարմինը
ՀՀ կառավարության 2014 թ սեպտեմբերի 4 N 948-Ն որոշում	1(1[99])		
ՀՀ կառավարության 2015 թ. ապրիլի 9 N 371-Ն որոշում	1(84)		
ՀՀ կառավարության 2015 թ. նոյեմբերի12 N 1302-Ն որոշում	1 (26), 1 (28), 1(36), 1(45), 1(70), 1(81), 1(92), 1(97), 1(101), 1(114), 1(115), 1(115), 1(116), 1(117), 1(118), 1 (119)		1(28), 1(29), 1(36), 1(60), 1(81),
ՀՀ կառավարության 2016 թ. մայիսի 12 N 485-Ն որոշում	1(6), 1(33), 1(40), 1(66)		
ՀՀ կառավարության 2016 թ օգոստոսի 18 N 843-Ն որոշում		1(9)	
ՀՀ կառավարության 2016 թ. հոկտեմբերի 20 N 1071-Ն որոշում		1(97)	
ՀՀ կառավարության 2016 թ. դեկտեմբերի 29 N 1368-Ն որոշում		1(28)	

[99]Փակագծերում նշված են ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի գործողությունների համարները

Հավելված 2

Աղյուսակ 2

ՄԻՊԱՌՄԾ գործողությունների կատարման քանակական պատկերը՝ ըստ ոլորտների

ՄԻՊԱՌՄԾ ոլորտները	Կատարման աստիճանը						
	Ընդհանուր թվով	Ամբողջությամբ իրականացված	Մեծամասամբ իրականացված	Կիսով չափ իրականացված	Մեծամասամբ չիրականացված	Չիրականացված	Չի բխում ՄԻՊԱՌՄԾ-ից
I. Առողջության պահպանման և կյանքի իրավունք	6	1	0	3	1	0	1
II. Մտքի, խղճի, կրոնի և դավանանքի ազատության իրավունք, խտրականության դեմ պայքար	4/3[100]	0	1	1	0	2	0
III.Կրթության իրավունք	4	0	0	0	2	1	1
IV.Սոցիալական ապահովության, բավարար կենսամակարդակի և աշխատանքի իրավունք	8	4	0	1	0	1	2
V.Անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք	1	1	0	0	0	0	0
VI.Ազատ ու արդար ընտրությունների իրավունք	1	0	0	0	0	1	0
VII.Ազատ արտահայտման, հավաքների և միավորումների ազատության իրավունք	8/7[101]	1	1	0	4	2	0
VIII.Խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ	13	6	0	1	2	4	

[100] ՀՀ կառավարության 2016 թ. օգոստոսի 18-ի 843-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 9-րդ կետը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107890

[101] ՀՀ կառավարության 2016 թ. դեկտեմբերի 29-ի 1368-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=110570

պատժի չենթարկվելու իրավունք							0
IX.Երեխայի իրավունքներ	15	3	0	7	3	2	0
X.Տարեց մարդկանց իրավունքներ	4	1	0	2	0	1	0
XI.Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ	13	3	2	3	2	2	1
XII.Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք	2	0	0	0	0	1	1
XIII.Փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքներ	11	8	0	0	2	0	1
XIV.Մշակութային իրավունքներ	5	1	0	1	1	2	0
XV.Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք	5/4[102]	3	0	0	0	2	0
XVI.Տնտեսական իրավունքներ, սեփականության իրավունք	4	3	0	0	1	0	0
XVII.Արդար դատաքննության իրավունք	3	2	0	0	1	0	0
XVIII.Զինծառայողների և զորակոչիկների իրավունքներ	4	1	1	0	0	2	0
XIX.Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք	1	1	0	0	0	0	0
XX.Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում	7	4	1	0	0	2	0
Ընդհանուր	**119**	**43**	**6**	**19**	**18**	**26**	**7**

[102] ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 20-ի 1071-Ն որոշմամբ՝ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման հավելվածի 97-րդ կետը:
http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=108960

Հավելված 3

Աղյուսակ 3

ՄԻՊԱՌՄԾ գործողությունների կատարման պատկերը ըստ կատարող մարմինների

Պատասխանատու մարմինը	Կատարման աստիճանը						
	Ամբողջությամբ իրականացված	Մեծամասամբ իրականացված	Կիսով չափ իրականացված	Մեծամասամբ չիրականացված	Չիրականացված	Կատարումը չի բխում ՄԻՊԱՌՄԾ-ից	Ընդհանուր թվով
ՀՀ կառավարություն							1 (32)
ՀՀ ԱՆ	13	1	5	3	6	1	28
ՀՀ ՏԿԶՆ	1	1	2	3	1	0	8
ՀՀ ՏԿԶՆ միգ. պետ. ծառ.	4	0	0	0	0	1	5
ՀՀ ԱԳՆ	1	0	0	3	0	0	4
ՀՀ ՖՆ	0	1	0	1	0	0	2
ՀՀ ՏԶՆՆ	0	0	2	0	0	0	1
ՀՀ ԲՆ	3	0	0	0	2	0	5(4[103])
ՀՀ ԱՌՆ	5	0	4	1	2	2	14
ՀՀ ՊՆ	3	1	0	2	3	0	9
ՀՀ ԿԳՆ	2	3	3	3	5	1	17(16[104])
ՀՀ ԱՍՀՆ	13	1	11	7	8	3	43
ՀՀ ՄՆ	1	0	1	1	2	0	5
ՀՀ ԱԻՆ	1	1	3	3	1	0	9
ՀՀ ԱԱԾ	1	0	3	1	0	0	7
ԿԱ ոստիկ.	8	0	7	5	1	1	22
ԿԱ կադաստրի պետ. ՊԿ	1	0	0	0	0	0	1
ԿԱ քաղաքաշին. ՊԿ	1	1	2	0	0	0	4
Երևանի քաղ.	1	1	0	0	1	0	3
ՀՀ ՏԻՄ-եր	0	0	1	0	0	0	1
ՀՀ ՄԻՊ	4	2	1	1	2	0	10
ՀՀ դատական դեպ.	1	0	0	0	0	0	1
ՀՀ քննչ. կոմիտե	1	0	1	0	0	0	2
ՀՀ գլխ. դատախազություն	1	0	0	0	0	0	
ՀՀ ԿԲ	0	0	0	1	0	0	1

[103] Ծրագրի թիվ 97-րդ գործողությունն ուժը կորցրած է ճանաչվել

[104] Ծրագրի թիվ 9-րդ գործողությունն ուժը կորցրած է ճանաչվել

ՀՀ ՓԴ	0	0	0	3	0	0	3
ՀՀ ԱԱ	0	0	1	3	0	0	4
ՀՀ ԿԸՀՀ	1	0	0	0	1	0	1
ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով	0	0	0	0	2	0	**2(1[105])**

[105] Ծրագրի թիվ 28-րդ գործողությունն ուժը կորցրած է ճանաչվել

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի վերաբերյալ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը /այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ/ ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»

հասցե՝ ՀՀ, Վանաձոր 2001, Տիգրան Մեծի 59

հեռ.՝ (+374 322) 4 22 68 ֆաքս՝ (+374 322) 4 12 36

կայքէջ՝ www.hcav.am

էլ. փոստ. hcav@hcav.am